

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՌՍՏԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ. 00. 05 – Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

գիտական ղեկավար իրավ. գիտ. դոկտոր,
դոցենտ Ա. Գաբուզյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3-9
Գլուխ 1. Հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում	10-51
§1. Հանցավորության մակարդակը, կառուցվածքը, շարժընթացը	10-33
§2. Հանցանք կատարող անձինք	34-51
Գլուխ 2. Հանցավորության պատճառական համալիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում	52-75
§1. Հանցավորության պատճառների հիմնախնդիրը	52-57
§2. Հանցավորության սոցիալ-տնտեսական պատճառական համալիրը	58-64
§3. Հանցավորության իրավական պատճառական համալիրը	65-71
§4. Հանցավորության բարոյահոգեբանական պատճառական համալիրը	71-75
Գլուխ 3. Հանցավորության նկատմամբ վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում	76-105
§1. Հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակը	76-97
§2. Հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ	98-105
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	106-113
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	114-120

ԱՌԱՋԱԲԱՆ

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը

80-ական թվականների վերջերից ԼՂՀ հայ ազգաբնակչությունը դուրս եկավ ազգային-ազատագրական պայքարի, որին սատարեց մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության ժողովուրդը: Պատերազմական վիճակը, մարտական գործողությունները, շրջափակումը, տնտեսության քայքայումը հիրավի ծանր կացության մեջ դրեցին նորանկախ պետությունը: 90-ական թվականների կեսերից սկիզբ առած հարաբերական անդորրի և զինադադարի պայմաններում ԼՂՀ ժողովուրդը և իշխանությունները ձեռնամուխ եղան պետականության կայացման, տնտեսության վերականգնման, շուկայական տնտեսության ձևավորման դժվարին գործընթացին: Հանրապետության ժողովրդի առջև ծառայած այս բարդ խնդիրների լուծումը պահանջում է ուժերի գերլարում, գործողությունների նպատակասլացություն: Բացի դա, նշված խնդիրների հաջող լուծման շատ կարևոր նախապայմաններից է քաղաքական, սոցիալական, իրավական կայունությունը: Հանցավորությունը, որպես ապակայունացնող գործոն, կարող է էապես խոչընդոտել հանրապետության առջև ծառայած բազմաթիվ կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Դրա համար էլ հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման հիմնախնդիրը ԼՂՀ պայմաններում էլ ավելի հրատապ նշանակություն է ձեռք բերում: Պետք է նշել, որ 1992թ.-ից հանցավորությունը ԼՂՀ-ում աճի միտում է դրսևորում (չնայած պաշտոնական վիճակագրությունը վերջին տարիներին կայուն նվազման միտում է արձանագրում, այնուամենայնիվ կարծում ենք, որ դա հանցավորության լատենտայնացման արդյունք է): Ընդ որում, ԼՂՀ-ում արձանագրվում են հանցավորության բավականաչափ բարձր գործակիցներ: Հանցավորության նման վիճակը և զարգացման միտումները անհրաժեշտություն են առաջացնում վերլուծության ենթարկելու ԼՂՀ-ում հանցավորության հետագա զարգացման միտումները, բացահայտելու դրա պատճառները և մշակելու հանցավորության նկատմամբ վերահսկողության հնարավորինս արդյունավետ միջոցառումներ: Մինչդեռ մինչև այժմ

ԼՂՀ հանցավորության և դրա զարգացման միտումների վերաբերյալ ոչ մի հետազոտություն կատարված չէ:

Վերոգրյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները

Սույն ուսումնասիրության հիմնական նպատակը ԼՂՀ հանցավորության զարգացման հիմնական միտումների և դրա պատճառների բացահայտումն է: Դրա հիման վրա առաջադրվում է ուսումնասիրության գործնական նպատակը՝ ԼՂՀ հանցավորության ապագա վիճակի կանխատեսումը և հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Այս նպատակներին հետամուտ՝ փորձ է արվել լուծել հետևյալ խնդիրները.

– բացահայտել ԼՂՀ հանցավորության վիճակի, կառուցվածքի և շարժընթացի առանձնահատկությունները,

– բացահայտել ԼՂՀ հանցավորության զարգացման միտումները, դրա պատճառները,

– կատարված ուսումնասիրությունների հիման վրա իրականացնել ԼՂՀ հանցավորության ապագա հավանական վիճակի կանխատեսում,

– բացահայտել ԼՂՀ-ում հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակը և առաջարկություններ մշակել այն կատարելագործելու ուղղությամբ:

Ուսումնասիրության մեթոդոլոգիական, տեսական և փորձառական հիմքը

Ուսումնասիրության մեթոդոլոգիական հիմքն են կազմել ճանաչողության ընդհանուր-գիտական մեթոդները՝ անալիզ և սինթեզ, դեդուկցիա, ինդուկցիա, ինչպես նաև մասնավոր-գիտական մեթոդները՝ երևույթների քանակական ու որակական վերլուծություն, դասակարգում, համեմատական կրիմինալոգիա: Ընդ որում, հեղինակը ղեկավարվել է առարկայի հատկանիշները դիսամիկ զարգացման մեջ ուսումնասիրելու սկզբունքով:

Ուսումնասիրության հիմքում ընկած են գիտական աշխատություններ հոգեբանությունից, կրիմինալոգիայից, սոցիոլոգիայից, մանկավարժությունից: Ուսումնասիրության փորձառական մասում կիրառվել են սոցիոլոգիական, վիճակագրական, տրամաբանական, համեմատական-կրիմինալոգիական մեթոդները:

Ուսումնասիրության փորձառական հիմքն են կազմել ԼՂՀ և այլ երկրների հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները, 250 օրինապահ քաղաքացիների և դատապարտված 50 անձանց հարցման արդյունքները: Օգտագործվել են նաև այլ հետազոտողների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթը

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ ԼՂՀ պատմության մեջ առաջին անգամ մենագիր հետազոտության մակարդակով փորձ է արվում բացահայտել ԼՂՀ հանցավորության զարգացման միտումները, հանցավորության պատճառական համալիրը, հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակը և առաջարկություններ մշակել հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործման ուղղությամբ:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև ***պաշտպանության ներկայացվող դրույթներում***, որոնք հանգում են հետևյալին.

1. Հանցավորությունը ԼՂՀ-ում դրսևորում է շուկայական տնտեսության ձևավորման ուղին բռնած երկրների մեծ մասին բնորոշ օրինաչափություններ՝ բացարձակ և հարաբերական աճ, լատենտայնացում, հանցավորության կառուցվածքում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների մասնաբաժնի ավելացում և բռնության մոտիվացիայով հանցագործությունների մասնաբաժնի նվազում:

Չնայած հանցավորության զարգացման բացասական միտումներին, ԼՂՀ-ում, շատ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համեմատ, վիճակը ավելի բարենպաստ է: Դա կարելի է բացատրել նրանով, որ ԼՂՀ-ն շուկայական տնտեսության զարգացման, բարքերի ազատականացման տեմպերով հետ է մնում այլ երկրներից և ՀՀ-ից, բացի դա, պատերազմ տեսած և անընդհատ նոր պատերազմի սպասող ժողովրդի մեջ ամեն դեպքում դեռևս համեմատաբար ուժեղ են կոլեկտիվիստական զգացումները և օրենքին ենթարկվելու անհրաժեշտության գիտակցումը:

2. Չնայած ԼՂՀ-ում առկա են գործոններ, որոնք զսպում են հանցավորության բուռն զարգացումը և նպաստում են հանցավորության համեմատաբար ցածր մակարդակի պահպանմանը, այնուամենայնիվ, հանրապետությունում ընթացող երևույթները թույլ չեն տալիս լավատեսական կանխատեսումներ անել: Շուկայական տնտեսության հետագա զարգացման հետ կապված գերշահույթի մոտիվացիայի և սպառողական հոգեբանության ձևավորումը, գործազրկությունը, բարքերի հետագա ազատականացումը, սոցիալական բեկեռացումը այն գործոններն են, որոնք կարող են նպաստել հանցավորության հետագա զարգացմանը: Բացի նշվածից, ԼՂՀ հանցավորության զարգացման վրա կարող են ազդել նաև բնակչության տագնապայնության բարձր մակարդակը, ժողովրդին հատուկ որոշակի անհանդուրժողականությունը, համառությունը:

3. ԼՂՀ հանցավորության զարգացման անբարենպաստ միտումներից է անչափահասների և երիտասարդների հանցավորության աճի բարձր տեմպը, հանցավորության կառուցվածքում նրանց հանցավորության մասնաբաժնի ավելացումը: Այլ կերպ ասած, հանցավորությունը ԼՂՀ-ում երիտասարդացման միտում ունի, ինչը կարող է բացասական ազդեցություն թողնել հանցավորության հետագա վիճակի վրա:

4. ԼՂՀ շրջանների հանցավորության տարբերությունները մեծ չափով կախված են այդ շրջաններում հանցավորության լատենտայնության մակարդակից:

ԼՂՀ շրջանների հանցավորության լատենտայնության մակարդակի տարբերությունները կախված են ինչպես իրավապահ մարմինների գործունեության առանձնահատկություններից, հանցագործությունների գրանցման լրիվության մակարդակից, այնպես էլ հանցավորության կառուցվածքից. այն շրջաններում որոնցում հանցավորության մեջ զգալի է բռնության հետ չզուգորդված շահադիտական հանցագործությունների տեսակարար կշիռը, ավելի բարձր է նաև հանցավորության լատենտայնության մակարդակը, ուստի այդ շրջանների հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները չեն արտացոլում օբյեկտիվ իրականությունը, մինչդեռ բռնության հետ զուգորդված հանցավորության ավելի բարձր մակարդակ ունեցող շրջանների հանցավորության

մակարդակը պաշտոնական վիճակագրությամբ համեմատաբար օբյեկտիվ է արտացոլվում:

5. ԼՂՀ այն շրջաններում, որոնցում տնտեսական կյանքն ավելի աշխույժ է, որոնցում տնտեսական զարգացման տեմպերն ավելի բարձր են համեմատաբար ավելի բարձր է նաև բռնության հետ չզուգորդված շահադիտական հանցավորության մակարդակը, ինչը պաշտոնական վիճակագրության մեջ չի արտացոլվում, ինչն իր հերթին այդ հանցագործությունների լատենտայնության ավելի բարձր մակարդակի արդյունք է: Այն շրջանները, որոնք դուրս են մնացել բարեփոխումների ոլորտից, կամ որոնցում բարեփոխումները ինտենսիվ չեն, աչքի են ընկնում բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների ավելի բարձր մակարդակով:

6. Կրիմինոլոգիական կանխման կարևոր ուղղություններից մեկը զենքի ապօրինի շրջանառության նկատմամբ վերահսկողության իրականացումն է: Հատկապես ԼՂՀ համար, կապված պատերազմական վիճակի հետ, սա առավել քան արդիական խնդիր է: Պաշտոնական վիճակագրության տվյալները ցույց են տալիս, որ վերջին տարիներին զենքի գործադրմամբ հանցագործությունների դեպքերը չնչին տոկոս են կազմում: Վերջին տարիներին նկատվում է նաև զենքի ապօրինի պատրաստման և կրման դեպքերի նվազում: Այս տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Պատերազմական իրավիճակի հետ կապված, ԼՂՀ բնակչության գերակշիռ մասը զենքի և զինամթերքի բավականաչափ մեծ պաշարներ ունի կուտակած: Ընդ որում, շատ դեպքերում դրա վրա «աչք են փակում», ինչը որոշակի առումով հասկանալի է, սակայն կարող է ապագայում բացասական ազդեցություն թողնել հանցավորության կառուցվաքծի վրա:

7. Հանցավորության նկատմամբ վերահսկողությունը կատարելագործելու նպատակով ԼՂՀ-ում, բացի ավանդական միջոցառումներից անհրաժեշտ են ԼՂՀ իրավիճակի առանձնահատկություններից բխող հետևյալ միջոցառումները.

ա) Հաշվի առնելով ԼՂՀ բնակչության տագնապայնության բարձր մակարդակը հանրապետությունում կազմակերպել ու զարգացնել բնակչությանը հոգեբանական օգնություն ցույց տվող ծառայությունների համակարգը.

բ) Կարևոր նշանակություն կարող է ունենալ օրինաստեղծ աշխատանքի, հատկապես արարքների քրեականացման և ապաքրեականացման գործընթացի գիտական հիմնավորվածությունն ու սոցիալական պայմանավորվածությունը: Դրա համար անհրաժեշտ է կտրուկ բարելավել իրավագիտության դասավանդման որակը ԼՂՀ բուհերում: Արդյունավետ կարող էր լինել օրինաստեղծ աշխատանքների բարելավման նպատակով հատուկ փորձագիտական խմբի ստեղծումը ԼՂՀ Ազգային ժողովում:

գ) Պատժի արդյունավետությունը բարձրացնելու համար կարելի է օրենսդրական մակարդակով սահմանափակել ազատազրկում պատժատեսակի կիրառման ոլորտը: Մասնավորապես, այդ պատժատեսակը նախատեսել միայն բռնության հետ զուգորդված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար և շահադիտական կամ այլ դրդապատճառներով կատարվող ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների համար:

դ) Ոստիկանության աշխատանքի բարելավման կարևոր գործոն կարող է հանդիսանալ հանցագործությունների հնարավորինս լրիվ գրանցումը, հանցավորության և դրա առանձին տեսակների վերաբերյալ օբյեկտիվ և ճշմարտացի տեղեկատվության առկայությունը: Այս նպատակով առաջարկվում է ԼՂՀ-ում ստեղծել հանցագործությունների և այլ իրավախախտումների գրանցման անկախ ծառայություն:

ե) Հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ԼՂՀ տարածաշրջանային հանցավորության առանձնահատկությունները և տարբերակված միջոցառումներ իրականացնել՝ կախված տվյալ տարածաշրջանի հանցավորության կառուցվածքի առանձնահատկություններից:

զ) Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխման արմատավորման համար առաջարկվում է ԼՂՀ իրավապահ մարմինների աշխատակիցների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ վիկտիմոլոգիական գրագիտություն ձևավորելու նպատակով, ինչպես նաև վիկտիմոլոգիական

տեղեկատվությունը և գիտելիքները տարածել բնակչության մեջ՝ համապատասխան հրապարակումների, ՁԼՄ-ների միջոցով:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը

Ուսումնասիրության տեսական նշանակությունը այն է, որ առաջին անգամ ՀՀ և ԼՂՀ պատմության մեջ ուսումնասիրվում է ԼՂՀ հանցավորությունը և բացահայտվում են դրա զարգացման օրինաչափությունները, միտումները:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ դրանում ձևակերպված տեսական դրույթները, բացահայտված օրինաչափություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել իրավապահ մարմինների, ինչպես նաև պետության և ողջ հասարակության կողմից հանցավորության նկատմամբ վերահսկողությանն ուղղված միջոցառումները մշակելիս: Բացի դա, ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել կրիմինալոգիա առարկայի դասավանդման ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը

Աշխատանքը քննարկվել և գրախոսվել է ԵՊՀ-ի քրեական իրավունքի ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, վեց պարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 113 էջ:

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈՒԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§1. Հանցավորության մակարդակը, կառուցվածքը, շարժընթացը

1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի և 20-ական թվականներին հայկական այդ մարզից բռնապոկված պատմական Արցախի բաղկացուցիչ մասը կազմող Շահումյանի շրջանի ժողովրդական պատգամավորների համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը: Այնուհետև՝ 1991թ. դեկտեմբերի 10-ին, Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի արդյունքներով, արցախահայությունը մեկ անգամ ևս հաստատեց անկախության իր ձգտումը: Այդ օրը (չնայած պատերազմական ծանր վիճակին) ԼՂՀ-ի բնակչության ծայնի իրավունք ունեցողների 80%-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99%-ից ավելին քվեարկեց անկախության օգտին: Այսպիսով՝ աշխարհի քաղաքական քարտեզի վրա առաջացավ հայկական երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Սկսվեց անկախ պետականության կայացման գործընթացը:

Պետք է նշել, որ արևելյան եվրոպայի և ԱՊՀ անդամ պետությունների համեմատ ԼՂՀ պետականության կայացման գործընթացը ավելի բարդ ու հակասական բնույթ ունի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ պլանային, վարչահրամայական տնտեսությունից շուկայականին, տոտալիտար ռեժիմից ժողովրդավարականին անցման ժամանակաշրջանը այստեղ զուգակցվում է անկախության համար մղվող պայքարով, պատերազմական վիճակով, շրջափակմամբ:

Անցումային ժամանակաշրջանը բոլոր պետություններում էլ զուգակցվում է քաղաքական, սոցիալական, տնտեսական ցնցումներով, ինչը հանգեցնում է բազմաթիվ բացասական երևույթների, այդ թվում՝ հանցավորության աննախադեպ աճի: 80-ական թվականների վերջերից և 90-ական թվականների սկզբերից հանցավորության աննախադեպ աճ է նկատվում արևելյան եվրոպայի և նախկին ԽՍՀ

Միության բոլոր պետություններում: Այսպես, Լեհաստանում հանցավորության գործակիցը 1990թ.-ին 1970թ. համեմատ աճեց մոտ երկու անգամ, Էստոնիայում 1994թ.-ին 1985թ. համեմատ՝ մոտ երեք անգամ, Լատվիայում՝ երկու անգամ, Ռուսաստանում՝ երկու անգամ, Հունգարիայում՝ մոտ երեք անգամ, Հայաստանում՝ երկու անգամից ավելի¹:

Ակնհայտ է, որ ԼՂՀ-ն չէր կարող բացառություն հանդիսանալ, մանավանդ, որ անցումային ժամանակաշրջանին բնորոշ գործընթացները այստեղ, ինչպես արդեն նշել ենք, զուգակցվում էին պատերազմական գործողություններով, անկախության համար մղվող պայքարով: Միևնույն ժամանակ, պատերազմական վիճակը, քաղաքական անկայունությունը, մեր կարծիքով, երկակի ազդեցություն են թողնում պաշտոնապես գրանցված հանցավորության մակարդակի վրա: Ցավոք մենք տվյալներ չունենք մինչև անկախության գործընթացը ԼՂՀ-ում հանցավորության պաշտոնապես գրանցված մակարդակի վերաբերյալ, սակայն 1991թ. մինչև 1993թ. տվյալները ակնհայտորեն ցույց են տալիս ԼՂՀ-ում հանցավորության շարժընթացի առանձնահատկությունը: Այսպես, 1991թ., ըստ պաշտոնական վիճակագրության, ԼՂՀ-ում կատարվել է 611 հանցագործություն, 1992թ.՝ 333, 1993թ.՝ 482: Եթե այս տվյալները համեմատենք ԱՊՀ անդամ պետություններում պաշտոնապես գրանցված հանցավորության տվյալների հետ, ապա պարզ կդառնա, որ ԼՂՀ-ում հանցավորության շարժընթացը այդ տարիներին, ի տարբերություն նշված պետությունների, դրական է եղել: Փաստորեն, 1992թ.-ին 1991թ. համեմատ հանցավորությունը նվազել է մոտ երկու անգամ, իսկ 1993թ. սկսել է աճել: Մինչդեռ ԱՊՀ անդամ պետությունների մեծ մասում 1992թ. գրանցվել է հանցավորության ամենաբարձր մակարդակը: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում 1992թ.-ին 1991թ. համեմատ հանցավորությունն աճել է 21,4%-ով, Ուկրաինայում՝ 16%-ով, Հայաստանի Հանրապետությունում՝ 19,2%-ով: Ընդ որում, 1993թ. ԱՊՀ անդամ պետությունների մեծ մասում նկատվել է հանցավորության մակարդակի նվազում²:

¹St'u Хельмут Кури Развитие преступности, санкции и позиция населения. Восток и Запад. //Уголовное право и преступность: развитие в Средней и Восточной Европе. Бохум, 2004, т2 8-9:

² St'u Лунеев В.В. Преступность XX века. М., 1999, т2 92-125:

ԼՂՀ հանցավորության շարժընթացի նման առանձնահատկությունը, մեր կարծիքով, պայմանավորված է հանցավորության մակարդակի վրա պատերազմական վիճակի՝ արդեն նշված երկակի ազդեցությամբ: Մի կողմից իր անկախության համար պայքար մղող ժողովուրդը միավորվում է վեհ գաղափարի շուրջ, ինչը հակակրիմինոզեն նշանակություն ունի, իսկ մյուս կողմից՝ պատերազմական վիճակը հարկադրում է բոլոր, այդ թվում՝ իրավապահ մարմինների ուժերը, ուղղել այդ նպատակի իրագործմանը, մարտական գործողություններում և վերջին հաշվով ողջ պատերազմում հաղթելուն: Բնականաբար նման պայմաններում իրավապահ մարմինները չեն կարողանում հավուր պատշաճի կատարել հանցագործությունների դեմ պայքարի, դրանց բացահայտման՝ իրենց վրա դրված պարտականությունները: Արդյունքում՝ հանցավորության մեջ մեծանում է լատենտային զանգվածը: Մենք հակված ենք կարծելու, որ 1992թ.-ին 1991թ. համեմատ գրանցված հանցավորության մոտ երկու անգամ նվազումը պայմանավորված է վերը նշված երկու հանգամանքներով՝ իրական նվազում և լատենտայնացում:

1994թ. կնքվեց ռազմական գործողությունները դադարեցնելու և ժամանակավոր խաղաղության պայմանագիրը: Դրա նախադրյալները ստեղծվել էին արդեն 1993թ.: Պատերազմական գործողությունների դադարեցման և հարաբերական կայունության պայմաններում, երբ իրավապահ մարմինները ավելի մեծ հնարավորություն ստացան զբաղվելու իրենց ուղղակի պարտականությունների կատարմամբ, պաշտոնապես գրանցված հանցավորության մակարդակն սկսեց աճել: Այսպես, 1993թ. արդեն գրանցվեց 30% ավելի հանցագործություն քան 1992թ., իսկ 1994թ.՝ 4,1% ավելի, քան 1993թ.: Դրանից հետո հանցավորությունը Լեռնային Ղարաբաղի շանրապետությունում զարգանում է զիզզազաձև: Այսպես, 1995 և 1996թ.թ. հանցավորության մակարդակը նվազում է, իսկ 1997թ. աճում, 1998թ. նորից նվազում է, իսկ 2000 և 2001թթ. աճում: Այնուհետև երեք տարի շարունակ՝ 2002, 2003 և 2004թթ. նկատվում է կայուն նվազման միտում: Չանցավորության պաշտոնապես գրանցված մակարդակի նման շարժընթացը հավատ չի ներշնչում: Կարծում ենք, որ սա պայմանավորված է առանձին տարիներին հանցավորության մեջ լատենտային

զանգվածի ավելացմամբ կամ նվազմամբ: Եթե վերլուծենք նշված ժամանակահատվածում հանցագործությունների առանձին տեսակների շարժընթացը, ապա կարող ենք որոշակի օրինաչափություն հավաստել կամ որոշակի ենթադրություններ անել լատենտայնացման կապակցությամբ: Այսպես, հայտնի է, որ չնայած որոշակի, իսկ շատ կրիմինոլոգների կարծիքով նույնիսկ բավականաչափ բարձր լատենտայնությանը³, այնուամենայնիվ սպանությունները պակաս լատենտային են, քան հափշտակությունները, մանավանդ պետական սեփականության հափշտակությունները: Կամ, խուլիգանությունները ավելի լատենտային են, քան առողջությանը ծանր վնաս պատճառելը և սպանությունները: Ենթադրվում է, որ առավել նվազ լատենտայնությամբ օժտված հանցագործությունների և լատենտայնության առավել բարձր մակարդակ ունեցող հանցագործությունների շարժընթացի համեմատական վերլուծությունը կարող է որոշակի պատկերացում տալ ընդհանուր հանցավորության մեջ լատենտայնության մակարդակի բարձրացման մասին: Օրինակ, որոշ քրեագետներ վերլուծելով հանցավորության շարժընթացը առանց գողությունների մակարդակի վերաբերյալ տվյալները հաշվի առնելու, բացահայտել են հանցավորության մեջ լատենտայնության մակարդակի բարձրացման հանգամանքը⁴: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, ապա նշված մեթոդի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել, որ ԼՂՀ-ում սպանությունները, մեր կարծիքով, էլ ավելի բարձր լատենտայնություն ունեն: Բանն այն է, որ, մանավանդ սահմանամերձ շրջաններում, կամ բանակում կատարված սպանությունները շատ հաճախ են լատենտային մնում, որովհետև մեծ հնարավորություններ կան դրանք վերագրելու դժբախտ դեպքերին կամ թշնամու կողմից ոչ հազվադեպ իրականացվող սադրիչ գործողություններին: Բացի այդ, ԼՂՀ տարածքի գերակշիռ մասը կազմում են գյուղական բնակավայրերը (չնայած գյուղական բնակչությունը իր թվաքանակով զիջում է քաղաքային բնակչությանը), որտեղ հանցավորության լատենտայնությունը

³ Տե՛ս Хельмут Кури, նշված աշխ. էջ 19-20:

⁴ Տե՛ս Габузян А.А. Тенденции преступности в РА в переходный период. //Вопросы правоведения. Ереван, 2002 N4, էջ 12-23, Гаврилов Б.Я. Способна ли Российская статистика о преступности стсть реальной // Государство и право. 2001, N1, էջ 47-62:

ավելի բարձր մակարդակ ունի, կապված գյուղական բնակչության հոգեբանական որոշակի առանձնահատկությունների հետ (խնդիրները լուծել սեփական ուժերով, առանց իշխանությունների միջամտության, վեճը դուրս չհանել «տնից» և այլն): Դրա համար էլ ԼՂՀ հանցավորության շարժընթացի և հանցագործությունների առանձին տեսակների շարժընթացի միջև որոշակի հարաբերակցական կապ հնարավոր է նկատել վերոգրյալը հաշվի առնելով: Այսպես, ինչպես արդեն նշել ենք 2002թ. մինչև 2004թ. ներառյալ ԼՂՀ-ում հանցավորությունը կայուն նվազման միտում է դրսևորում: Այդ նույն ժամանակահատվածում նկատվում է պաշտոնապես գրանցված սպանությունների, պետական սեփականության հափշտակությունների, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների նվազում: Մինևույն ժամանակ 2003 և 2004թթ. արձանագրվել է առողջությանը վնաս պատճառելու դեպքերի, անձնական սեփականության հափշտակությունների, հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունների աճ, իսկ 2002թ.-ից մինչև 2004թ. ներառյալ՝ խուլիգանությունների, թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների աճ: Եթե ընդունենք, որ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները և պետական սեփականության հափշտակությունները ավելի բարձր լատենտայնություն ունեն քան առողջությանը ծանր վնաս պատճառելը, անձնական սեփականության հափշտակությունները, հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունները, ապա կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին ԼՂՀ-ում գրանցվող հանցավորության մակարդակի նվազումը հանցավորության մեջ լատենտայնության մակարդակի բարձրացման արդյունք է: Ասվածի առավել վառ ապացույցն է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների նվազումը: 2004թ.-ին 1991թ. համեմատ դրանք պակասել են մոտ 14 անգամ, ինչը, հաշվի առնելով ԼՂՀ-ում ընթացող տնտեսական գործընթացները, ուղղակի անհնար է: Բանն այն է, որ 90-ական թվականների սկզբներին ԼՂՀ տնտեսությունն ուղղակի քայքայված էր և տնտեսական գործունեությունն փաստորեն չէր իրականացվում: Նման պայմաններում դժվար է պատկերացնել տնտեսական հանցագործությունների զգալիորեն ավելի բարձր մակարդակ քան գրանցվել է պաշտոնական վիճակագրության կողմից 2004թ.-ին, երբ

ԼՂՀ-ում տնտեսական վիճակը արդեն քիչ թե շատ կայունացել էր, իսկ տնտեսական գործունեությունն ակտիվացել:

Սակայն, եթե նույնիսկ պաշտոնական վիճակագրությունը արտացոլում է ԼՂՀ-ում հանցավորության շարժընթացի իրական միտումները, միևնույն է փաստն այն է, որ 2004թ.-ին 1992թ. համեմատ այն աճել է մոտ երկու անգամ: Բացի այդ, հանցավորության իրական մակարդակը գնահատելու համար անչափ կարևոր է հանցավորության շարժընթացի ուսումնասիրությունը ըստ հանցավորության գործակիցների: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1989թ. ԼՂՀ-ում բնակվել է 189 հազար մարդ, իսկ 2003թ. 145 հազար: Պատերազմի և ծանր տնտեսական ու սոցիալական պայմանների պատճառով ԼՂՀ բնակչությունը 23,2%-ով պակասել է: Հանցավորության գործակիցները հաշվարկելիս մինչև 1993թ. մենք վերցրել ենք 1989թ.տվյալները, իսկ այնուհետև՝ 2000թ.-ից՝ պաշտոնական վիճակագրության տվյալները: Ըստ այդմ հանցավորության շարժընթացը գործակիցներով ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 1

ԼՂՀ հանցավորության շարժընթացը գործակիցներով (100 հազար բնակչի հաշվարկով)⁵

տարիներ	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
գործակիցներ՝ 100 հազ. բնակչի հաշվով	176,2	255	355,5	323,6	269,2	301,8	266,4	348,4	365,4	504,5	460,6	415,8	356	370

Ինչպես տեսնում ենք 1994թ.-ից ԼՂՀ-ում գրանցվում են հանցավորության բավականաչափ բարձր գործակիցներ: Եթե համեմատելու լինենք այդ գործակիցները ՀՀ և դրա տարբեր մարզերի գործակիցների հետ, ապա համեմատությունը կլինի ոչ ԼՂՀ օգտին: Այսպես, 1991թ.-ից մինչև 2004թ. ՀՀ-ում հանցավորության ամենաբարձր գործակիցները գրանցվել են Երևանում՝ 2001-ից 2004թթ.՝ 452,7, Տաուշի մարզում՝ 1993-ից 1996թթ.՝ 410,1, Լոռիում՝ 1993-ից 1996թթ.՝ 390,8 և Սյունիքում՝ 1997-ից

⁵ 2006թ. հանցավորության մակարդակը փոքր ինչ իջնելուց հետո 2007թ. նորից հասել է 370 գործակից:

2000թթ.⁶ 330,8⁶: Ինչպես տեսնում ենք ԼՂՀ հանցավորության ամենաբարձր գործակիցները գերազանցում են ՀՀ-ում գրանցված ամենաբարձր գործակիցները:

ԼՂՀ-ում հանցավորության ավելի բարձր գործակիցները կարող են պայմանավորված լինել ինչպես հանցավորության գրանցման առանձնահատկություններով, այնպես էլ հանցավորության իրական վիճակով: Հակված ենք կարծելու, որ ԼՂՀ-ում հանցավորությունն առավել ամբողջական է գրանցվում և ավելի օբյեկտիվ է արտացոլում իրական վիճակը, քան ՀՀ-ում: Այսպիսի եզրահանգման համար բավարար հիմքեր կան: Մասնավորապես, հնարավոր չէ պատկերացնել, որ ԼՂՀ-ում հանցավորությունն ավելի բարձր մակարդակ ունի քան Երևանում, որտեղ սոցիալ-տնտեսական հակասություններն ավելի խորն են, բնակչության սոցիալական բևեռացումը առավել ցայտուն է դրսևորված, գործազրկությունը առավել խոցելի է անձի համար՝ կապված քաղաքային ապրելակերպի առանձնահատկությունների հետ, իսկ հանցավորության լատենտայնությունը, կապված բնակչության խիստ բարձր խտության և կյանքի անոնիմության հետ, ավելի բարձ մակարդակ ունի:

Ուշադրության արժանի ևս մեկ հանգամանք, որն աչքի է զարնում ԼՂՀ և ՀՀ առանձին մարզերի հանցավորության մակարդակների համեմատական վերլուծությունից: ԼՂՀ հանցավորության մակարդակն ու շարժընթացը շատ նման են ՀՀ այնպիսի մարզերի հանցավորության մակարդակին ու շարժընթացին, ինչպիսիք են Տաուշի և Սյունիքի մարզերը: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ ԼՂՀ և ՀՀ նշված մարզերում առկա են հանցավորության վրա ազդող համանման գործոններ: Նախ, ՀՀ նշված մարզերը սահմանակից են Ադրբեջանի Հանրապետությանը և պատերազմական վիճակը ՀՀ այս մարզերի սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական վիճակի վրա առավել էական ազդեցություն է ունեցել: Բացի դա, ԼՂՀ և ՀՀ նշված մարզերի բնակչությունը, մեր դիտարկումներով, էթնիկ-հոգեբանական առանձնահատկություններով բավականաչափ նման են միմյանց: Սեփական արժանապատվության գերաճած զգացումը, պատմականորեն

⁶ Տե՛ս Գաբուзян А.А. Криминологическая характеристика региональной преступности в Республике Армения. // Финансы, экономика, безопасность. М., 2007 N 2 (31) էջ 39-40:

պայմանավորված ռազմատենչությունը, համառությունը հատկանշական են դարաբաղցուն, տաուշցուն և սյունիքցուն: Մեր կարծիքով այս հանգամանքը նույնպես որոշակիորեն պայմանավորում է հանցավորության մակարդակի ու շարժընթացի նմանությունները:

Ինչևէ, ինչպես արդեն նշել ենք, 1992թ. համեմատ հանցավորությունը ԼՂՀ-ում մոտ երկու անգամ աճել է: 1994թ.-ից սկսած ԼՂՀ-ում հարաբերական խաղաղություն է: Ռազմական գործողությունների դադարեցումը նպաստեց նրան, որ հանրապետությունում բուռն կերպով սկսվեցին նոր պետականության ստեղծման գործընթացները: Բացի իշխանական կառույցների ձևավորումից այդ գործընթացները ընդգրկում են նաև շուկայական տնտեսության ձևավորումը և հասարակական ու պետական կյանքի ժողովրդավարացումը: Այդ պահից էլ հանրապետությունում սկսեցին առավել հստակ ի հայտ գալ անցումային հասարակությունների հատուկ երևույթներ: Հասարակական կարգի փոփոխությունը հանգեցրեց խոր ցնցումների ինչպես տնտեսության և սոցիալական ոլորտներում, այնպես էլ հոգևոր ոլորտում, ինչը չէր կարող չանդրադառնալ հանցավորության մակարդակի և շարժընթացի վրա: Չնայած պատերազմական տարիներին գրեթե լիովին քայքայված տնտեսությունը սկսեց մեծ թափով վերականգնվել ու զարգանալ, այնուամենայնիվ, դրա հետ միաժամանակ սկսեցին գործել նաև շուկայական տնտեսությանը և անցումային հասարակություններին բնորոշ երևույթները: Սոցիալ-տնտեսական շերտավորումը, հարստության և աղքատության միջև խորացող անդունդը, նախկին արժեքային համակարգի փլուզումը, բարոյականության անկումը, շուկայական տնտեսությանը բնորոշ սպառողական հոգեբանությունը և գերշահույթի մոտիվացիան այն երևույթներն են, որոնք պայմանավորում են հանցավորության աճը ԼՂՀ-ում: Հազարավոր մարդիկ իրենց զգում են լքված և արհամարված, ինչը միշտ էլ ընդվզման սպառնալիք է պարունակում, որի ծայրահեղ դրսևորումը հանցավոր վարքագիծն է: Միևնույն ժամանակ իրավական համակարգը չի կատարում իր գործառույթները, նվազում է օրենքի հեղինակությունը, ուստի և դրա կանխարգելիչ հնարավորությունը:

Սոցիալական և հոգևոր ոլորտների ճգնաժամը բացասական ազդեցություն է թողնում նաև անհատական հանցավոր վարքագծի պատճառների վրա⁷:

ԼՂՀ-ում նշված երևույթներին գումարվում են նաև հետպատերազմական վիճակին բնորոշ երևույթները՝ ռազմական գործողությունների հետ կապված տագնապայնության և վախի բարձր մակարդակը⁸, այսպես կոչված «ավղանական սինդրոմը», երբ ռազմական գործողություններին մասնակցած անձինք չեն կարողանում իրենց տեղը գտնել նոր պայմաններում և որպես դրա արդյունք կան օտարվում են ու «հեռանում» կյանքից թմրամոլության կամ հարբեցողության միջոցով, կամ էլ ագրեսիվության ու թշնամանքի բարձր մակարդակ են ձեռք բերում և սկսում հանցավոր գործունեությունը՝ «ոտնահարված արդարությունը վերականգնելու նպատակով»: Ասվածի ապացույցն է այն, որ 1997թ. սկսած հանրապետությունում աճում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների և բռնությամբ զուգորդված մի շարք հանցագործությունների մակարդակը: Այսպես, 1997թ. գրանցվել է սպանության և սպանության փորձի 5, 1999թ.՝ 8, 2000թ.՝ 9, 2001թ.՝ 11, 2002թ.՝ 7, 2003թ.՝ 9 դեպք, 2004թ.՝ 6 դեպք, իսկ 2005թ.՝ 10 դեպք: Նույն պատկերն է առողջությանը ծանր վնաս պատճառելու և խուլիգանությունների պարագայում: Գիշտ է վերջին երկու տարում սպանության և դրա փորձերի քանակը պակասել է, և 2007թ. հասել 4-ի, սակայն, մեր կարծիքով, դա չի բացառում վերը նշված միտումների առկայությունը, ինչի մասին վկայում է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների շարժընթացը. 2007թ. դրանց մակարդակը մոտ երեք անգամ գերազանցում է 1997թ. մակարդակը: Սա անչափ վտանգավոր միտում է ոչ միայն այն պատճառով, որ թմրամիջոցների օգտագործումը քայքայիչ ազդեցություն է թողնում մարդկանց առողջության վրա, այլ նաև, որովհետև նպաստում է այլ հարակից, այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների աճին: Պետք է նկատի ունենալ, որ թմրամոլները տարբեր պատճառներով ձգտում են տարածել այդ ախտը հասարակության մեջ: Ընդ որում,

⁷ Стів Кудрявцев В.Н. Преступность и нравы переходного общества. М., 2002, էջ 13:

⁸ Տագնապայնության և վախի կրիմինոգեն ազդեցության մասին տե՛ս Անտոնյան Ю.М. Почему люди совершают преступления. М., 2005, Անտոնյան Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996, Кондратюк Л.В. Антропология преступления. М., 2001:

մեկ թմրամուլը, եթե նա մեկուսացված չէ հասարակությունից, կարող է «վարակել» 10-15 մարդու⁹:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ *հանցավորությունը LՂՀ-ում դրսևորում է աճի միտում, զուգորդված լատենտայնության մակարդակի բարձրացման հետ:*

LՂՀ-ում հանցավորության վիճակի գնահատման համար կարևոր նշանակություն ունի դրա կառուցվածքի վերլուծությունը: Հանցավորության կառուցվածքը ցույց է տալիս հանցավորության իրական «գինը», դրանում ընթացող որակական փոփոխությունները:

Ինչպես արդեն նշել ենք, շուկայական տնտեսությանը հատուկ է գերշահույթի մոտիվացիան և սպառողական հոգեբանությունը: Ուստի շուկայական տնտեսությանը հատուկ է շահադիտական հանցագործությունների զգալի գերակայությունը բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների համեմատ: Ենթադրվում էր, որ շուկայական տնտեսության ձևավորմանը և զարգացմանը զուգընթաց LՂՀ-ում պետք է արձանագրվեր հանցավորության մեջ շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների մասնաբաժնի աճի միտում: Հանցավորության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների վերլուծությունը ցույց տվեց մեր ենթադրության ճշմարտացիությունը:

Աղյուսակ 2

Հանցավորության կառուցվածքի շարժընթացը LՂՀ-ում 1992-ից 2007թթ. հանցագործությունների առանձին տեսակների մասնաբաժինների տոկոսային արտահայտությամբ¹⁰

տարիներ	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2003	2005	2007
բռնության մոտիվացիայով հանցագործություններ	9,9	7,3	5,2	3,9	3,4	2,1	1,9	2,6	1,9	1,8	1,8	1,9	1,4
շահադիտական հանցագործություններ	40,2	39,2	45,6	27	30,1	40,4	34,4	27,6	22,4	20	15,4	34,2	48,2

⁹ Տե՛ս Миньковский Г.М., Побегайло Э.Ф., Ревин В.П. Уголовно-правовые средства борьбы с наркотизмом в России. М., 1994, էջ 12:

¹⁰ Բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների մեջ ընդգրկված են սպանությունը, բռնաբարությունը, առողջությանը վնաս պատճառելը, իսկ շահադիտական հանցագործությունների մեջ գողությունը, խարդախությունը, յուրացումը և վատնումը, կողոպուտը, կաշառակերությունը, տնտեսական հանցագործությունները: Ավագակությունը ընդգրկվել է ինչպես բռնության մոտիվացիայով կատարվող, այնպես էլ շահադիտական հանցագործությունների մեջ:

Հանցագործությունների առանձին տեսակների մասնաբաժինն արտահայտող թվերը չեն կարող հավաստի լինել այն պատճառով, որ բռնությամբ կատարվող հանցագործությունները ավելի լրիվ են արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ, քան շահադիտական հանցագործությունները: Բայց նույնիսկ պաշտոնական վիճակագրության հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս հանցավորության կառուցվածքում շահադիտական հանցագործությունների մասնաբաժնի ավելացման միտումը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ, մեր կարծիքով, շահադիտական հանցագործությունների վերաբերյալ 1998թ. մինչև 2002թ. տվյալները ակնհայտորեն նվազեցված են և չեն արտացոլում իրականությունը: Կարծում ենք, որ նշված ժամանակահատվածում, որը համընկնում է ԼՂՀ-ում շուկայական տնտեսության արագ թափով ձևավորման ժամանակահատվածին, բարձրացել է շահադիտական հանցագործությունների լատենտայնության մակարդակը: Ասվածի անուղղակի ապացույց է այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշել ենք, 1992թ.-ից մինչև 2004թ. պաշտոնապես գրանցված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները նվազել են մոտ 14 անգամ, ինչն օբյեկտիվորեն անհնար է: Շահադիտական հանցավորության լատենտայնացման մասին կարող է վկայել նաև այն հանգամանքը, որ նշված ժամանակահատվածում պաշտոնական վիճակագրությունը արձանագրում է պետական և հանրային գույքի հափշտակությունների նվազում: Ընդ որում, պետական սեփականության հափշտակությունների նվազումը արձանագրվում է 1992թ.-ից մինչև 1999թ., այնուհետև՝ 2002թ. և 2004թ. Մինչդեռ միևնույն ժամանակահատվածում անձնական սեփականության հափշտակությունների պաշտոնապես գրանցված շարժընթացն այլ պատկեր ունի: Այսպես, նշված հանցագործությունների աճ է արձանագրվում 1993-ից մինչև 1995թթ., նվազում՝ 1997-ից մինչև 2000թ. ներառյալ, 2001թ. արձանագրվում է այս հանցագործությունների աճ, 2002-ին՝ նվազում, իսկ 2003 և 2004թթ. կայուն աճ: Կրիմինալոգիական գրականության մեջ նշվում է, որ պետական սեփականության հափշտակությունների նվազումը զուգորդված անձնական սեփականության հափշտակությունների աճով մոտիվացիոն տեսանկյունից պարադոքս է, որովհետև մեր երկրում առկա անտնտեսվարության,

ամենաթողության, պետական սեփականության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի պայմաններում, պետական և հանրային սեփականության հափշտակությունն ավելի հեշտ է իրականացնել և ընդ որում, ավելի մեծ նյութական օգուտ կարող է տալ¹¹:

Շահադիտական հանցավորության լատենտայնացման միտումների մասին է վկայում նաև պաշտոնեական հանցագործությունների շարժընթացի վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, որը տարվում է 2001թվականից: Այսպես, 2001թ. գրանցվել է կաշառակերության 1 դեպք, 2002թ.՝ ոչ մի դեպք, 2003թ.՝ 1, 2004թ.՝ 2 և 2005թ.՝ ոչ մի դեպք: Ընդ որում, կաշառակերության դեպքերը ընդգրկում են ոչ միայն կաշառք ստանալը, այլ նաև կաշառք տալը և միջնորդությունը: Եթե նույնիսկ ընդունենք, որ պաշտոնական վիճակագրության մեջ արձանագրված են միայն կաշառք ստանալու դեպքեր, միևնույն է պատկերը հավատ չի ներշնչում, դեռ ավելին՝ ծիծաղելի է: Ինչ վերաբերում է մյուս գրանցվող պաշտոնեական հանցագործությանը՝ պաշտոնեական դիրքի չարաշահմանը, ապա 2003թ. գրանցվել է 13 դեպք, 2004թ.՝ 2 դեպք, և 2005թ.՝ 4 դեպք: Իրականում կարելի է խոսել այս հանցագործությունների դեմ պայքարի կազմալուծման և, ինչպես արդեն նշել ենք, այս հանցագործությունների լատենտայնացման մակարդակի բարձրացման մասին:

Տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների նման վիճակագրությունը, զուգորդված ԼՂՀ-ում ընթացող տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական գործընթացների հետ, վկայում է այն մասին, որ բարձրանում է շահադիտական հանցավորության լատենտայնացման մակարդակը, վտանգավորության աստիճանը, իսկ այդ հանցավորությունը դառնում է ավելի ինտելեկտուալ:

Կարծում ենք, որ շուկայական տնտեսության հետագա զարգացման և ԼՂՀ տնտեսական կյանքի հետագա ակտիվացման պայմաններում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների շարժընթացն էլ ավելի բացասական է լինելու: Բանն այն է, որ շահադիտական շարժառիթով կատարվող հանցանքների խորքային իմաստը, էությունը անձի սոցիալական, իսկ հաճախ նաև

¹¹ Ст'ю Лунеев В.В. Мотивация преступного поведения. М., 1993, էջ 142 :

կենսաբանական ստատուսի պաշտպանությունն է¹²: Գործազրկությունը, աղքատությունը, սոցիալական բևեռացումը իհարկե էական մոտիվացնող նշանակություն ունեն և դրանց առկայությունը ԼՂՀ-ում գաղտնիք չէ: Սակայն ԼՂՀ-ում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցանքների աճին կարող են նպաստել նաև բարոյահոգեբանական բնույթի որոշ երևույթներ: Մասնավորապես, պատերազմի զրկանքները տեսած ժողովրդի համար էական մոտիվացնող ազդեցություն կարող է ունենալ կորցրածը հետ բերելու, զրկանքների դիմաց, եթե կարելի է այդպես ասել, «պարզևատրվելու», փոխհատուցում ստանալու զգացումը, որը մոտավորապես հետևյալ ձևակերպումն ունի. «մենք շատ զրկանքներ ենք տեսել և արժանի ենք բարեկեցության»: Պարզ ասած, «արդարության վերականգնման» զգացումը կարող է էական մոտիվացնող ազդեցություն ունենալ շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների կապակցությամբ:

Զգալի մոտիվացնող նշանակություն կարող է ունենալ նաև տազնապայնության դեռևս պահպանվող բարձր աստիճանը:

Քանի որ շուկայական տնտեսությունը և տնտեսական կյանքի ակտիվացումը ընդլայնում են նյութական բարիքների ձեռք բերման ինչպես օրինական, այնպես էլ անօրինական եղանակների շրջանակը, ապա շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների շարժընթացի բացասական միտումները, մեր կարծիքով, անխուսափելի են:

Եվս մեկ հանգամանք, որը, մեր կարծիքով, կարող է նպաստել ԼՂՀ-ում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների աճին: Խոսքը Հայաստանի Հանրապետության հետ սերտ տնտեսական կապերի մասին է: Ըստ էության ՀՀ-ն և ԼՂՀ-ն գտնվում են միևնույն տնտեսական և ֆինասական դաշտում: Կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են ՀՀ-ում կոռուպցիայի և

¹² Стів Антопян Ю.М. Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996, т2 4:

տնտեսական հանցագործությունների բավականաչափ բարձր մակարդակի մասին¹³, ինչը չի կարող չանդրադառնալ նաև ԼՂՀ հանցավորության վիճակի վրա:

Այսպիսով, կարելի է հավաստել ԼՂՀ հանցավորության զարգացման երկրորդ միտումը՝ *հանցավորության կառուցվածքում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների մասնաբաժնի ավելացումը և բռնությամբ կատարվող հանցագործությունների մասնաբաժնի պակասումը: Ընդ որում, շահադիտական հանցավորության հիմնական միտումներն են լատենտայնացման մակարդակի բարձրացումը, ինչպես նաև ինտելեկտուալիզացիան և հանրային վտանգավորության աստիճանի բարձրացումը:*

Չնայած դրան, կարծում ենք, որ ԼՂՀ-ում դեռևս պահպանվում են բռնությամբ կատարվող հանցագործությունների աճի նախադրյալները: Ասվածի ապացույց է այն, որ թեև 1992թ.-ից արձանագրվում է սպանությունների կայուն նվազման միտում, այնուամենայնիվ որոշ տարիներին գրանցվում է դրանց աճ: Մասնավորապես, եթե 1992թ.-ից մինչև 1998թ. ներառյալ սպանությունների մակարդակը նվազել է, ապա դրանից հետո նկատվում է որոշակի աճ: Այսպես, 2001թ. արդեն կատարվել է 4 անգամ ավելի սպանություն քան 1998թ.: Ծիշտ է 2002թ.-ից սկսած սպանությունների թիվը նվազում է, այնուամենայնիվ ավելի շատ է քան 1998թ. Բացի դա, վերջին տարիներին, ինչպես արդեն նշել ենք, արձանագրվում է առողջությանը վնաս պատճառելու և խուլիզանությունների կայուն աճ:

Բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների աճին կարող են նպաստել ինչպես ԼՂՀ-ում ընթացող որոշ գործընթացները՝ սոցիալական բևեռացում, գործազրկություն, աղքատություն, բարքերի որոշակի ազատականացում, այնպես էլ նոր պատերազմի հավանականությունից և դրա սպասումից բխող տագնապայնության ու վախի հոգեվիճակը: Բացի դա բռնությամբ կատարվող հանցագործությունների աճին կարող է նպաստել նաև թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի գործածման մակարդակի բարձրացումը: Պակաս կարևոր նշանակություն չունեն նաև դարաբաղցուն հատուկ որոշակի հոգեբանական

¹³ Տե՛ս Գաբուзян А.А. Коррупционная преступность в Армении. //Вопросы правоведения. Ереван, 2005 N1, էջ 59-66, նույն հեղինակի՝ Тенденции корыстной преступности в Армении, //Вопросы правоведения. Ереван, 2005, N3, էջ 18-26:

առանձնահատկությունները, որոնց մասին արդեն նշել ենք՝ ռազմատենչություն, համառություն: Բռնությամբ կատարվող հանցագործությունների ժամանակ առ ժամանակ աճին կարող է նպաստել նաև այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշել ենք, դարաբաղցու համար էական հոգեբանական խնդիր է «արդարության վերականգնումը»: Թեև, ինչպես արդեն նշել ենք, շուկայական տնտեսության հետագա զարգացմանը զուգընթաց դա կարող է հանգեցնել շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցանքների աճի, այնուամենայնիվ, այդ նույն հոգեբանական խնդիրը էական մոտիվացնող նշանակություն ունի նաև բռնության մոտիվացիայով կատարվող հանցանքների համար: Ակնհայտ է, որ մտավոր և, հոգեբանական առանձնահատկությունների, կրթական մակարդակի, արդեն ունեցած սոցիալական ստատուսի, ինչու չէ նաև միկրոմիջավայրի առանձնահատկությունների հետ կապված, ոչ բոլոր անձինք են հավասար հնարավորություններ ունենալու օգտվելու շուկայական տնտեսության ընձեռած հնարավորություններից: Ընդ որում, խոսքը ոչ միայն և ոչ այնքան օրինական, որքան անօրինական այն եղանակների մասին է, որոնք բռնությամբ չեն զուգորդվում (ֆինանսական, տնտեսական մեքենայություններ, խարդախություններ, մասնավորեցում, արժեթղթերի հետ կապված անօրինական գործարքներ և այլն): Իսկ դա նշանակում է, որ հասարակության անդամների մի զգալի մասը դուրս է մնալու այդ գործընթացներից, չի կարողանալու նույնիսկ բռնությամբ չզուգորդված անօրինական եղանակներով ապահովել իր բարեկեցությունը և, որպես ստեղծված անարդարացի վիճակի պատասխան, դիմելու է բռնության:

Հասարակության կրիմինալ ախտահարման աստիճանի և բարոյահոգեբանական վիճակի յուրօրինակ չափորոշիչ է հանդիսանում անչափահասների և երիտասարդների հանցավորության վիճակը: Ցավոք մինչև 2001թ. մենք տվյալներ չունենք անչափահասների հանցավորության վերաբերյալ: Այնուամենայնիվ 2001թ.-ից մինչև 2004թ. տվյալները հուսադրող չեն: Այսպես, եթե 2001թ. անչափահասների կողմից կատարվել է 38 հանցագործություն, ապա 2002թ.՝ 41, 2003թ.՝ 18, իսկ 2004թ.՝ 56: Այդ նույն ժամանակահատվածում, բացի անչափահասներից, զգալի աճի միտում է արձանագրվել 25-ից 29 տարեկանների

տարիքային խմբում և չնչին աճ 18-ից 24 տարեկանների խմբում, իսկ տարիքային մյուս խմբերում արձանագրվել է նվազում: Անչափահասների և երիտասարդների հանցավորության աճի միտումը անհանգստացնող է: Ընդ որում, առավել անհանգստացնողը այն հանգամանքն է, որ 14-ից 15 տարեկանների հանցավորությունն աճի առավել բարձր տեմպեր ունի, քան 16-ից 17 տարեկաններինը: Նույնպիսի տեմպեր է արձանագրվում 25-ից 29 տարեկանների հանցավորության կապակցությամբ: Այսպես, 2004թ. 2003թ. համեմատ 14-ից 15 տարեկանների հանցավորությունն աճել է մոտ 15 անգամ, իսկ 25-ից 29 տարեկաններինը՝ մոտ 44%-ով: Հանցավորության կառուցվածքում անչափահասների և երիտասարդների հանցավորության մասնաբաժնի շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ, եթե 2001թ. այն կազմել է 25,2%, 2002թ.՝ 21,5%, 2003թ.՝ 18,2%, ապա 2004թ. արդեն 33,2%: Հանցավորության երիտասարդացման միտումը չի կարող անհանգստացնող չլինել: Դա վկայում է այն մասին, որ ԼՂՀ-ում ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտը մեղմ ասած չի նպաստում անչափահասների և երիտասարդների պատշաճ դաստիարակությանը: Բացի դա, անչափահասների և երիտասարդների հանցավորության ներկա վիճակով պայմանավորվում է ընդհանրապես հանցավորության ապագա վիճակը, ինչը թույլ չի տալիս լավատեսական կանխատեսում կատարել այս կապակցությամբ: Անչափահասների և երիտասարդների հանցավորության նման միտումները, մեր կարծիքով, պայմանավորված են ոչ միայն հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական գործընթացներով, ինչպիսիք են աղքատությունը, գործազրկությունը, սոցիալ-տնտեսական շերտավորումը, սպառողական հոգեբանությունը, բարքերի ազատականացումը, այլև հոգեբանական բնույթի որոշ երևույթներ: Խոսքն առաջին հերթին 18-ից 24 տարեկանների մասին է, որոնց մասնաբաժինը հանցավորության մեջ կազմում է 12-ից 13% և զիջում է միայն 30-ից 40 տարեկանների տարիքային խմբին: Ներկայիս 18-ից 24 տարեկանները, եթե կարելի է այդպես ասել, պատերազմի զավակներն են, որոնք 1990-ից 1994թթ, այսինքն՝ պատերազմի ամենաթեժ և ծանր տարիներին 4-ից 10 տարեկան էին և արդեն լիովին ընկալում ու իրենց վրա կրում էին պատերազմի ծանրությունները,

ռմբակոծությունների սարսափները, հայրերի կորուստը, քաղցը: Դա չէր կարող չանդրադառնալ նրանց հոգեկանի վրա: Հարազատների կորստով, քաղցով, մարտական գործողություններով, ռմբակոծություններով պայմանավորված անընդհատ ստրեսային վիճակը, դրա հիման վրա ձևավորված տազնապայնությունը և մահվան նկատմամբ վախը այն հոգեբանական գործոններն են, որոնք, ինչպես արդեն նշել ենք, մեծ կրիմինոգեն նշանակություն ունեն: Ընդ որում, մեր կողմից, 2005-2006թթ. ընթացքում Ստեփանակերտում և ԼՂՀ որոշ մարզերում, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթարկված անձանց շրջանում իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տազնապայնության առավել բարձր աստիճանով օժտված են հենց 18-ից 24 տարեկանները: Այս տարիքային խմբում տազնապայնության բարձր մակարդակ արձանագրվեց 62,3%-ի մոտ, միջին աստիճան՝ 28,9%-ի մոտ, և ցածր աստիճան՝ 8,8%-ի մոտ: Համեմատության համար նշենք, որ 14-ից 17 տարեկանների խմբում տազնապայնության բարձր աստիճան արձանագրվեց 48,6%-ի մոտ, իսկ 25-ից 29 տարեկանների խմբում՝ 49,2%-ի մոտ:

Զնայած ԼՂՀ-ում, ինչպես և ՀՀ-ում, առկա են գործոններ, որոնք զսպում են հանցավորության բուռն զարգացումը և նպաստում են հանցավորության համեմատաբար ցածր մակարդակի պահպանմանը (փոքր տարածքը, որը հեշտացնում է հանցավորության նկատմամբ վերահսկողությունը, երեխաների նկատմամբ զոհողության աստիճանի հասնող սերը, այն հանգամանքը, որ ընտանիքը դեռևս մնում է որպես առաջնային արժեք, ազգային մշակույթի դեռևս պահպանվող դիրքերը, դեռևս բավականաչափ ուժեղ ֆորմալ վերահսկողությունը¹⁴), այնուամենայնիվ, հանրապետությունում ընթացող երևույթները թույլ չեն տալիս լավատեսական կանխատեսումներ անել: Կարծում ենք, որ շուկայական տնտեսության հետագա զարգացումը, դրա հետ կապված գերշահույթի մոտիվացիան, գործազրկությունը, բարքերի հետագա ազատականացումը, սոցիալական բեկեռացումը, բնակչության տազնապայնության բարձր մակարդակը, զուգորդված մեր ժողովրդին հատուկ անհատապաշտության, որոշակի անհանդուրժողականության

¹⁴ Տե՛ս Գաբուзян А.А. Тенденции преступности в РА в переходный период. /Вопросы правоведения. Ереван, 2002 N4, էջ 23:

և ռազմատենչության, համառության հետ, այն գործոններն են, որոնք կարող են նպաստել հանցավորության հետագա զարգացմանը:

ԼՂՀ հանցավորության վիճակի մասին խոսելիս անհրաժեշտ է վերլուծել նաև տարածաշրջանային հանցավորության առանձնահատկությունները: Ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ, հանցավորության մակարդակի, կառուցվածքի և շարժընթացի տարածաշրջանային տարբերությունները պատահականություն չեն. դրանք պայմանավորված են այս կամ այն երկրի, տարածաշրջանի տնտեսական, սոցիալական, մշակութային, իրավական, կազմակերպական, վիճակագրական գործունեության առանձնահատկություններով¹⁵:

Տարածաշրջանային հանցավորության առանձնահատկությունների, այդ առանձնահատկությունների վրա ազդող գործոնների բացահայտումը կարևոր նշանակություն ունի ընդհանրապես հանցավորության զարգացման միտումների, հանցավորության պատճառական համալիրի բացահայտման համար:

Պետք է նշել, որ ԼՂՀ տարածաշրջանային հանցավորության խոր ուսումնասիրություններ կատարելը բավականաչափ դժվար է թեկուզ այն պատճառով, որ դրանց հանցավորության վերաբերյալ տվյալներն առկա են միայն 2001թ. սկսած: Բացի դա, վիճակագրական տվյալները սուղ են, իսկ հանցագործությունների քանակն էլ այնքան չէ, որ ընդհանրացումների հնարավորություն տա: Այնուամենայնիվ փորձենք ներկայացնել վիճակը և համառոտ վերլուծության ենթարկել այն:

ԼՂՀ շրջանների հանցավորության վիճակը և շարժընթացը ներկայացնենք աղյուսակի տեսքով:

¹⁵ Տե՛ս Лунеев В.В. География организованной преступности и коррупции в России (1997-1999) // Государство и право, 2000, N 11, էջ 24:

Աղյուսակ 3

Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների հանցավորության վիճակը գործակիցներով՝ 1000 բնակչի հաշվով

տարիներ	2001	2002	2003	2004	2005
Ստեփանակերտ	4,5	4,7	4,4	3,04	3,05
Ասկերան	6,6	4,5	3,9	3,4	3,2
Մարտակերտ	5,5	4,3	4,4	4,3	5,5
Մարտունի	4,6	3,4	3,1	3	2,6
Հադրութ	7,5	5,4	3,6	3,9	4,3
Շուշի	12,7	9	7,7	7,2	7,7
Քաշաթաղ	*	*	4,6	3,4	5,1
Շահումյան	7	2	9,5	6,5	8,5

Աղյուսակից երևում է, որ ԼՂՀ շրջանների մի մասում հանցավորությունը կայուն նվազման միտում է դրսևորում, իսկ Մարտակերտի, Շուշիի, Քաշաթաղի և Շահումյանի շրջանները աչքի են ընկնում ինչպես հանցավորության համեմատաբար բարձր գործակիցներով, այնպես էլ վերջին տարիներին նկատվող աճով: Ընդ որում, հանցավորության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շուշիում՝ 2001թ.: Այնուհետև այս շրջանում նկատվում է հանցավորության մակարդակի աստիճանական նվազում մինչև 2005թ., իսկ 2005թ.-ին հանցավորության մակարդակը նորից աճում է: Հանցավորության բարձր գործակիցներ են նկատվում Հադրութի (7,5՝ 2001թ.) Քաշաթաղի (5,1՝ 2005թ.), Շահումյանի (9,5՝ 2003թ.) և Ասկերանի (6,6՝ 2001թ.) շրջաններում: Հանցավորության առավել ցածր գործակիցներով աչքի են ընկնում Ստեփանակերտն ու Մարտունու շրջանը:

ԼՂՀ շրջանների հանցավորության վիճակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները կասկած են հարուցում: Մասնավորապես, անհավանական է թվում, որ հանցավորության առավել ցածր մակարդակով աչքի են ընկնում Ստեփանակերտն ու Մարտունու շրջանը, որոնք մյուս շրջանների համեմատությամբ աչքի են ընկնում ավելի մեծաթիվ բնակչությամբ, բնակչության

ավելի մեծ խտությամբ, ինչը նպաստում է կյանքի անոնիմությանը, տնտեսական զարգացման ավելի բարձր տեմպերով, բարքերի ազատականացման ավելի բարձր մակարդակով և այլն: Հիմքեր կան ենթադրելու, որ հանցավորության ցածր մակարդակը Ստեփանակերտում և Մարտունու շրջանում հանցավորության լատենտայնության ավելի բարձր մակարդակի արդյունք է: Այդ մասին անուղղակի կերպով վկայում են հանցավորության կառուցվածքի վերաբերյալ վիճակագրական տվյալները: Ինչպես և սպասվում էր, այն շրջաններում, որոնք աչքի են ընկնում հանցավորության համեմատաբար ցածր մակարդակով, հանցավորության կառուցվածքի մեջ գերակշռում են շահադիտական մոտիվացիայով կատարվող, բռնության հետ չզուգորդված հանցագործությունները, կամ էլ դրանց տեսակարար կշիռը բավականաչափ մեծ է: Եվ հակառակը, այն շրջաններում որոնք աչքի են ընկնում հանցավորության ավելի բարձր մակարդակով բարձր է անձի, հասարակական կարգի դեմ ուղղված, բռնության հետ զուգորդված հանցագործությունների տեսակարար կշիռը: Մասնավորապես, Ստեփանակերտում անձի և հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունները, ինչպես նաև սպանությունները միասին վերցրած հանցավորության կառուցվածքում կազմում են 34,8%, իսկ միայն սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝ առանց շահադիտական մոտիվացիայով կատարվող մյուս հանցագործությունները հաշվի առնելու, կազմում են 54,1%: Մարտունու շրջանում բռնության հետ չզուգորդված շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 49,8%-ը: Մինչդեռ հանցավորության բարձր մակարդակ ունեցող շրջաններում հանցավորության կառուցվածքի մեջ զգալի է բռնության հետ զուգորդված հանցագործությունների տեսակարար կշիռը: Այսպես, Հադրութի շրջանում անձի, հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունները և սպանությունները կազմում են հանցավորության 48%-ը, Շուշիում՝ 63%-ը, Քաշաթաղում՝ 62%-ը, Շահումյանում՝ 31%-ը: Հայտնի է, որ բռնության հետ զուգորդված հանցագործությունները համեմատաբար ավելի պակաս լատենտայնության մակարդակ ունեն, քան շահադիտական հանցագործությունները: Կարելի է ենթադրել, որ Ստեփանակերտում և Մարտունու շրջանում

հանցավորության՝ պաշտոնական վիճակագրությամբ հավաստվող համեմատաբար ցածր մակարդակը դրա լատենտայնության առավել բարձր մակարդակի արդյունք է: Այն շրջանները որոնք աչքի են ընկնում անձի և հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունների բարձր մակարդակով, աչքի են ընկնում նաև հանցավորության ավելի բարձր մակարդակով, որովհետև բռնությամբ զուգորդված հանցագործությունները առավել լրիվ են գրանցվում:

Սակայն, պետք է նշել, որ հանցավորության լատենտայնության մակարդակից բացի ԼՂՀ շրջանների հանցավորության մակարդակների տարբերությունների վրա ազդում են նաև այլ հանգամանքներ: Մասնավորապես, կրիմինալոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ այն տարածքներում, որտեղ գերակշռում է գյուղական բնակչությունը բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների տեսակարար կշիռը ավելի մեծ է այն տարածքների համեմատ, որոնցում գերակշռում է քաղաքային բնակչությունը¹⁶: Նույնն է իրավիճակը նաև ԼՂՀ-ում: Բոլոր այն շրջաններում, որոնք աչքի են ընկնում բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների բարձր մակարդակով գյուղական բնակչությունը գերակշռում է քաղաքայինին: Այդպիսին է վիճակը Հադրութի, Ասկերանի, Քաշաթաղի, Շահումյանի շրջաններում: Բացառություն է կազմում Շուշիի շրջանը, որտեղ քաղաքային բնակչությունը փոքր ինչ ավելի է գյուղականից: Նման իրադրությունը Շուշիում, մեր կարծիքով, այդ քաղաքի սոցիալական և տնտեսական ծանր պայմանների արդյունք է: Պետք է նշել, որ մինչև այժմ Շուշիում որևէ նկատելի տնտեսական զարգացում չի նկատվում, բնակչության զգալի մասը աղքատ է, ինչը խիստ ֆրուստրացնող ազդեցություն է թողնում: Մինչդեռ, ինչպես գիտենք, ֆրուստրացիան ագրեսիվ վարքագծին և բռնությանը նպաստող գլխավոր գործոններից մեկն է¹⁷:

Այն շրջաններում որոնցում տնտեսական կյանքն ավելի աշխույժ է, տնտեսական զարգացման տեմպերն ավելի բարձր են, բարձր է նաև շահադիտական

¹⁶ Տե՛ս Забрянский Г.И. Криминологические проблемы села. Ростов-На Дону, Изд. Ростовского университета, 1990, էջ 80-81:

¹⁷ Տե՛ս Антонян Ю.М. Актуальные проблемы насилия в российском обществе. // Уголовное право. М., 2000, N 3, էջ 65, Еникополов С.М. Некоторые результаты исследования агрессии. – В сб.: Личность преступника как объект психологического исследования. էջ 100:

հանցավորության մակարդակը: Այդպիսին է իրավիճակը, օրինակ, Ստեփանակերտում, Մարտունու շրջանում: Ստեփանակերտը և Մարտունու շրջանը աչքի են ընկնում առավել շատ պետական գրանցում ստացած և գործող տնտեսավարող սուբյեկտների քանակով, որոնք զբաղվում են տնտեսական գործունեության տարբեր տեսակներով (մեծածախ և մանրածախ առևտուր, հանրային սննդի կազմակերպում, արտադրություն և այլն), ուստի բնականաբար, այստեղ պետք է համեմատաբար տարածված լինեն տնտեսական հանցագործությունները: Միևնույն ժամանակ պետք է նշել նաև, որ այս շրջաններում բռնությամբ զուգորդված հանցագործություններն էլ մյուս շրջանների համեմատ պակաս տարածված չեն, բայց ավելի մեծ լատենտայնություն ունեն: Օրինակ՝ Մարտունու շրջանի ճարտար գյուղում անցկացվող գրեթե բոլոր ուրախ միջոցառումները զուգորդվում են ծեծկռտուքներով: Այստեղի ժողովուրդն ասում է. «Այն ուրախ միջոցառումը, որտեղ ընդհանրապես ծեծկռտուք չկա՝ կայացած չէ»: Նման հոգեբանությունը նպաստում է ոչ միայն բռնությամբ կատարվող հանցագործությունների տարածվածությանը, այլև դրանց լատենտայնությանը, որովհետև բռնությունն ընկալվում է որպես նորմա, ինչին իրավական միջոցներով արձագանքելն անհարկի է: Կարելի է ենթադրել նաև, որ այս շրջաններում բռնությամբ զուգորդված հանցանքների լատենտայնությանը նպաստում է նաև տնտեսական զարգացվածությանը համեմատաբար բարձր մակարդակը, բնակչության նյութական ապահովվածության բարձր մակարդակը, ինչը նպաստում է կոռուպցիոն կապերին և հովանավորչությանը:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ վերջին տարիներին շրջանների մեծ մասում, ըստ պաշտոնական վիճակագրության, արձանագրվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների մակարդակի նվազում: Բացառություն են կազմում Հադրութի և Մարտակերտի շրջանները: Ընդ որում, այն շրջաններում, որոնցում արձանագրվում է շահադիտական հանցավորության նվազում, որպես կանոն նկատվում է նաև ընդհանուր հանցավորության մակարդակի նվազում: Այդպիսին է իրավիճակը Ստեփանակերտում, Ասկերանում, Մարտունիում: Այն շրջաններում, որոնցում շահադիտական հանցավորությունն աճում է, նկատվում է նաև ընդհանուր հանցավորության մակարդակի աճ: Օբյեկտիվորեն անհնար է, որ

գործազրկության, սոցիալ-տնտեսական բևեռացման, աղքատության, ցածր իրավագիտակցության և սպառողական հոգեբանության արմատավորման պայմաններում, տնտեսական կյանքի աշխուժացումը հանգեցնի շահադիտական հանցավորության մակարդակի նվազման: ԼՂՀ հանցավորության զարգացման միտումները քննարկելիս արդեն նշել ենք այդ մասին:

Միայն Շուշիում, Քաշաթաղում և Շահումյանում ընդհանուր հանցավորության աճը կապված է ոչ թե շահադիտական այլ բռնությամբ զուգորդված հանցագործությունների աճի հետ: Կարելի է ենթադրել, որ այս շրջանների հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները ավելի օբյեկտիվ են արտացոլում հանցավորության իրական վիճակը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԼՂՀ նշված շրջանները վերաբնակեցված շրջաններ են, որտեղ հիմնականում ապրում են ՀՀ և ԼՂՀ տարբեր շրջաններից տեղափոխված անձինք, որոնց հիմնական մասը կյանքում իրենց տեղը չգտած, կայուն սոցիալական կապեր չունեցող անձինք են: Այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ այս շրջաններում ապրող մարդիկ տարբեր մշակույթների կրողներ են, նպաստում է միջանձնային հարաբերություններում լարվածությանը, մշակույթների բախմանը, ինչը բնականաբար նպաստում է բռնությամբ զուգորդված հանցագործությունների աճին:

ԼՂՀ շրջանների հանցավորության առանձնահատկությունների համառոտ վերլուծությունը թույլ է տալիս հանգելու մի քանի եզրակացությունների.

1) ԼՂՀ շրջանների հանցավորության տարբերությունները մեծ չափով կախված են այդ շրջաններում հանցավորության լատենտայնության մակարդակից.

2) ԼՂՀ շրջանների հանցավորության լատենտայնության մակարդակի տարբերությունները կախված են ինչպես իրավապահ մարմինների գործունեության առանձնահատկություններից, հացագործությունների գրանցման լրիվության մակարդակից, այնպես էլ հանցավորության կառուցվածքից. այն շրջաններում որոնցում հանցավորության մեջ զգալի է բռնության հետ չզուգորդված շահադիտական հանցագործությունների տեսակարար կշիռը, ավելի բարձր է նաև հանցավորության լատենտայնության մակարդակը, ուստի այդ շրջանների հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները չեն

արտացոլում օբյեկտիվ իրականությունը, մինչդեռ բռնության հետ զուգորդված հանցավորության ավելի բարձր մակարդակ ունեցող շրջանների հանցավորության մակարդակը պաշտոնական վիճակագրությամբ համեմատաբար օբյեկտիվ է արտացոլվում.

3) ԼՂՀ այն շրջաններում, որոնցում տնտեսական կյանքն ավելի աշխույժ է, որոնցում տնտեսական զարգացման տեմպերն ավելի բարձր են համեմատաբար ավելի բարձր է նաև բռնության հետ չզուգորդված շահադիտական հանցավորության մակարդակը, ինչը պաշտոնական վիճակագրության մեջ չի արտացոլվում, ինչն իր հերթին այդ հանցագործությունների լատենտայնության ավելի բարձր մակարդակի արդյունք է: Այն շրջանները, որոնք դուրս են մնացել բարեփոխումների ոլորտից, կամ որոնցում բարեփոխումները ինտենսիվ չեն, աչքի են ընկնում բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների ավելի բարձր մակարդակով.

4) ԼՂՀ շրջանների հանցավորության մակարդակի և կառուցվածքի տարբերությունները կախված են նաև գործազրկության, աղքատության, սոցիալական բևեռացման մակարդակներից. այնտեղ, որտեղ գործազրկության, աղքատության և սոցիալական բևեռացման մակարդակները ավելի բարձր են և բնականաբար ավելի էական է ֆրոնտորացնող գործոնների ազդեցությունը, այնտեղ ավելի բարձր է բռնության մոտիվացիայով հանցավորության մակարդակը:

Իհարկե մենք շատ լավ հասկանում ենք, որ ԼՂՀ տարածաշրջանային հանցավորության այս համառոտ վերլուծությունը չի կարող ամբողջովին բացահայտել տարածաշրջանային հանցավորության զարգացման միտումները, տարբեր շրջանների հանցավորության մակարդակների տարբերությունների վրա ազդող գործոնները: Այնուամենայնիվ, այս վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ հետագա խոր և համապատասխան մեթոդիկայով իրականացվող հետազոտությունների համար:

§2. Հանցանք կատարող անձինք

Հանցագործի անձի հիմնախնդիրը կրիմինալոգիայի անկյունաքարային հիմնախնդիրներից է: Հիմնախնդրի էությունը հանգում է նրան, թե արդյո՞ք հնարավոր է առանձնացնել «հանցագործի անձի» ինքնուրույն սոցիալական տիպ, արդյոք հանցանք կատարող անձինք օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք կանխորոշում են վարքագծի հանցավոր ձևի ընտրությունը և որոնցով նրանք տարբերվում են օրինապահ քաղաքացիներից:

Ներկայումս կրիմինալոգիայում այս հիմնախնդրի կապակցությամբ առկա են իրարամերժ բազմաթիվ տեսակետներ: Քրեագետների մի մասը գտնում է, որ հանցագործությունների պատճառները պետք է փնտրել առկա սոցիալական միջավայրում¹⁸, մյուսների կարծիքով հանցագործությունների պատճառ են հանդիսանում անձի որոշակի անձնային առանձնահատկությունները, ավելի շուտ՝ դրանց համակցությունը¹⁹: Ընդ որում, տարբեր քրեագետներ առանձնացնում են հանցանք կատարող անձանց տարբեր առանձնահատկություններ, որոնք, ըստ նրանց, հանցավոր վարքագծի ընտրության մեջ որոշիչ դեր են կատարում: Բացի դա, շատ քրեագետներ, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ հանցանք կատարող անձինք տարբերվում են իրենց արժեքային համակարգերով, նպատակներով, պահանջմունքներով, շարժառիթներով և հանցավոր վարքագծի մի շարք այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ առանձնահատկություններով, գտնում են, որ ճիշտ չէ կրիմինալոգիական այսքան բազմազան բնութագրիչներ ունեցող անձանց միավորել «հանցագործի անձ» ընդհանուր հասկացության մեջ: Ըստ այս քրեագետների, «հանցագործի անձ» հասկացությունը միավորում է ոչ թե հանցանք կատարած բոլոր

¹⁸ Տե՛ս Яковлев А.М. Индивидуальная профилактика преступного поведения. Горький, 1977, էջ 36-37, Яковлев А.М. Теория криминологии и социальная практика. М., 1985, էջ 89-93, Блувштейн Ю.Д. О понятии личности преступника. //В кн.: Теоретическое учение о личности преступника.

¹⁹ Տե՛ս Зелинский А.М. Криминальная психология. Киев, 1999, էջ 12-13, Курс советской криминологии. М., 1985, էջ 249, Карпец И.И., Ратинов А.Р. Правосознание как элемент правовой культуры. //В кн.: Правовая культура и вопросы правового воспитания. М., 1974, էջ 55, Антонян Ю.М., Гульдан В.В. Криминальная патопсихология. М., 1991, էջ 73, .Механизм преступного поведения. М., 1986, էջ 50, 55, Кондратюк Л.В. Антропология преступления (микркриминология). М., 2001:

անձանց, այլ միայն նրանց՝ ովքեր օժտված են որոշակի հատուկ անձնային հատկություններով, որոնք էլ էական դեր են կատարում հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում²⁰: Քրեագետների մեկ այլ խումբ, հակադրվելով վերը նշված կարծիքին, գտնում են, որ «հանցագործի անձ» հասկացությունը կիրառելի է հանցանք կատարած բոլոր անձանց նկատմամբ, որովհետև դժվար է գտնել այն հատուկ և որոշիչ անձնային առանձնահատկությունները, որոնք հանցավոր վարքագծի մեխանիզմում էական դեր են կատարում: Բացի դա, անձնային հատկությունների գնահատականը սուբյեկտիվ բնույթ ունի. որոշ հետազոտողների համար էական կարող են հանդիսանալ որոշակի անձնային հատկություններ, իսկ մյուսների համար՝ այլ հատկություններ: Եվս մեկ հանգամանք. հանցավոր վարքագծի վրա անձնային հատկությունների ազդեցության աստիճանը խիստ հարաբերական է. միևնույն հատկությունը տարբեր իրադրություններում տարբեր կերպ կարող է դրսևորվել: Վերջապես, «հանցագործի անձ» հասկացությունը միայն անձնային հատկությունների հիման վրա բնորոշելը սխալ է, որովհետև այդ դեպքում ծանր հանցանք կատարած շատ անձանց հնարավոր չի լինի հանցագործ համարել²¹:

Վերջին ժամանակներս մեծ տարածում է ստացել այն գաղափարը, որ հանցանք կատարող անձինք օրինապահ քաղաքացիներից տարբերվում են տազնապայնության առավել բարձր մակարդակով և, որ տազնապայնությունը հանցագործության հիմնական հոգեբանական պատճառն է: Ընդ որում, տազնապայնությունը ունի երկու մակարդակ՝ վախ սոցիալական ստատուսի համար և վախ մահվան հանդեպ: Առաջինը, որպես կանոն, անձին մղում է շահադիտական հանցագործությունների, իսկ երկրորդը՝ բռնության մոտիվացիայով հանցագործությունների²²:

Պետք է նշել, որ գրեթե ոչ մի քրեագետ չի ժխտում տազնապայնության և մահվան նկատմամբ վախի էական կրիմինոգեն նշանակությունը: Հանցանք

²⁰ Տե՛ս Блувштейн Ю.Д. О содержании понятия "Личность преступника" //Теоретические проблемы учения о личности преступника / Под ред. В.К. Звирбуля, А.Б. Сахарова и др. М., 1979, էջ 53:

²¹ Տե՛ս Миненок М.Г., Миненок Д.М. Корысть. криминологические и уголовно-правовые проблемы. СПб, 2001, էջ 57-58:

²² Տե՛ս Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений., М.: Юристъ, 1996, էջ 5:

կատարած անձնաց տազնապայնության աստիճանի բացահայտմանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանցանք կատարող անձանց մեջ, օրինապահ քաղաքացիների համեմատությամբ, իրոք զգալիորեն ավելի մեծ տոկոս են կազմում տազնապայնության բարձր աստիճանով օժտված անձինք²³: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները նույնպես վկայում են այդ մասին: Ինչպես արդեն նշել ենք, տազնապայնության բարձր մակարդակ արձանագրվեց հանցանք կատարած անձանց գրեթե կեսի մոտ (18-ից 24 տարեկանների 62,3%-ի մոտ, 14-ից 17 տարեկանների՝ 48,6%-ի մոտ, 25-ից 29 տարեկանների՝ 49,2%-ի մոտ, 30-ից 40 տարեկանների՝ 48,6%-ի մոտ), մինչդեռ օրինապահ քաղաքացիների շրջանում տազնապայնության բարձր մակարդակ արձանագրվեց 28,6%-ի մոտ:

Միևնույն ժամանակ մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ տազնապայնությունը, ինչքան էլ որ այն էական ազդեցություն ունենա, չի կարող հանցագործության միակ պատճառը հանդիսանալ և չի կարող հանցանք կատարող անձնաց օրինապահ քաղաքացիներից սահմանազատելու չափանիշ հանդիսանալ, մանավանդ որ շատ օրինապահ քաղաքացիների մոտ էլ նկատվում է տազնապայնության բարձր մակարդակ և հակառակը՝ հանցանք կատարող շատ անձինք ունեն տազնապայնության ցածր մակարդակ²⁴:

Հանցանք կատարող անձանց և օրինապահ քաղաքացիներին միմյանցից սահմանազատելու մեկ այլ չափանիշ էլ նրանց պահանջումների համակարգում առկա տարբերություններն են: Կրիմինալոգիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանցանք կատարող անձանց պահանջումների համակարգը աչքի է ընկնում հոգևոր պահանջումների նկատմամբ նյութական պահանջումների գերակայությամբ, որ հանցանք կատարող անձանց հատուկ է պահանջումների գերաճած կամ խեղաթյուրված համակարգը: Միևնույն ժամանակ պահանջումների նման համակարգ առկա է նաև օրինապահ շատ քաղաքացիների մոտ, իսկ հանցանք

²³ Տե՛ս Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений., М.: Юрист, 1996, Маргарян А.Р. Криминологическая характеристика корыстно-насильственных преступности. Дисс. на соиск. учен. степени кандидата юридических наук. Ереван, 2003, էջ 50-51, Սիմոնյան Տ. Երիտասարդների հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը 33-ում, Երևան 2004:

²⁴ Տե՛ս Габузян А. Лица совершающие преступления., Вопросы правоведения., Ереван, 2005, N4, էջ 28-37, Кудрявцев В.Н. Генезис преступного поведения. М., 1998:

կատարած անձանց մեջ էլ, մանավանդ շահադիտական հանցանքներ կատարողների, քիչ չեն նրանք, ում պահանջմունքային համակարգը աչքի է ընկնում բազմազանությամբ և հոգևոր պահանջմունքների բավականաչափ զարգացած համակարգով:

Իհարկե վիճակագրական մակարդակում հանցանք կատարող անձանց մեջ ավելի շատ են նրանք ում մոտ առկա է տազնապայնության բարձր մակարդակ, պահանջմունքների խեղաթյուրված համակարգ, ագրեսիվության բարձր աստիճան, կրթական ցածր մակարդակ և այլն: Բայց, քանի որ նմանատիպ առանձնահատկություններ ունեն նաև օրինապահ քաղաքացիները, ապա հիմնախնդիրը շարունակում է արդիական մնալ:

Կարծում ենք, որ հանցագործի անձի հիմնախնդիրը մոնիստական դիրքերից հնարավոր չէ բացահայտել: Մեր համոզմամբ հանցագործության պատճառ են հանդիսանում ոչ թե մեկ-երկու անձնային առանձնահատկությունները, այլ դրանց համակցությունը, կամ, ավելի ճիշտ կլինի ասել, դրանց համատեղումը: Մասնավորապես տազնապայնությունը ինքնին կարող է անձին մղել նույնիսկ ստեղծագործական ակտիվության: Կամ, ասենք, ագրեսիվությունը, որն անշուշտ ընկած է բռնությամբ զուգորդված շատ հանցագործությունների հիմքում, պարտադիր չէ, որ անձին մղի հանցագործության, որովհետև կարող է հանրորեն օգտակար կամ չեզոք դրսևորումներ ունենալ (օրինակ՝ ագրեսիվությունը կարող է մղել անձին ինքնակատարելագործման՝ սոցիալական ստատուսը բարձրացնելու նկատառումներով, կամ նպաստել որոշակի սպորտաձևով զբաղվելու և այլն): Բացի դա, նույնիսկ նյութական գերաճած պահանջմունքները, օրինակ՝ կուտակելու ձգտումը կարող է բավարարվել օրինական եղանակներով ու միջոցներով: Դեռ ավելին, այսպես կոչված խեղաթյուրված պահանջմունքները, օրինակ, թմրամոլությունը, հարբեցողությունը, սեռական պահանջմունքների խեղաթյուրված ձևերը՝ սադիզմ, մազոխիզմ և այլն, շատ հոգեբանների կարծիքով ոչ թե խեղաթյուրված պահանջմունքներ են, այլ նորմալ պահանջմունքների բավարարման

խեղաթյուրված եղանակներ²⁵: Օրինակ՝ թմրամոլության հիմքում կարող են ընկած լինել այնպիսի նորմալ պահանջումներ ինչպիսիք են ինքնահաստատվելու, մոդային հետևելու, ռեֆերենտային խմբում իր տեղը գտնելու, աֆիլյացիայի (շփման), հոգեկան և ֆիզիկական լիցքաթափման պահանջումները: Ուստի ճիշտ են թվում այն հեղինակները, ովքեր գտնում են, որ կրիմինալ ծանրաբեռնվածությունն ունի ոչ թե պահանջումներ, այլ դրա բավարարման եղանակը:

Այս տեսակետից ավելի շահեկան է թվում այն քրեագետների տեսակետը, ովքեր գտնում են, որ կրիմինալ հիմնական ծանրաբեռնվածությունը պատկանում է անձի արժեքային համակարգին, արժեքային կողմնորոշումներին:

Արժեքային կողմնորոշումները արտացոլում են սոցիալական տարբեր արժեքների նկատմամբ անձի վերաբերմունքը և այդ արժեքների հիերարխիան՝ ըստ անձի համար նշանակալիության աստիճանի²⁶: Արժեքային կողմնորոշումները անձի ուղեցույցն են, սոցիալական ոլորտում վարքագծի ձևի ընտրության կողմնորոշիչը²⁷: Մարդու արժեքային համակարգը նրա անձնավորության միջուկն է, հիմքը: Մարդը որպես անձ գնահատվում է իր արժեքային համակարգի հիման վրա, այն հանգամանքի հիման վրա, թե որքանով է նրա արժեքային համակարգը համապատասխանում այն արժեքներին, որոնք հասարակության կողմից ընդունված են որպես առավել կարևոր²⁸:

Ընդ որում, առանձնացվում են արժեք – նպատակները և արժեք – միջոցները: Հանցավոր վարքագծի մեխանիզմի բացահայտման համար շատ ավելի կարևոր նշանակություն ունեն արժեք – միջոցները, այսինքն՝ այն եղանակները, հնարքները, միջոցները, որոնց կիրառմամբ անձը հասնում է իր նպատակներին: Հանցանք կատարող անձինք տարբերվում են օրինապահ քաղաքացիներից հիմնականում նրանով, որ իրենց նպատակներին հասնելու համար ընտրում են իրավունքի, օրենքի և բարոյականության կողմից չխրախուսվող, պարսավելի եղանակներ ու միջոցներ: Սոցիոլոգ Է. Հիդդենսի կարծիքով գողերը սովորական մարդկանց նման ձգտում են

²⁵ Տե՛ս Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб.: "Питер", 2000, էջ 249:

²⁶ Տե՛ս Криминология. М., 1988, էջ 98:

²⁷ Տե՛ս Курс советской криминологии. М., 1985, էջ 554:

²⁸ Տե՛ս Социология для юристов. М., 1999, էջ 75:

«փող սարքել», բայց դրա համար ընտրում են հակաօրինական միջոցներ²⁹: Այդպիսի ընտրությանը կարող են նպաստել բազմաթիվ գործոններ, մասնավորապես, անձի բարոյահոգեբանական, կենսաֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կոնկրետ իրադրությունը, հասարակության մեջ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը և այլն: Կրիմինալոգիական գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, որ վարքագծի հանցավոր ձևը ընտրվում է այն դեպքում, երբ իրավահպատակ վարքագծի համեմատ ընկալվում է որպես առավել կարճ, քիչ ծախսատար և արդյունավետ: Ուստի հանցանք կատարող անձանց, հասարակության մյուս անդամների արժեքային համակարգի, հասարակության մեջ առավել կարևոր տեղ զբաղեցնող և առավել ընդունելի արժեքների ուսումնասիրությունը էական նշանակություն ունի հանցագործությունների պատճառների բացահայտման և հանցագործությունների կանխման, հանցավորության նկատմամբ վերահսկողության հաստատման համար:

Քննարկենք մատնանշված հիմնախնդիրները ԼՂՀ հանցավորության տվյալների հիման վրա:

Հանցանք կատարած անձանց կրիմինալոգիական բնութագիրը ենթադրում է սոցիալ-ժողովրդագրական և բարոյահոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն:

Անձի սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը իր մեջ ներառում է տարիքը, սեռը, կրթությունը, զբաղմունքը:

ԼՂՀ-ում հանցանք կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների ուսումնասիրությունը բացահայտեց հետևյալ օրինաչափությունները:

Նախ՝ վերջին տարիներին նկատվում է բարձրագույն կրթությամբ անձանց կրիմինալ ակտիվության նվազում: Այսպես, 2001թ. նրանց մասնաբաժինը հանցանք կատարած անձանց մեջ կազմել է 4,9%, 2002թ.՝ 3,5%, 2003թ.՝ 3%, 2004թ.՝ 2,6%, 2005թ.՝ 3,8%: Մինչդեռ 90-ական թվականների սկզբներին բարձրագույն կրթություն ունեցող անձանց մասնաբաժինը հանցանք կատարած անձանց մեջ կազմում էր 10-ից

²⁹ St'u Гидденс Э. Социология. М., 1999, էջ 126:

13%: Այսպիսի միտումը, մեր կարծիքով, հանցավորության լատենտայնացման մակարդակի բարձրացման արդյունք է: Ինչպես արդեն նշել ենք, 1998թ. մինչև 2004թ. հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները ցույց են տալիս տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, կոռուպցիոն և պետական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների անընդհատ նվազում, ինչը, հաշվի առնելով ԼՂՀ-ում առկա տնտեսական վիճակը և բարոյահոգեբանական մթնոլորտը, չի արտացոլում իրականությունը: Մինչդեռ հենց այս հանցագործություններով է պայմանավորված բարձրագույն կրթություն ունեցող անձանց կրիմինալ ակտիվությունը: Իրականում շուկայական տնտեսության զարգացումը, տնտեսական կյանքի աշխուժացումը՝ զուգորդված սոցիալ-իրավական վերահսկողության թուլացման, սպառողական հոգեբանության արմատավորման և շահադիտական մոտիվացիայի գերակայության հետ, օբյեկտիվորեն հանգեցնում են այսպես կոչված «սպիտակ օձիքավորների» հանցավորության մակարդակի աճին, և, բնականաբար, բարձրագույն կրթություն ունեցող անձանց կրիմինալ ակտիվության աճի:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ հանցանք կատարած անձանց մեջ գերակշռում են միջնակարգ կրթություն ունեցողները: Այսպես, 2001թ. հանցանք կատարած անձանց մեջ նրանք կազմել են 51,6%-ը, 2002թ.՝ 49,2%, 2003թ.՝ 42,2%, 2004թ.՝ 45,2%, 2005թ.՝ 44,1%:

Պետք է նշել, որ ինքնին կրթական մակարդակը հանցածին կամ հակահանցածին նշանակություն չունի: Ցածր կրթական մակարդակը, օրինակ, հանցածին նշանակություն է ձեռք բերում կապված այլ սոցիալական և հոգեբանական գործոնների հետ: Մասնավորապես, որպես կանոն, ցածր կրթական մակարդակ ունեցող անձի մտահորիզոնը, հետաքրքրությունների շրջանակը սահմանափակ են: Որպես դրա արդյունք, այդպիսի անձանց մոտ գերակշռում են բնական, նյութական, պարզունակ պահանջմունքները: Սրա հետ կապված, նման անձանց սոցիալական շփումները, ազատ ժամանցի անցկացումը սահմանափակվում են իրենց նմանների միջավայրով: Բացի դա, գործազրկությունը, աղքատությունը, հատկապես շուկայական տնտեսությանը հատուկ մրցակցության պայմաններում, առաջին հերթին

սպառնում են հենց ցածր կրթական մակարդակ ունեցող անձանց: Ցածր կրթական մակարդակը էական ազդեցություն է ունենում նաև զբաղմունքի տեսակի ընտրության հարցում: Որպես կանոն, ցածր կրթական մակարդակ ունեցող անձինք զբաղված են ծանր ֆիզիկական աշխատանքով, ինչը մեծ ֆիզիկական և հոգեբանական գերլարվածություն է առաջացնում ու խիստ արդիականացնում է լիցքաթավելու պահանջունքը: Հետաքրքրությունների սահմանափակության ու պահանջունքների պարզունակության պատճառով այսպիսի անձինք, որպես կանոն, ընտրում են լիցքաթափման սոցիալապես ոչ խրախուսելի միջոցներ՝ թմրամոլություն, հարբեցողություն, խաղամոլություն: Ասվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական համապատասխան միջոցառումների շնորհիվ, կրթական ցածր մակարդակի՝ սոցիալ-հոգեբանական տարբեր գործոններով պայմանավորված հանցածին ազդեցությունը, կարելի է մեղմել:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նորից նշել, որ բարձրագույն կրթությունը, կրթական բարձր մակարդակը դեռևս հանցագործությունից հետ պահելու երաշխիք չեն հադիսանում: Անցումնային ժամանակաշրջանում հանցանք կատարողների կոնտինգենտում տեղի ունեցող փոփոխությունները ասվածի վառ ապացույցն են:

Հանցանք կատարող անձանց տարիքային որոշ առանձնահատկություններին արդեն անդրադարձել ենք: Ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ-ում նկատվում է հանցավորության երիտասարդացման միտում, ինչը խիստ անհանգստացնող է: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ հանցանք կատարած անձանց մեջ գերակշռում է 30-ից 49 տարեկանների տարիքային խումբը: Այսպես, 2001թ. նրանք կազմել են հանցանք կատարող անձանց 27,3%-ը, 2002թ.՝ 24,5%-ը, 2003թ.՝ 26,3%-ը, 2004թ.՝ 29,6%-ը և 2005թ.՝ 26%-ը: Սա ԼՂՀ հանցավորության առանձնահատկություններից է, որը հատկանշական է նաև Հայաստանի Հանրապետության համար: Այս տարիքային խմբի նման կրիմինալ ակտիվության կարևոր սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոններից մեկը, մեր կարծիքով, այն հանգամանքն է, որ հենց այս տարիքային խումբն է առավել ախտահարված գործազրկությամբ: Այսպես, 2000թ. գործազուրկների ընդհանուր թվի

մեջ 30-ից 49 տարեկանները կազմել են 54,1%, 2002թ.՝ 49,8%, 2003թ.՝ 49%, 2005թ.՝ 48,3%: Գործազրկության հանցածին նշանակության մասին շատ է խոսվել: Այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել, որ բացի տնտեսական ազդեցությունից, բացի նրանից, որ գործազրկությունը բերում է աղքատության, այն ունի նաև շատ էական հոգեբանական ազդեցություն: Գործազուրկի գերակա հոգեբանական վիճակը շփոթվածությունն է, որը գործազրկության ժամկետի երկարաձգմանը զուգընթաց վերածվում է դեպրեսիայի, ինքնահարգանքի կորստի և հասարակությունից օտարման: Գործազրկությունն ավելի ծանր են տանում բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Նրանց մոտ գործազրկությունը զուգորդվում է հասարակության դեմ բողոքով, հասարակական ինստիտուտների նկատմամբ թշնամանքով, նոր սոցիալական մոդելի մասին երազանքով, անձնական ապագայի նկատմամբ հավատի կորստով³⁰: Պատահական չէ, որ ԼՂՀ-ում հանցանք կատարած անձանց շրջանում մեծ տեսակարար կշիռ են կազմում գործազուրկները: Այսպես, 2001թ. նրանք կազմել են հանցանք կատարած անձանց 39,9%-ը, 2002թ.՝ 38,5%-ը, 2003թ.՝ 31%-ը, 2004թ.՝ 40,2%-ը, 2005թ.՝ 39%-ը:

Չետաքրքիր օրինաչափություն է նկատվում հանցանք կատարող անձանց շրջանում բանվորների և ծառայողների տեսակարար կշռի հարաբերակցության կապակցությամբ: Այն տարիներին, երբ հանցավորության մեջ աճում է առանց բռնության կատարվող շահադիտական հանցագործությունների տեսակարար կշիռը, այդ տարիներին հանցանք կատարած անձանց շրջանում համապատասխանաբար գերակշռում է ծառայողների թիվը, և հակառակը, եթե հանցավորության մեջ աճում է բռնությամբ կատարվող հանցագործությունների կամ բռնի-շահադիտական հանցագործությունների տեսակարար կշիռը, ապա հանցանք կատարած անձանց շրջանում գերակշռում են բանվորները: Այսպես, 2001, 2004 և 2005թթ. ԼՂՀ հանցավորության մեջ զգալի տեսակարար կշիռ են կազմել բռնության մոտիվացիայով և բռնի-շահադիտական մոտիվացիայով հանցագործությունների տեսակարար կշիռը, համապատասխանաբար՝ հանցանք կատարած անձանց

³⁰ Տե՛ս Աստաշատուրով Ս. Безработные: проблемы и решения./Меняющееся общество., Ереван, 2001, N1-2, էջ 16:

շրջանում ծառայողների թիվը երկուսից երեք անգամ պակաս է եղել բանվորների թվից: Բայց այս հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել շահադիտական հանցավորության լատենտայնության առավել բարձր մակարդակը: Այնուամենայնիվ, հանցանք կատարած անձանց կրթական մակարդակի և զբաղմունքի առանձնահատկությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ հասարակության մեջ ընթացող սոցիալական, տնտեսական և բարոյահոգեբանական երևույթները տարբեր կերպ են ազդում տարբեր սոցիալական խավերի կրիմինալ ակտիվության վրա, ինչը հանգեցնում է հանցավորության մեջ տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների:

Ինչ վերաբերում է հանցանք կատարած անձանց սեռային առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ վերջին տարիներին դժբախտաբար նկատվում է կանանց տեսակարար կշռի որոշակի ավելացում: Մասնավորապես, եթե 2001թ. կանայք հանցանք կատարած անձանց մեջ կազմել են 4,6%, ապա 2002թ.` 8,7%, 2004թ.` 4% և 2005թ.` 6,8%: Կանանց կրիմինալ ակտիվության թեկուզ ոչ այնքան զգալի, այնուամենայնիվ որոշակի աճը, վկայում է ԼՂՀ բարոյահոգեբանական մթնոլորտում առկա որոշակի բացասական միտումների մասին: Անուղղակիորեն դրա մասին է վկայում, օրինակ, ամուսնությունների և ամուսնալուծությունների հարաբերակցության շարժընթացը. վերջին տարիներին ամուսնալուծությունների տոկոսը ամուսնությունների մեջ աճում է: Այսպես, եթե 2001թ. ամուսնալուծությունները կազմել են ամուսնությունների 13,1%-ը, ապա 2002թ.` 15,1%-ը, 2004թ.` 13,7%-ը և 2005թ.` 14,3%-ը:

Հանցանք կատարող անձանց կրիմինալոգիական բնութագրի կարևոր հատկանիշ է ռեցիդիվը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին ԼՂՀ-ում ռեցիդիվային հանցավորությունը կայուն աճի միտում է դրսևորում³¹: Այսպես, 2001թ. հանցանք կատարած անձանց մեջ նախկինում դատվածները կազմել են 11,8%, իսկ դրանց մեջ երկու կամ ավելի դատվածություն ունեցողներինը` 35,8%, 2002թ.

³¹ Նույն օրինաչափությունը դրսևորվում է նաև ՀՀ-ում, տե՛ս Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 24-25:

համապատասխանաբար՝ 12,2% և 48,3%, 2003թ.՝ 14,7% և 40,6%, 2004թ.՝ 17,8% և 49,4%, 2005թ.՝ 12,6% և 58%: Եթե պաշտոնական վիճակագրությունը ճիշտ է արտացոլում իրական վիճակը, ապա կարելի է ենթադրել, որ ԼՂՀ-ում հանցավորության մեջ աճում է պրոֆեսիոնալիզմի մակարդակը, ուստի և՛ հանցավորության հանրային վտանգավորությունը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ռեցիդիվային հանցավորության շարժընթացում տեղի ունեցող փոփոխությունները կարող են հանցավորության մեջ լատենտայնության և հանցագործությունների բացահայտման մակարդակների փոփոխությունների արդյունք լինել: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ԼՂՀ-ում ռեցիդիվային հանցավորության մակարդակը իրականում աճում է, որովհետև առկա են դրան նպաստող բավականաչափ գործոններ՝ բնակչության անկառավարելի միգրացիա, իրավապահ մարմինների կանխարգելիչ գործունեության ոչ բավարար մակարդակ, գործազրկություն, պատժի կատարման գործընթացում առկա բացասական երևույթներ և այլն³²:

Հանցանք կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները թեև մեծ չափով պատկերացում են տալիս հանցավորությանը նպաստող գործոնների մասին, սակայն, մեր կարծիքով, հանցագործությունների պատճառական մեխանիզմը բացահայտելու համար առավել կարևոր նշանակություն ունեն անձի բարոյահոգեբանական, սուբյեկտիվ տարրերը՝ պահանջմունքները, դրդապատճառները, արժեքային կողմնորոշումները, իրավագիտակցությունը:

Շատ կարևոր է հանցանք կատարող անձանց պահանջմունքների ուսումնասիրությունը: Պահանջմունքը մարդու մտավոր և վարքագծային ակտիվության աղբյուրն է: Հենց պահանջմունքը և դրա հիման վրա ձևավորված հետաքրքրությունն են հանդիսանում վարքագծի դրդապատճառ:

Կրիմինալոգիական որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ հանցանք կատարող անձանց մեծ մասը տարբերվում է օրինապահ քաղաքացիներից գերաճած

³² Տե՛ս Агамов Г. Правовые и социальные проблемы предупреждения рецидивной преступности. // Уголовное право, 2001, N 3, էջ 85-86:

կամ խեղաթյուրված պահանջումներով³³: Սակայն, մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր կարծում են, որ պետք է խոսել ոչ թե գերաճած կամ խեղաթյուրված պահանջումների, այլ պահանջումների աններդաշնակ համակարգի (երբ որոշակի պահանջումներ խիստ գերակայում են մյուսների նկատմամբ) և պահանջումների խեղաթյուրված համակարգի (երբ որոշ պահանջումներ խեղաթյուրված կամ ուռճացված են (նյութական արժեքների կուտակման ձգտում, ալկոհոլիզմ, թմրանյութություն և այլն) մասին³⁴ :

Ինչու՞ն են դրսևորվում հանցանք կատարող անձանց պահանջումների համակարգի առանձնահատկությունները:

Հանցանք կատարող անձանց մեծ մասի մոտ լրիվ բացակայում կամ սաղմնային վիճակում են գտնվում ծագումով մշակութային և ձևով հոգևոր պահանջումները (բարոյական, գեղագիտական, ստեղծագործական, իմացաբանական, գիտական և այլն): Այսպիսի մոտիվացիոն դատարկությունը խիստ վտանգավոր է: Այն իմաստազրկում է կյանքը, ապակողմնորոշում և բարոյազրկում է մարդուն, մոտիվացիան իջեցնում է նեղ անձնական, առօրեական մղումների մակարդակին: Իզուր չէ, որ հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտին հատուկ են նյութական, կենսաբանական բնույթի մղումներն ու պահանջումները: Ցավոք ստիպված ենք արձանագրել, որ ներկայումս պահանջումների համակարգի նման շեղումը ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում և ընդգրկում հասարակության անդամների մեծ մասին: Մեր կողմից 2006թ. ընթացքում Ստեփանակերտում, Մարտունու, Շահումյանի և Մարտակերտի շրջաններում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայումս հանցանք կատարած անձինք և, այսպես կոչված, օրինապահ քաղաքացիները իրենց պահանջումների համակարգով շատ քիչ են տարբերվում միմյանցից: Հիմնական և ամենազլխավոր տարբերությունը կայանում է նրանում, որ օրինապահ քաղաքացիների մեջ ավելի շատ են նրանք, ում մոտ դեռևս արդիական են հոգևոր, գեղագիտական պահանջումները: Այսպես, հանցանք կատարած անձանց

³³ Տե՛ս Механизм преступного поведения. М., 1981, էջ 50-55:

³⁴ Տե՛ս Лунеев В.В. Мотивация преступного поведения. М., 1991, էջ 167-169:

ընդամենը 32,9%-ը հարցման ընթացքում նշեց, որ մինչև հանցանք կատարելը ազատ ժամանցը անցկացրել է երաժշտություն լսելով, գիրք կարդալով, ֆիլմ դիտելով, թերթեր ու ամսագրեր կարդալով: Իհարկե, տարբեր հանցանքների կատարած անձանց մոտ պատկերը տարբեր է: Մասնավորապես, հոգևոր պահանջմունքներն ավելի զարգացած են այն անձանց մոտ ովքեր հանցանքը կատարում են պաշտոնեական դիրքն օգտագործելով, կամ իրենց ծառայողական գործունեության հետ կապված: Նույն օրինաչափությունը բացահայտվել է նաև այլ ուսումնասիրությունների արդյունքում³⁵: Մինչդեռ օրինապահ քաղաքացիների մոտ 70%-ը ազատ ժամանցի ընթացքում երաժշտություն են լսում, մոտ 80%-ը թերթեր ու ամսագրեր են կարդում, մոտ 30%-ը գեղարվեստական կամ այլ գրականություն են կարդում:

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշել ենք, ներկայումս հասարակության անդամների մեծ մասին հատուկ է նյութական, կենսաբանական բնույթի մղումների ու պահանջմունքների գերակայությունը: Մասնավորապես, թե հանցանք կատարած անձանց, թե օրինապահ քաղաքացիների համար երջանկության հիմնական գրավականներից մեկը շատ փող ունենալն է: Հարցման ենթարկված հանցանք կատարած անձանց 38%-ի և օրինապահ քաղաքացիների 32%-ի համար շատ փող ունենալը երջանկությունն ապահովող գործոնների մեջ նշվեց առաջին տեղում, այդ նույն գործոնը երկրորդ տեղում նշվեց հանցանք կատարած անձանց 47 և օրինապահ քաղաքացիների 56%-ի մոտ: Միևնույն ժամանակ շրջապատի կողմից հարգված լինելու, ճանապարհորդելու, հասարակության համար օգտակար գործ անելու, ինքնազարգանալու պահանջմունքները հանցանք կատարած անձանց մոտ երկրորդական, երրորդական տեղ են զբաղեցնում (համապատասխանաբար 7%, 3%, 11%, 2,7%): Ցավոք օրինապահ քաղաքացիների մոտ էլ վիճակը նույնն է:

Հարկ ենք համարում նշել սակայն, որ ներկայումս հանցագործությունների մեծ մասի կատարման հիմքում ընկած են նորմալ պահանջմունքները և պահանջմունքների համակարգի նշված շեղումները ինքնին հանցագործության չեն մղում: Դեռ ավելին, փորձագիտական գնահատականների համաձայն ներկայումս ԼՂՀ-ում

³⁵ Տե՛ս Գաբուзян А.А. Должностные преступления: криминологический и уголовно-правовой аспекты субъективной стороны. Ереван, 2000, էջ 28:

հանցագործությունների 50%-ից ավելին կատարվում են նվազագույն, կենսականորեն անհրաժեշտ պահանջումների բավարարման համար: Դա պայմանավորված է աղքատության և գործազրկության բավականաչափ բարձր մակարդակով:

Անդրադառնանք արժեքային համակարգին: Հանցանք կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների արժեքային համակարգերի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ հանցանք կատարած անձանց թե արժեք-նպատակների, թե արժեք-միջոցների համակարգում առկա են որոշակի առանձնահատկություններ, որոնցով նրանք տարբերվում են օրինապահ քաղաքացիներից: Միևնույն ժամանակ արձանագրված տարբերությունները էական չեն: Մասնավորապես թե հանցանք կատարած անձանց, թե օրինապահ քաղաքացիների մոտ առաջնային արժեք է հանդիսանում ընտանիքը³⁶: Երկրորդ տեղում է նյութապես ապահովված լինելը, ինչի մասին արդեն նշել ենք պահանջումների քննարկման ժամանակ: Ինչ վերաբերում է ինքնահաստատման պահանջումների արտահայտություն հանդիսացող ուրիշների կողմից հարգված լինելուն, ապա օրինապահ քաղաքացիների մոտ այն չորրորդ տեղում է, իսկ հանցանք կատարած անձանց մոտ՝ երրորդ: Սա, մեր կարծիքով, կարելի է բացատրել նրանով, որ հանցանք կատարած անձանց համար ինքնահաստատման պահանջումները առավել հրատապ նշանակություն ունի: Սա անուղղակիորեն վկայում է այն մասին, որ հանցագործությունների պատճառական մեխանիզմում հենց այս պահանջումներն է էական դեր կատարում: Որոշակի տարբերություն կա հանցանք կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի հարցում: Սիրած և հետաքրքիր զբաղմունք, աշխատանք ունենալը օրինապահ քաղաքացիների մոտ երրորդ տեղում էր իսկ հանցանք կատարած անձանց մոտ՝ հինգերորդ տեղում: Սա վկայում է այն մասին, որ հանրորեն օգտակար աշխատանքը հանցանք կատարած անձանց արժեքային համակարգում երրորդական

³⁶ Նույն օրինաչափությունը բացահայտվել է նաև այլ հետազոտությունների արդյունքում, տե՛ս Габузян А.А. Должностные преступления: криминологический и уголовно-правовой аспекты субъективной стороны. Ереван, 2000, էջ 29, Маргарян А.Р. Криминологическая характеристика корыстно-насильственных преступности. Дисс. на соиск. учен. степени кандидата юридических наук. Ереван, 2003, էջ 44:

տեղ է զբաղեցնում, ինչը անուղղակիորեն վկայում է այս անձանց զգալի մասին հատուկ հակահասարակական դիրքորոշման մասին:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել, որ հանցագործությունների տարբեր տեսակներ կատարած անձինք որոշակի առանձնահատկություններով տարբերվում են ոչ միայն օրինապահ քաղաքացիներից, այլև միմյանցից: Այսպես, շահադիտական մոտիվացիայով հանցանք կատարողների արժեքային համակարգում առավել էական տեղ են զբաղեցնում նյութական արժեքները: Դրա համար էլ, օրինակ, այս անձանց մոտ, որոնց մեջ շատ են նրանք, ովքեր հանցանքը կատարում են ծառայողական լիազորությունները օգտագործելով, սիրած և հետաքրքիր զբաղմունք կամ աշխատանք ունենալը գտնվում է երրորդ տեղում: Միևնույն ժամանակ, բռնության մոտիվացիայով հանցանք կատարողների մոտ, ովքեր խնդիրներ ունեն միջանձնային հարաբերություններում և ուն մոտ առավել արդիական է ինքնահաստատման պահանջմունքը, արժեքային համակարգում երկրորդ տեղն է զբաղեցնում շրջապատի կողմից հարգված լինելը:

Հանցանք կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների տարբերությունները արժեք – միջոցների ոլորտում նույնպես էական չեն: Այսպես, հանցանք կատարած անձանց մոտ առաջին տեղում է կարգապահությունը, հետո հաջողությունը (հաջողակ լինելը), դաստիարակվածությունը, հետո ազնվությունը, այնուհետև հարմարվելու ընդունակությունը: Օրինապահ քաղաքացիների մոտ հերթականությունը հետևյալն էր՝ հաջողությունը (հաջողակ լինելը), հարմարվելու ընդունակությունը, դաստիարակվածությունը, ազնվությունը, կարգապահությունը: Այն, որ կարգապահությունը հանցանք կատարած անձանց մոտ նշվել է առաջին տեղում, Ա. Մարգարյանի կարծիքով բխում է նրանց առկա վիճակից: Ակնհայտ է, որ պատիժը կրելու ընթացքում կարգապահությունը խիստ արդիական խնդիր է դատապարտյալների համար³⁷: Ինչ վերաբերում է մյուս արժեք – միջոցներին, ապա, մեր կարծիքով դրանց դասավորվածությունը վկայում է միայն այն մասին, որ թե հանցանք կատարող անձանց, թե օրինապահ քաղաքացիների մոտ ներկայումս նկատվում են անհատապաշտական, եսասիրական միտումներ, ամեն գնով նեղ

³⁷ Տե՛ս Ա. Մարգարյան Նշված աշխ. էջ 46:

անձնական նպատակներին հասնելու ձգտում: Միևնույն ժամանակ նկատվում է մի բացասական միտում ևս: Այն, որ հաջողությունը, հաջողակ լինելը մարդկանց արժեքների համակարգում առաջնային տեղերից մեկն է զբաղեցնում, վկայում է այն մասին, որ մարդիկ դադարել են իրենք իրենց վստահելուց, չեն հավատում իրենց ուժերին, շատ բան կապում են իրադրության, պատահականության հետ, ինչը նաև պատասխանատվության զգացման կորստի կամ թուլացման ցուցանիշ է: Սա բավականաչափ վտանգավոր միտում է, որովհետև պատասխանատվության զգացման կորուստը, անպատասխանատվությունը էական հանցածին նշանակություն ունի:

Հանցանք կատարած անձանց և օրինապահ քաղաքացիների արժեքային համակարգերի համեմատական ուսումնասիրությունը ոչ այնքան բացահայտեց դրանց միջև առկա տարբերությունները, որքան հիմք տվեց տազնապելու մեր հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի և զարգացման միտումների համար: Կարելի է արձանագրել, որ փողը, նյութական բարիքները հասարակության անդամների մեծ մասի համար դարձել են առաջնային արժեք, ինչը, հաշվի առնելով մեր հասարակության սոցիալական, տնտեսական և կազմակերպա-կառավարչական զարգացման մակարդակն ու սուղ հնարավորությունները, հսկայական հանցածին ազդեցություն է ունենում:

Պակաս տազնապալի չէ նաև այն հանգամանքը, որ հասարակության անդամների մեծ մասի համար հակաիրավական, հակաբարոյական, իսկ հաճախ նաև հանցավոր միջոցները հետզհետե դառնում են նպատակներին հասնելու ընդունելի, ոչ պարսավելի միջոցներ: Այդ մասին են վկայում ոչ միայն արժեք – միջոցների կապակցությամբ վերը բերված տվյալները, այլ նաև մեր կողմից իրականացված մեկ այլ հարցման արդյունքներ, համաձայն որոնց՝ հարցման ենթարկվածների 48%-ը պաշտոն զբաղեցնելու դեպքում պատրաստ են իրենց նպատակին հասնելու համար կաշառք վերցնել, չարաշահել պաշտոնեական դիրքը, օգտվել զբաղեցրած պաշտոնից բխող հեղինակությունից, արտոնություններ ստանալ, իսկ 78%-ը պատրաստ են կաշառք տալ: Այս տվյալները փոքր ինչ տարբերվում են ՀՀ-ում իրականացված համանման հետազոտության տվյալներից և առավել բարենպաստ են

(ՀՀ-ում հարցման ենթարկվածների 76%-ն է նշել, որ պատրաստ է կաշառք վերցնել³⁸):

ԼՂՀ-ում առկա առավել բարենպաստ վիճակը կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով: Նախ՝ ԼՂՀ-ն շուկայական տնտեսության զարգացման, բարքերի ազատականացման տեմպերով հետ է մնում ՀՀ-ից, այստեղ բարեփոխումները ավելի ուշ են սկսել: Բացի դա, պատերազմ տեսած և անընդհատ նոր պատերազմի սպասող ժողովրդի մեջ ամեն դեպքում դեռևս համեմատաբար ուժեղ են կոլեկտիվիստական զգացումները և օրենքին ենթարկվելու անհրաժեշտության գիտակցումը: Այնուամենայնիվ կարելի է արձանագրել մեր հասարակության մեջ առկա բացասական միտումները, ինչը շուտափույթ արձագանքելու անհրաժեշտություն է առաջացնում:

Հանցանք կատարած անձանց կրիմինալոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

1. ԼՂՀ-ում ընթացող սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական գործընթացները նպաստում են նրան, որ հանցանք կատարած անձանց կոնտինգենտում ավելանում են բարձրագույն կրթություն ունեցող անձանց, կանանց, անչափահասների, կրկնահանցագործների տեսակարար կշիռը.

2. Հանցանք կատարող անձանց և, այսպես կոչված, օրինապահ քաղաքացիների բարոյահոգեբանական բնութագրի, արժեքային համակարգերի մեջ էական տարբերություններ չեն նկատվում: Ընդ որում, ամբողջ հասարակության մակարդակով նկատվում է նյութական արժեքների գերակայության, նպատակներին հասնելու համար միջոցների մեջ խտրականություն չդնելու, հակաիրավական, հակաբարոյական միջոցների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի միտումը: Այս հանգամանքը թույլ է տալիս համաձայնելու այն քրեագետների հետ, ովքեր գտնում են, որ «հանցագործի անձ» հասկացությունը կիրառելի է հանցանք կատարած բոլոր անձանց նկատմամբ: Այլ հարց է, որ «հանցագործի անձ» հասկացությունը կարծես թե վկայում է օրինապահ քաղաքացիներից տարբերվող

³⁸ Տե՛ս Գաբուչյան Ա.Ա. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 49:

հատուկ սոցիալական տիպի մասին, ինչը, մեր կարծիքով ճիշտ է, ուստի առավել նպատակահարմար է օգտագործել «հանցանք կատարած անձ» հասկացությունը:

3. Նշված միտումները վկայում են ԼՂՀ հասարակության մեջ ընթացող բացասական բարոյահոգեբանական գործընթացների մասին, ինչը կարող է նպաստել հանցավորության հետագա զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§1. Հանցավորության պատճառների հիմնախնդիրը

Հանցավորության պատճառների հիմնախնդիրը կրիմինալոգիայում նույնքան կարևոր է, որքան հանցագործի անձի հիմնախնդիրը: Բանն այն է, որ հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը կախված է հանցավորության պատճառների վերաբերյալ ամբողջական և ճիշտ տեսությունից:

Պետք է նշել, որ կրիմինալոգիական ուսումնասիրությունների արդյունքում կրիմինոլոգների մեծ մասը հանգել է այն եզրակացության, որ հանցավորության ինչ-որ մեկ «հիմնական», «գլխավոր» պատճառ, որով հնարավոր կլինի սպառնիչ կերպով բացատրել կոնկրետ պայմաններում հանցավորության ծնունդը գոյություն չունի³⁹:

Ներկայումս, հատկապես ռուսական կրիմինալոգիական դպրոցում, գերակշռում է այն կարծիքը, որ հանցավորության պատճառները սոցիալական հակասություններն են և դրանց փոխգործողությունը: Պարզ ասած հանցավորությունը պայմանավորված է ոչ թե մեկ կամ մի քանի երևույթներով (գործոններով), այլ սոցիալական երևույթներում և այդ երևույթների միջև առկա հակասություններով ու դրանց փոխգործողությամբ: Եվ իրոք, եթե քննարկենք, օրինակ, գործոնների տեսությունը, որը երկար ժամանակ գերակշռում էր կրիմինալոգիայում, ապա պարզ կդառնա, որ այդ տեսությունը հնարավորություն չի ընձեռում ամբողջովին բացահայտելու հանցավորության գոյությունը: Գործոնների տեսության համաձայն հանցավորությունը պայմանավորված է մի շարք սոցիալ-տնտեսական, կազմակերպական, քաղաքական, իրավական, բարոյահոգեբանական, մշակութային տարբեր երևույթներով: Մասնավորապես, շատ կրիմինոլոգներ հանցավորությունը կապում են աղքատության, գործազրկության, կրթական ցածր մակարդակի, ոչ լրիվ

³⁹ Стен Преступность и реформы в России / Под ред. А.И. Долговой. М., 1998, էջ 45:

ընտանիքների առկայության և մի շարք այլ երևույթների հետ: Կրիմինոլոգների մի մասն էլ փորձում են բացահայտել հանցավորության կապը առավել բարդ, հիմնարար այնպիսի երևույթների հետ ինչպիսիք են աշխատանքի հասարակական բաժանումը, արատադրական ուժերի զարգացման մակարդակը, նյութական բարիքների բաշխման կարգը և այլն: Իհարկե հանցավորությունը կապված է նշված և մի շարք այլ երևույթների հետ, բայց դրանցից ոչ մեկը առանձին վերցրած չի կարող բացատրել սոցիալական շեղումների գոյությունը⁴⁰: Մասնավորապես այն, որ հանցանք կատարող անձանց կրթական մակարդակը օրինապահ քաղաքացիների համեմատ ավելի ցածր է, դեռևս չի վկայում այն մասին, որ ցածր կրթական մակարդակը հանցավորության պատճառ է կամ պատճառներից մեկը: Սեփականության դեմ ուղղված հանցանքներ կատարած անձանց կրիմինալոգիական ուսումնասիրությունները բացահայտել են հետևյալ օրինաչափությունը. ավելի բարձր կրթական մակարդակը պայմանավորում է հանցագործության առավել բարդ եղանակների ընտրությունը⁴¹: Կարելի է ենթադրել, որ բարձր կրթական մակարդակն ինքնին հակակրիմինոգեն նշանակություն չունի, այլ այդպիսի նշանակություն է ստանում այլ երևույթների հետ փոխկապակցվածության մեջ: Օրինակ՝ բարձր կրթական մակարդակը կարող է հակակրիմինոգեն նշանակություն ունենալ անձի բարոյական բարձր հատկանիշների հետ զուգակցվելով: Նույնը կարելի է ասել աղքատության մասին: Աղքատությունը նույնքան կրիմինոգեն նշանակություն ունի որքան հարստությունը: Ազնիվ աղքատի և սրիկա հարուստի կերպարները նորություն չեն: Նորություն չէ նաև «սպիտակ օձիքավորների» հանցավորությունը: Դեռ ավելին, ներկայումս հենց վերջիններիս հանցավորությունն է սպառնում առանձին պետությունների ազգային անվտանգությանը, նույնիսկ ամբողջ երկրագնդի ապագային: Այն, որ աղքատությունը ինքնին հանցավորության պատճառ չէ, կարելի է ապացուցել նաև նրանով, որ մի շարք աղքատ երկրների և տնտեսապես զարգացած, հարուստ երկրների հանցավորության մակարդակների համեմատական վերլուծությունը վերջիններիս օգտին չէ: Օրինակ՝ երկրագնդի ամենաաղքատ

⁴⁰ Տե՛ս Социальные отклонения. М., 1989, էջ 132:

⁴¹ Տե՛ս Миненок М.Г., Миненок Д.М. Корысть. криминологические и уголовно-правовые проблемы. М., 2001, էջ 251:

երկրներից Եթովպիայի, Նեպալի, Բուրունդիի հանցավորության մակարդակները 100 հազ. բնակչի հաշվով համապատասխանաբար կազմում են 94, 13, 87, իսկ առավել հարուստ երկրներից Գերմանիայի և Դանիայի հանցավորության մակարդակները համապատասխանաբար 7838 և 10393⁴²: Իհարկե այս տվյալները չպետք է մեկնաբանել այնպես, իբրև թե հարստությունն է կրիմինոգեն գործոն, իսկ աղքատությունը՝ հակառակը: Կան աղքատ երկրներ, որոնցում հանցավորության մակարդակը բավականաչափ բարձր է (Սուդան, Տանզանիա): Միևնույն ժամանակ կան հարուստ երկրներ, որոնցում հանցավորության մակարդակը համեմատաբար ցածր է (օրինակ՝ ճապոնիան): Կարելի է ենթադրել, որ թե հարստությունը, թե աղքատությունը բավականաչափ մեծ կրիմինոգեն ազդեցություն ունեն: Բացի դա, նշված տվյալները մեկ անգամ ևս ապացուցում են, որ հանցավորությունը չի կարող պայմանավորված լինել մեկ գործոնով:

Հանցավորության պատճառների վերաբերյալ ևս մեկ տարածված տեսություն էր սոցիալ-հոգեբանական, սուբյեկտիվ գործոնների տեսությունը, համաձայն որի՝ հանցավորության պատճառները ընկած են գիտակցության ոլորտում: Սկզբում հանցավորության պատճառ էին համարվում մարդկանց գիտակցության մեջ անցյալի մնացուկների առկայությունը: Նման մոտեցումը թույլ չէր տալիս բացահայտելու խորհրդային երկրում առկա հանցածին երևույթները, հակասությունները և ըստ էության գաղափարախոսական երանգ ուներ, որովհետև խորհրդային պետությանը, իշխանություններին փաստորեն ազատում էր երկրում տիրող բացասական երևույթների համար պատասխանատվությունից: Այնուհետև հանցավորության սոցիալ-հոգեբանական գործոնների տեսությունը զարգացավ տարբեր ուղղություններով: Մասնավորապես, շատ կրիմինոլոգներ հանցավորության պատճառ էին համարում հասարակական գիտակցության հետ մնալը հասարակական կեցությունից⁴³, հասարակության սոցիալական հոգեբանության մեջ առկա

⁴² Стен Ли Д.А. Уголовно-статистический учет. Структурно-функциональные закономерности. М., 1998, էջ 109, 121:

⁴³ Стен Курс советской криминологии /Под ред. В.Н. Кудрявцева, И.И. Карпеца, Б.В. Коробейникова. М., 1985. էջ 224:

բացասական տարրերը, մասնավորապես՝ հակահասարակական ավանդույթները, սովորույթները, բարքերը, հայացքները⁴⁴:

Հանցավորության սոցիալ-հոգեբանական գործոնների տեսությունը քննադատության ենթարկվեց այն հիմնավորմամբ, որ առաջնային նշանակություն էր տալիս հանցավորության սուբյեկտիվ գործոններին, իսկ օբյեկտիվ, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական գործոններին, վերագրվում էր պայմանի դեր, տրվում էր երկրորդական նշանակություն: Եվ իրոք, սոցիալ-հոգեբանական տեսության վառ ներկայացուցիչներից մեկի՝ Ն.Ֆ. Կուզնեցովայի կարծիքով, սոցիալ-տնտեսական դետերմինանտները չի կարելի հանցավորության պատճառ համարել այն հիմնավորմամբ, թե կեցությունն է որոշում գիտակցությունը: Դետերմինանտները մարդկանց գիտակցության մեջ ձևավորում, վերակենդանացնում, աշխուժացնում են հակահասարակական բարքերը, ավանդույթները, հետաքրքրությունները, որոնք էլ հանդիսանում են հանցավորության ու հանցագործությունների պատճառներ, դետերմինանտները նպաստում են կրիմինալ հոգեբանության իրագործմանը⁴⁵:

Մինչդեռ քննարկվող տեսության քննադատների կարծիքով սոցիալ-հոգեբանական գործոնների տեսությունը հակասում է կեցության առաջնայնության և գիտակցության ածանցյալ լինելու մասին մատերիալիստական փիլիսոփայության հիմնական դրույթին:

Բայց պետք է նշել, որ չնայած օբյեկտիվ գործոնները էական ազդեցություն ունեն մարդկանց վարքագծի վրա, այնուամենայնիվ չի կարելի անտեսել սուբյեկտիվ գործոնների դերը: Մեր կարծիքով սխալ է դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը: Օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները սերտորեն կապված են միմյանց հետ և փոխգործողության մեջ են: Այսպես, շուկայական տնտեսության ներդրման, պետության ժողովրդավարացման գործընթացները սկսվեցին սուբյեկտիվ, սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության ներքո, իսկ տնտեսության վիճակը, որը ներկայումս առկա է նախկին սոցիալիստական երկրների մեծ մասում, այդ թվում՝ ՀՀ-

⁴⁴ Տե՛ս Кузнецова Н.Ф., Остроумов С.С. Методологические проблемы криминологии //Правоведение. 1971, N3, էջ 108:

⁴⁵ Տե՛ս Кузнецова Н.Ф. Социально-экономические условия преступности //Методология и методика прикладных криминологических исследований. Иркутск, 1982, էջ 32:

ում և ԼՂՀ-ում, բարեփոխումները իրականացնողների կոպիտ սխալների, իսկ ոչ հազվադեպ նաև դիտավորության արդյունք է:

Վերջապես, ինչպես արդեն նշել ենք, ներկայումս ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում այն տեսակետը, որ հանցավորության պատճառները սոցիալական հակասություններն են ու դրանց փոխգործողությունը: Ընդ որում, հակասությունները առկա են բազմաթիվ և բազմաբնույթ երևույթների մեջ, ինչպես նաև այդ երևույթների միջև: Հանցավորության վրա ազդեցություն ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական, կազմակերպական, բարոյահոգեբանական երևույթների մեջ և այդ երևույթների միջև առկա հակասությունները: Առաջին հայացքից այս տեսությունը նման է գործոնների տեսությանը, որովհետև հանցավորությունը կապում է բազմաթիվ երևույթների հետ: Սակայն, ի տարբերություն գործոնների տեսության, այս տեսությունը հանցավորության պատճառ է դիտում ոչ թե ինքը՝ գործոնը, այլ դրա մեջ և դրա ու մյուս գործոնների մեջ առկա հակասությունները, դրանց փոխգործողությունը: Վ.Ն. Կուդրյավցևը, ուսումնասիրելով իրավախախտումների վրա տնտեսական հակասությունների ազդեցությունը, նշում է, որ իրավախախտումների և հասարակության տնտեսական կյանքի փոխկապվածությունը անհրաժեշտ է քննարկել պատմական զարգացման մեջ, արտաքին և ներքին հակասությունների բացահայտման և հաղթահարման մեջ⁴⁶:

Յա. Գիլինսկին, ով նույնպես սոցիալական շեղումների, այդ թվում՝ հանցավորության ընդհանուր պատճառ է համարում սոցիալական անհավասարությունը, գրում է.«Կարևոր ինտեգրատիվ կրիմինոգեն (դելիկտոգեն) գործոն է մարդկանց հարաբերականորեն հավասարաչափ բաշխված պահանջմունքների և դրանց բավարարման սկզբունքորեն անհավասար հնարավորությունների միջև եղած հակասությունը»⁴⁷:

Վ.Ա. Նոկոնոնովը գտնում է, որ հանցավորության պատճառները ամբողջ հասարակությանը կամ, ավելի ճիշտ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հակասությունների համալիր է: Ընդ որում, նրա կարծիքով, հանցավոր

⁴⁶ Տե՛ս Кудрявцев В.Н. Причины правонарушений. М., 1976, էջ 139:

⁴⁷ Տե՛ս Гилинский Я.И. Понятие преступности в современной криминологии. //Труды Санкт-Петербургского юридического института Генеральной прокуратуры РФ. СПб., 2001, N3. էջ 78:

վարքագծի աղբյուր կարող են հանդիսանալ ոչ թե ամեն տեսակի հակասությունները, այլ միայն սոցիալական խեղաթյուրումները, այսինքն՝ այն հակասությունները, որոնք արգելք են հանդիսանում հասարակական զարգացմանը, սոցիալական առաջընթացին⁴⁸:

Պետք է նշել սակայն, որ հանցավորության պատճառ կասրող են հանդիսանալ և հանցածին նշանակություն կարող են ունենալ ոչ միայն սոցիալական հակասությունների բացասական այլև դրական կողմերը: Որոշակի փոխգործողության և հարաբերակցության պայմաններում բացասական արդյունք կարող են առաջացնել նաև երկու դրական կամ չեզոք երևույթները⁴⁹: Օրինակ՝ անցումը շուկայական տնտեսությանը և մարդկանց գործարար ակտիվության խթանումը հասարակության տնտեսական առաջընթացի համար կարևոր գործոններ են և ըստ էության դրական երևույթներ, բայց դրանց փոխգործողությունը մնաց առանց բարոյական նորմերի բավարար ազդեցության և ծնեց ամեն գնով ու ամեն եղանակով հարստանալու ձգտում: Արդյունքը բոլորիս է հայտնի՝ հասարակության անարդարացի սոցիալ-տնտեսական բևեռացում, գործազրկություն, սոցիալական լարվածություն: Փաստորեն ոչ միայն ստագնացիան, այլ նաև հասարակության զարգացումը, համենայն դեպս դրա առանձին ասպեկտները, օրինակ, ուրբանիզացիան, ինդուստրալիզացիան, բնակարանային պայմանների ոչ հավասարաչափ բարելավումը, բնակչության թվի ավելացումը և այլն, կարող են դետերմինացնել հանցավորությունը⁵⁰:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք հավաստել, որ հանցավորության պատճառները հասարակական կյանքի տարբեր բնագավառներում առկա երևույթների մեջ և այդ երևույթների միջև գոյություն ունեցող հակասություններն են որոնց փոխգործողությամբ պայմանավորվում է հանցավորության գոյությունն ու զարգացումը: Այս մեթոդոլոգիական հիմքի վրա էլ կքննարկվեն ԼԴՅ հանցավորության պատճառական համալիրները:

⁴⁸ Տե՛ս Номоконов В.А. Преступное поведение: детерминизм и ответственность. Владивосток, 1989, էջ 74:

⁴⁹ Տե՛ս Криминология /Под ред. А.И. Долговой. М., 1997, էջ 198:

⁵⁰ Տե՛ս Шестаков Д.А. Криминология. СПб., 2006, էջ 198:

§2. Հանցավորության սոցիալ-տնտեսական պատճառական համալիրը

Հանցավորության պատճառների զգալի մասը պետք է փնտրել տնտեսական ոլորտում, տնտեսական հարաբերություններում: Իհարկե մենք հեռու ենք տնտեսական հարաբերությունների դերը բացարձականացնելու գաղափարից: Մշակույթը, իրավունքը, բարոյականությունը նույնպես մարդկային վարքագծի հզոր խթաններ են և կարող են դիմագրավել տնտեսական և նյութական ոլորտում առկա բացասական երևույթների ազդեցությանը: Սակայն, միևնույն ժամանակ, շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում տնտեսական հարաբերությունների մեջ առկա բացասական երևույթների դերը էլ ավելի ցայտուն դրսևորումներ ստացավ: Տնտեսության կազմակերպման, դրա կառավարման, նյութական բարիքների բաշխման հարաբերություններում առկա հակասությունները անցումային ժամանակաշրջանում այնպիսի հզոր և կործանարար ազդեցություն ունեցան հասարակության ոչ միայն նյութական բարեկեցության այլև բարոյահոգեբանական վիճակի վրա, որ թվում է թե հենց դրանք են հանցավորության աննախադեպ աճի հիմնական պատճառը: Իհարկե միանշանակ այսպես պնդելը կնշանակեր պարզեցնել խնդիրը: Բանն այն է, որ, ինչպես արդեն նշեցինք, մշակույթը, հոգևոր ոլորտը, իրավունքը, բարոյականությունը մարդկային վարքագծի և հասարակական զարգացման պակաս կարևոր խթանիչներ չեն: Ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ, եթե ողջ հասարակությունը և առանձին մարդիկ ղեկավարվում են բարության, մարդասիրության և արդարության գաղափարներով, ապրում են բարոյականության օրենքներով, ապա կարող են հաջողությամբ դիմագրավել տնտեսական ճգնաժամի կրիմինալ ճնշմանը, սոցիալական աղետներին և այլ կրիմինալ գործոններին⁵¹: Այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ հասարակության անդամների գերակշիռ մասը չեն կարողանում դիմագրավել տնտեսական ճգնաժամին: Ինչպես արդեն նշել ենք, հասարակության անդամների գերակշիռ մասի արժեքային համակարգում նյութական արժեքները, նյութական

⁵¹ Стену Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я. Криминологическая профилактика: теория, опыт, проблемы. М., 2001:

բարեկեցությունը առաջնային տեղ են զբաղեցնում և վարքագծի հիմնական մոտիվացնող գործոններ են: Պետք է նշել, որ միշտ էլ այդպես է եղել, ուղղակի անցումային ժամանակաշրջանում, երբ էականորեն թուլանում է սոցիալական վերահսկողությունը, երբ տնտեսական ճգնաժամը շատ երկար է տևում և առավել կործանարար բնույթ է կրում, տնտեսական հարաբերություններում առկա հակասությունների բացասական ազդեցությունն էլ ավելի սուր է արտահայտվում և ավելի էական ազդեցություն է թողնում հասարակական կյանքի մյուս ոլորտների վրա:

Պետք է նշել, որ շուկայական տնտեսությանը հատուկ են որոշ հանցածին երևույթներ: Դրանց մեջ կարելի է նշել մրցակցությունը, ինչն իր հերթին ենթադրում է մրցակիցների վերացում, աշխատուժի ծրագրավորված ավելցուկ, այսինքն՝ գործազրկություն, գերշահույթի մոտիվացիա, ծրագրավորված գույքային և սոցիալական շերտավորում⁵²: Մինչդեռ գործազրկության և սոցիալ-տնտեսական շերտավորման կրիմինալ ազդեցությունը ապացուցված է բազմաթիվ կրիմինալոգիական հետազոտություններով⁵³:

Անցումային ժամանակաշրջաններում շուկայական տնտեսությանը հատուկ կրիմինալ գործոնների ազդեցությունը ավելի է ուժեղանում կապված սուբյեկտիվ գործոնների հետ՝ բարեփոխումները իրականացնողների գիտելիքների ու փորձի պակաս, շտապողականություն, ամբիցիաներ, շահամոլություն, անձնական և խմբային շահերի գերակայություն և այլն: Այս սուբյեկտիվ գործոնները առավել ցայտուն դրսևորվում են մասնավորեցման, լիցենզավորման ոլորտներում, հարկային դաշտում: Պատահական չէ, որ անցումային ժամանակաշրջաններում գրեթե բոլոր պետություններում ծաղկում են կոռուպցիան, տնտեսական հանցագործությունները, հարկային հանցագործությունները: Ընդ որում, կրիմինալոգիական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ տնտեսական հանցագործությունները կարող են նպաստել նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների աճին⁵⁴:

⁵² Տե՛ս Кудрявцев В.Н., Эминов В.Е. Причины преступности в России. М., 2006, էջ 57:

⁵³ Տե՛ս Долгова А.И. Преступность и общество. М., 1992, էջ 32, Жалинский А.Э. Социально-правовое мышление: проблемы борьбы с преступностью., М., 1989, էջ 48:

⁵⁴ Տե՛ս Гыске А.В. Современная Российская преступность и проблемы безопасности общества: политический анализ. М., 2000, էջ 55:

Շուկայական տնտեսությանը հատուկ հակասությունները անցումային ժամանակաշրջանում նպաստում են բնակչության կենսամակարդակի անկմանը, աղքատությանը: Կոռուպցիան և տնտեսական հանցագործությունները էլ ավելի են բարդացնում իրավիճակը: Ստեղծվում է կախարդական մի շրջան. տնտեսության մեջ առկա հակասությունները նպաստում են տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի աճին, աղքատությանը և գործազրկությանը, իսկ կոռուպցիան և տնտեսական հանցագործությունները խոչընդոտում են տնտեսության հետագա զարգացմանը, աղքատության և գործազրկության վերացմանը:

Բայց ամենաէական և բացասական հետևանքը, որ թողնում են տնտեսության մեջ առկա հակասություններն ու դրանց հիմքի վրա աճող կոռուպցիան ու տնտեսական հանցագործությունները, սոցիալական անարդարությունն է, բնակչության սոցիալ-տնտեսական խիստ բևեռացումը, որի կրիմինոգեն հսկայական ազդեցությունը ապացուցված է բազմաթիվ կրիմինալոգիական հետազոտություններով⁵⁵:

Քննարկենք ԼՂՀ-ում տիրող վիճակը: Փորձագիտական որոշ տվյալների համաձայն՝ վերջին տարիներին ԼՂՀ բնակչության 55-62%-ը կարելի է աղքատ համարել, գործազուրկ է տնտեսապես ակտիվ բնակչության 6-8 %-ը (իրականում այս թիվը ավելի մեծ է, որովհետև մեծ է չգրանցված, թաքնված գործազրկության ծավալը): Ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական բևեռացմանը, ապա բնակչության 10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ խմբերի միջև հարաբերակցությունը 14/1-ի է, մինչդեռ համաշխարհային պրակտիկայում առավելագույն թույլատրելի սահման է համարվում 10/1-ի հարաբերակցությունը⁵⁶:

Չնայած ԼՂՀ բնակչության մի զգալի մասի ազգականները ներկայումս աշխատում են արտասահմանում, հիմնականում Ռուսաստանի դաշնությունում և ուժերի ներածին չափով նյութական օգնություն են ցույց տալիս հայրենիքում մնացած ազգականներին, այնուամենայնիվ, դա չի կարող խնդրի լուծում հանդիսանալ: Տնտեսության զարգացման հիմնական երաշխիքը արտադրության կազմակերպումն

⁵⁵ Տե՛ս Гыске А.В. նշված աշխ. էջ 55, Габузян А.А. Тенденции корыстной преступности в Армении, //Вопросы правоведения. Ереван, 2005. N3, էջ 18-26:

⁵⁶ Տե՛ս Криминология. СПб., 2002, էջ 98:

ու գյուղատնտեսության զարգացումն է, բայց ԼՂՀ-ում այդ գործընթացը գրեթե տեղի չի ունենում: Թեև գյուղատնտեսությունը զարգանում է, սակայն գյուղացու վիճակը ծանր է: Նախ՝ համապատասխան նյութական և տեխնիկական զինվածության բացակայության պատճառով գյուղացին չի կարողանում պատշաճ մակարդակով կազմակերպել տնտեսությունը: Բացի դա, գյուղատնտեսության զարգացումը կապված է մարդկանց որոշակի խմբի հետ, ովքեր նյութական միջոցներ ունեն և կարողանում են անասնապահական համալիրներ ունենալ: Բնակչության հիմնական զանգվածի նյութական բարեկեցության մակարդակի վրա դա որևէ ազդեցություն չի թողնում:

Կարելի է հավաստել, որ ԼՂՀ-ում առկա են տնտեսական այն բոլոր հակասությունները, որոնք էական հանցածին նշանակություն ունեն: Ընդ որում, այդ հակասությունները ներկայումս բավականաչափ սրված են: Կարելի է հավաստել նաև, որ ներկայումս ԼՂՀ-ում առկա են տնտեսական հակասությունների հետ կապված շահադիտական մոտիվացիայի հետևյալ դրսևորումները՝ 1) տարրական կենսական պահանջումները բավարարման հետ կապված դրդապատճառներ, 2) նախկին ապրելակերպի, կենսամակարդակի պահպանման հետ կապված դրդապատճառներ, 3) պրեստիժային պահանջումները բավարարման հետ կապված դրդապատճառներ, 4) նյութական արժեքների կուտակում կապված իշխանության հասնելու, լոբբիզմի, մենաշնորհի հաստատման ցանկությունների հետ:

Հանցավորության պատճառական համալիրում էական դեր են կատարում նաև սոցիալական հարաբերությունները:

Սոցիալական հարաբերությունները բազմազան և բազմամակարդակ հարաբերություններ են: Մարդու սոցիալական հարաբերությունները գոյություն ունեն մակրո և միկրո մակարդակներում: Մակրոմակարդակը իրենից ներկայացնում է մարդու հարաբերությունները պետության և հասարակության հետ, նրա արտադրական հարաբերությունները, ինչպես նաև մարդու որպես անձի իրավական վիճակը: Միկրոմակարդակը իրենից ներկայացնում է մարդու հարաբերությունները միջանձնային հարաբերություններում՝ ընտանիքում, ազգականների ու ծանոթների հետ, անձանոթ մարդկանց հետ:

Պետք է նշել, որ եթե մարդը սոցիալական հարաբերություններում իրեն զգում է մյուսներին ոչ հավասար, ոտնահարված, ապա մեծանում է ընդվզող վարքագծի և որպես դրա առավել ծայրահեղ դրսևորում՝ հանցավոր վարքագծի հավանականությունը: Ոտնահարվածի զգացումը ձևավորում է այնպիսի հոգեբանական երևույթներ, ինչպիսիք են նախանձը, խանդը, այն խիստ ֆրուստրացնում է անձին ու բարձրացնում է նրա ագրեսիվությունը, օտարվածությունը:

Մակրոմակարդակում առկա սոցիալական հարաբերությունների մեջ կարելի է առանձնացնել ազգամիջյան հարաբերությունները, անձի՝ իր սոցիալական ստատուսի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, հասարակության տարբեր սոցիալական խմբերի միջև առկա հարաբերությունները:

Ազգամիջյան հարաբերությունների մեջ առկա հակասությունները հսկայական կրիմինոգեն ազդեցություն ունեն: Բանն այն է, որ ազգային պատկանելությունը, ազգային, էթնիկական նույնացումը մարդու ինքնագիտակցության և ինքնահաստատման կարևորագույն գործոններից են⁵⁷: Ուստի մարդու ազգային պատվի ու արժանապատվության ոտնահարումը կարող է խիստ ֆրուստրացնող ազդեցություն ունենալ: Վերջին տասնամյակում նախկին ԽՍՀՄ տարածքում նկատվում է ազգամիջյան հակամարտությունների զգալի տարածում, որոնք շատ հաճախ վերաճում են զինված ընդհարումների, պատերազմի: Ազգամիջյան հակասությունները վերջիվերջո ազգամիջյան հակամարտության և պատերազմի հանգեցրին նաև ԼՂՅ-ում: Դա Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականության արդյունքն էր: Ադրբեջանի Ղարաբաղը հայաթափելու քաղաքականությունը սկսվեց հենց այն պահից, երբ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը 1921թ. բռնի կերպով կցվեցին Ադրբեջանին: Այդ պահից մինչև 1988թ. Ադրբեջանական իշխանությունները հետևողականորեն վարում էին այդ քաղաքականությունը: Նախ, Լեռնային Ղարաբաղը կտրվեց մայր հայրենիքից՝ չորս կողմից շրջապատվելով Ադրբեջանի կազմի մեջ մտցված ու հայաթափված վարչական շրջաններով (Լաչին, Քելբաջար, Ջանգելան, Ղուբաթլու): Բացի դա, Լեռնային

⁵⁷ Տե՛ս Կ. Նալչաջյան էթնիկական ինքնագիտակցություն, Երևան 2003:

Ղարաբաղի բնակչությունը զրկվեց հայերեն լեզվով ռադիո-հեռուստահաղորդումներ լսելու ու դիտելու հնարավորությունից, դպրոցներում չէր դասավանդվում հայ ժողովրդի պատմություն: Ծանր էր նաև մարզի սոցիալ-տնտեսական վիճակը, որի պատճառով հայ բնակչությունը, մանավանդ երիտասարդությունը, ստիպված էր հեռանալ հայրենիքից: Այդ ամենի ֆոնի վրա մարզում մեխանիկորեն աճում էր ադրբեջանցիների թիվը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1926թ.-ից մինչև 1979թ. ընկած ժամանակահատվածը հայերի թիվը մարզում աճել է ընդամենը 10%-ով, իսկ ադրբեջանցիներինը՝ երեք անգամ⁵⁸: Նման վիճակը չէր կարող չառաջացնել հայ ազգաբնակչության դժգոհությունը և վերջիվերջո չհանգեցնել այն երևույթներին որոնց քաջ ծանոթ ենք: Եթե վերանալու լինենք թե՛ ադրբեջանցիների, թե՛ հայերի կողմից այս հակամարտության առաջին տարիների ընթացքում կատարված արարքների քաղաքական և հոգեհուզական գնահատականներից (խոսքը չի վերաբերում պատերազմական գործողությունների ընթացքում կատարվածներին), ապա չոր վիճակագրական տվյալներով պատկերը հետևյալն է. 1988թ. հանցավոր արարքների արդյունքում Ադրբեջանում սպանվել է 70 մարդ, վիրավորվել՝ 1215 մարդ, տեղի է ունեցել հրկիզման եղանակով գույքի ոչնչացման կամ վնասման 2371 դեպք, իսկ ՀՀ-ում համապատասխանաբար 25, 1454 և 51, 1990թ.-ին Ադրբեջանում երկու ամսվա ընթացքում սպանվել է 253 մարդ, վիրավորվել՝ 704, տեղի է ունեցել հրկիզման եղանակով գույքի ոչնչացման կամ վնասման 557 դեպք, իսկ ՀՀ-ում համապատասխանաբար 16, 53 և 3⁵⁹:

Հանցավորության պատճառների մեջ էական դեր են կատարում այն կոնֆլիկտները, որոնք արտացոլում են անձի դժգոհությունը իր սոցիալական ստատուսից: Անձը կարող է բավարարված չլինել իր ստացած կրթությունից, զբաղեցրած պաշտոնից, աշխատանքի պայմաններից, աշխատանքային կոլեկտիվում տիրող մթնոլորտից, միկրոմիջավայրում առկա անօրինականությունից, անտարբերությունից, պաշտոնատար և այլ անձանց ապօրինություններից, հանցավոր արարքներից, նյութական բարիքների բաշխման կարգից, իր նյութական

⁵⁸Տե՛ս Ս. Մելքունյան Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան 2005, էջ 367:

⁵⁹ Տվյալները բերված են Վ.Վ. Լուսենկի Преступность XX века մենագրությունից, էջ 361:

ապահովվածության վիճակից և այլն: Անձի դժգոհությունը իր սոցիալական ստատուսից արտացոլում է նրա պահանջունքների և հնարավորությունների միջև եղած հակասությունը: Ակնհայտ է, որ այդ հակասությունը կրիմինոգեն նշանակություն ունի: Պահանջունքների անբավարավածությունը հանգեցնում է ֆրոլստրացիայի, անլիարժեքության բարդույթի, ինչը համապատասխան իրադրության մեջ և համապատասխան անձնային հատկությունների պարագայում կարող է հանգեցնել հանցավոր վարքագծի: Բայց ամենահիմնական կրիմինոգեն ազդեցությունը թողնում է սոցիալական անարդարությունը: Ընդ որում, կարևոր չէ սոցիալական անարդարությունն օբյեկտիվորեն գոյություն ունի, թե անձի սուբյեկտիվ ընկալման արդյունք է: Այլ կերպ ասած, անարդարության զգացումը, անկախ նրանից այն օբյեկտիվ հիմքեր ունի, թե ոչ, հզոր կրիմինոգեն ազդեցություն ունի: Պետք է նշել, որ վերջին տարիներին սոցիալական արդարության հարցը ԼՂՀ-ում բավականաչափ սուր է դրված: Մենք արդեն նշել ենք հասարակության սոցիալ-տնտեսական բևեռացման մասին: Պակաս կարևոր նշանակություն չունի նաև այսպես կոչված «աֆղանական սինդրոմը», որի մասին նույնպես նշել ենք:

Սոցիալական անարդարությունը բացասական երևույթների ու լարվածության է հանգեցնում նաև միջանձնային հարաբերություններում, ինչի արդյունք են հանդիսանում բռնի-ազրեսիվ մոտիվացիայով կատարվող հանցագործությունների աճը: Ինչպես արդեն նշել ենք, թեև 1992թ. համեմատ 1998թ. սպանությունների մակարդակը նվազել է, այնուամենայնիվ 1998թ. սկսած այն նորից աճում է: Բացի դա, կայուն աճի միտում է ցույց տալիս խուլիգանությունների և առողջության դեմ ուղղված հանցագործությունների մակարդակը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ թե սոցիալական, թե տնտեսական ոլորտներում ԼՂՀ-ում առկա են բազմաթիվ հակասություններ, որոնք էական ազդեցություն են թողնում հանցավորության մակարդակի վրա, և, որոնց մեղմումը կամ հնարավորության դեպքում չեզոքացումը, հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման են:

§3. Հանցավորության իրավական պատճառական համալիրը

Իրավական ոլորտում առկա կրիմինոգեն գործոնները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Կարելի է նշել այստեղ առկա այն հիմնական գործոնները որոնք կրիմինոգեն նշանակություն ունեն:

Նախ, կրիմինոգեն նշանակություն կարող են ունենալ հասարակության իրավագիտակցության ոլորտում առկա բացասական երևույթները: Դրանք կարող են դրսևորվել իրավունքի և օրենքի նկատմամբ ժխտողական, արհամարհական վերաբերմունքով, օրենքների, սեփական իրավունքների չիմացությամբ, իրավական տարրական գիտելիքների բացակայությամբ, իրավունքի և օրենքի գործառույթների, դերի ոչ հստակ պատկերացմամբ:

Իրավական ոլորտում առկա մյուս կրիմինոգեն գործոնը կարող է հանդիսանալ ինչպես հանցավորության դեմ պայքարին առնչվող, այնպես էլ այլ օրենքների անկատարությունը, դրանցում առկա հակասությունները, բացերը, թերությունները:

Հաջորդ կարևոր գործոնը, որը կարող է կրիմինոգեն նշանակություն ունենալ իրավակիրառ պրակտիկայում առկա բացթողումներն ու թերություններն են: Ընդ որում, այս ոլորտում առկա բացասական երևույթները կարող են մեծ չափով նպաստել նաև իրավագիտակցության ոլորտում բացասական երևույթների ձևավորմանը: Օրինակ՝ ոստիկանության վատ աշխատանքը, օրենքների կիրառման ժամանակ երկակի չափանիշների կիրառումը, օրենքի առջև հավասարության սկզբունքի խախտումը նպաստում են իրավունքի և օրենքի նկատմամբ արհամարհական, ժխտողական վերաբերմունքի ձևավորմանը:

Պետք է նշել, որ ներկայումս ԼՂՀ-ում առկա է հանցավորության իրավական պատճառական ողջ համալիրը: Այլ կերպ ասած, վերը նշված բոլոր հարթություններում էլ առկա են կրիմինոգեն գործոններ:

Նախ, պետք է ասել, որ ԼՂՀ բնակչության իրավագիտակցությունը բավականաչափ ցածր մակարդակի վրա է: Ինչպես արդեն նշել ենք, հասարակության մեջ ընթացող բացասական սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական գործընթացների հետ կապված, ԼՂՀ բնակչության մի զգալի մասին համար

նպատակներին հասնելու միջոցների ու եղանակների իրավական ու բարոյական բովանդակությունը որևէ էական նշանակություն չունի: Դեռ ավելին, նպատակներին հասնելու հակաիրավական, հակաբարոյական միջոցները դարձել են առավել նախընտրելի: Սրան իհարկե նպաստում է ոչ միայն հասարակությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, այլև այն, որ օրինական միջոցները, որպես կանոն, չեն ապահովում նույնիսկ նվազագույն պահանջներին բավարարումն ու նպատակների իրագործումը: Այսպիսով, ժխտողական, արհամարհական վերաբերմունքը օրենքի նկատմամբ ԼՂՀ հասարակության անդամների մեծ մասի իրավագիտակցությունը բնութագրող առանձնահատկություններից մեկն է:

Հաջորդ առանձնահատկությունը, որը բացահայտվեց մեր կողմից կատարված ուսումնասիրությունների ժամանակ, իրավական գիտելիքների շատ ցածր մակարդակն է, օրենքների չիմացությունը: Սա պատահական չէ: Պետք է նշել, որ իրավական գիտելիքների քարոզումը ԼՂՀ-ում բավարար մակարդակով չի իրականացվում: Բացի դա, ԼՂՀ բնակչության 46,7%-ը կազմում է գյուղական բնակչությունը, որը այդքան էլ չի հետաքրքրվում օրենսդրական գործընթացներով, որի համար օրենքը, իրավունքը միայն այն ժամանակ են արդիական խնդիր դառնում, երբ անձամբ բախվում են որոշակի խնդիրների: Պետք է նշել սակայն, որ նման վերաբերմունքը, թեև փոքր ինչ ավելի մեղմ ձևով, հատկանշական է ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակչությանը:

Օրենքի և իրավունքի նկատմամբ ժխտողական, արհամարհական վերաբերմունքը պայմանավորված է նաև իրավապահ մարմինների նկատմամբ վերաբերմունքով: Մեր կողմից 2005-2006թթ. ընթացքում Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտի և Քաշաթաղի շրջաններում կատարված վիկտիմոլոգիական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ԼՂՀ բնակչության մի զգալի մասը չի վստահում իրավապահ մարմիններին: Այսպես, հանցագործություններից տուժածների 37,9%-ը չեն դիմում իրավապահ մարմիններին, որովհետև չեն վստահում նրանց, 26,3%-ը գտնում են, որ իրենք իրենց ուժերով պետք է լուծեն իրենց խնդիրները, ինչը նույնպես իրավապահ մարմինների նկատմամբ անվստահության արդյունք է: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հարցման ենթարկված ԼՂՀ

քաղաքացիների միայն 22%-ը, այն հարցին, թե ուն օգնությանը կդիմեք, եթե կոնֆլիկտներ կամ պրոբլեմներ ունենաք, նշեց իրավապահ մարմիններից: Մինչդեռ 50%-ից ավելին նշեց ծանոթներից, հարազատներից, 25,7%-ը՝ պաշտոն ունեցող հեղինակավոր ծանոթի:

Հարկ է նշել, որ իրավապահ մարմինների նկատմամբ անվստահությունը, բացասական վերաբերմունքը պայմանավորված են հենց իրավապահ մարմինների աշխատանքում առկա թերություններով. աշխատանքի ընթացքում հաճախ երկակի չափանիշների կիրառում, կոռուպցիայի և հովանավորչության տարածվածություն, մարդու իրավունքների ու ազատությունների նկատմամբ արհամարհական վերաբերմունք: Մեր կողմից իրականացված վիկտիմալոգիական հարցումների ընթացքում իրավապահ մարմիններին դիմած տուժողների մոտ 10%-ը նշեց, որ իրավապահ մարմինները անուշադրության են մատնել իրենց, կոպիտ վերաբերմունք դրսևորել, 40%-ից ավելին նշեցին, որ թեև իրավապահ մարմինները կատարեցին իրենց պարտականությունները, բայց ձևականորեն, առանց խնդիրը իրականում և ըստ էության լուծելու ցանկության:

Հանցավորությանը նպաստող կարևոր իրավական գործոն է հանդիսանում համապատասխան օրենսդրական դաշտի բացակայությունը, դրանում առկա հակասություններն ու թերությունները: Սրա հետ կապված հարկ է նշել, որ ԼՂՀ-ում օրենքների ստեղծման գործընթացը մեղմ ասած պատշաճ մակարդակի վրա չէ: Մեծ մասամբ ընդունվում և կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները՝ առանց որևէ փոփոխության կամ քննադատական վերլուծության: Մինչդեռ ակնհայտ է, որ ՀՀ օրենքները աչքի չեն ընկնում իդեալական որակով, բայց, որ ամենակարևորն է, դրանք շատ դեպքերում չեն համապատասխանում ԼՂՀ իրավիճակի առանձնահատկություններին: Թեկուզ այն հանգամանքը, որ ԼՂՀ-ն անընդհատ նոր պատերազմի մեջ ներքաշվելու սպառնալիքի տակ է, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվեր օրենսդրությունը մշակելիս: Պատերազմական վիճակում գտնվող շատ պետությունների փորձը ցույց է տալիս, որ որոշակի իրադրություններում մարդու իրավունքների ու ազատությունների որոշակի սահմանափակումները խիստ անհրաժեշտություն են դառնում: Դեռ ավելին, գրականության մեջ այն կարծիքն է

հայտնվում, որ հանցավորության՝ ամբողջ աշխարհում նկատվող զարգացման միտումները, դրանում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները անհրաժեշտություն են առաջացնում հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետության մակարդակի բարձրացման համար գնալ մարդու իրավունքների ու ազատությունների որոշակի սահմանափակման ոչ միայն պատերազմող, այլ նաև համենատարբար կայուն վիճակում գտնվող պետություններում⁶⁰:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր գործոն է համապատասխան քրեաիրավական քաղաքականությունը: Այստեղ կարևորվում է արարքների քրեականացման և ապաքրեականացման գործընթացի դերը: Պետք է նշել, որ վերջին ժամանակներս կրիմինալոգիայում այն տեսակետն է արտահայտվել, որ կրիմինալոգիայի առարկայի մեջ պետք է ընդգրկել նաև հանցավորության և օրենսդրության փոխկապվածության խնդիրը՝ քրեականացման և ապաքրեականացման գործընթացների կարգավորման ու կատարելագործման նպատակով⁶¹:

Պետք է նշել, որ քրեականացման ու ապաքրեականացման գործընթացի արդյունավետությունը կախված է դրանց գիտականորեն հիմնավորված և սոցիալապես պայմանավորված հստակ չափանիշներից: Այս տեսանկյունից անչափ կարևոր է հաշվի առնել երկրում ընթացող քաղաքական, տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական, բարոյահոգեբանական գործընթացները, կանխատեսել ապագա իրավիճակը: Պակաս կարևոր չէ հաշվի առնել տվյալ ազգի մշակութային, բարոյահոգեբանական առանձնահատկությունները: Բացի դա, քրեականացման և ապաքրեականացման համար անհրաժեշտ է սիստեմատիկ և խոր վերլուծության ենթարկել հանցավորության և այլ իրավախախտումների վերաբերյալ վիճակագրությունը, իրականացնել ընտրանքային հետազոտություններ: Քրեականացման և ապաքրեականացման գործընթացներում առկա թերությունները հաճախ կապված են նշված հանգամանքներն անտեսելու հետ:

⁶⁰ Տե՛ս Гыске А.В. Современная Российская преступность и проблемы безопасности общества: политический анализ. М., 2000, էջ 83:

⁶¹ Տե՛ս Шестаков Д.А. Введение // Криминология – XX век. СПб., 2000, էջ 10:

Քրեականացման գործընթացի հիմնական թերություններից է դրա ուշացած լինելը: Հաճախ հանրային բարձր վտանգավորություն ներկայացնող արարքը տարիներ շարունակ ոչ մի իրավական արձագանքի չի արժանանում, ինչը բնականաբար մեծ վնաս է պատճառում օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին, նպաստում է այլ հանրորեն վտանգավոր արարքների տարածմանը, արգելակում է տնտեսության զարգացումը և այլն: Օրինակ՝ երկար ժամանակ պատասխանատվություն նախատեսված չէր վաշխառության, պաշտոնատար անձի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար և այլն:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ավելորդ քրեականացումը իր հերթին կարող է նպաստել հանցավորության զարգացմանը: Նախ՝ ավելորդ քրեականացումը արհեստականորեն նպաստում է հանցավոր համարվող արարքների շրջանակի ընդլայնմանը և, բնականաբար, հանցավորության աճին: Բացի դա, քրեականացումը նպաստում է այդ արարքները կատարողների ստիգմատիզացիային, ինչը բացասական բարոյահոգեբանական ազդեցություն է ունենում: Դրությունը ավելի է բարդանում, եթե այդ արարքների համար նախատեսվում է ազատազրկման ձևով պատիժ: Գաղտնիք չէ, որ այդ պատժատեսակի իրականացման գործընթացը ոչ միայն չի նպաստում դատապարտյալների ուղղմանը, այլ հակառակը, հաճախ նպաստում է նրանց մոտ հակահասարակական դիրքորոշման ձևավորմանը: Ազատազրկում պատժատեսակի բացասական հետևանքները հանգամանորեն քննարկվել են գրականության մեջ⁶²: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում ընդհանուր գծերով ներկայացնել այս պատժատեսակի բացասական հետևանքները: Դրանք հանգում են հետևյալին.

1) ազատազրկման վայրերը դեռևս գտնվում են սանիտարահիգիենիկ վատ վիճակում, ինչը նպաստում է դատապարտյալների բազմաթիվ հիվանդություններով, այդ թվում՝ տուբերկուլյոզով վարակմանը, ինչը վտանգ է ստեղծում նաև մնացած բնակչության համար.

⁶² St'u Хохряков Г.Ф. Парадоксы тюрьмы. М., 1991, Гишинский Я. Девианталогия. СПб., 2004:

2) դատապարտյալները գտնվում են երկակի ճնշման տակ՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմի և հանցավոր աշխարհի հեղինակությունների, ինչը չի նպաստում նրանց ուղղմանը.

3) ազատագրված վայրերում գտնվող յուրահատուկ կոնտինգենտի պատճառով դրանք դառնում են հանցավոր վարքագծի ուսուցման կենտրոն, հանցավորության դարբնոց.

4) ազատագրված ձևով պատիժ կրած անձանց զգալի մասը հետագայում էական կրիմինալ ազդեցություն է ունենում շրջապատի վրա, ինչը նպաստում է բնակչության քրեականացմանը:

Ինչ վերաբերում է ապաքրեականացման գործընթացին, ապա պետք է նշել, որ այն հնարավոր է երկրում ընթացող հեղափոխական բնույթի քաղաքական և տնտեսական փոփոխությունների արդյունքում: Օրինակ՝ այդ կապակցությամբ ապաքրեականացվեցին սպեկուլյացիան, վալյուտային գործառույթների կանոնները խախտելը: Կրիմինալոգիական գրականության մեջ նշվում են նաև ապաքրեականացման արդարացված լինելու այլ չափանիշներ, մասնավորապես, եթե արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելը հակասում է հասարակական բարոյականությանը, եթե տվյալ արարքի դեմ հնարավոր է պայքարել ավելի մեղմ միջոցներով, եթե հասարակության անդամները համառորեն չեն կատարում օրենքի պահանջը⁶³: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ապաքրեականացմանը պետք է շատ զգույշ մոտենալ: Մասնավորապես, մեր կարծիքով, շատ դեպքերում ձևական կամ խառը հանցակազմերը միայն նյութական հանցակազմով փոխարինելու՝ ներկայումս նկատվող միտումը ոչ բոլոր դեպքերում է արդարացված: Բանն այն է, որ շատ դեպքերում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը կամ դրանց բացակայությունը հանգամանքների պատահական զուգորդման արդյունք են հանդիսանում: Օրինակ՝ նախկին քրեական օրենսգիրքը պատասխանատվություն էր նախատեսում օդային, երկաթուղային, ջրային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնները խախտելու համար ոչ միայն այն դեպքում, եթե այդ արարքը հանրորեն վտանգավոր

⁶³ Տե՛ս Кудрявцев В.Н., Эминов В.Е. Причины преступности в России. М., 2006, էջ 86-87:

հետևանքներ է առաջացրել, այլև նաև այն դեպքում, երբ այդ հետևանքների առաջացման իրական վտանգ էր առկա: Գործող քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվության հնարավորությունը կապում է միայն հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ինչը, մեր կարծիքով, թուլացնում է այդ արարքի դեմ քրեահրավական պայքարի արդյունավետությունը: Կամ գործող քրեական օրենսգիրքը ապաքրեականացրել է մերձավոր ազգականների կողմից հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին իմանալ չհայտնելը: Կարծում ենք, որ եթե նման մոտեցումը արդարացված է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների պարտական կապակցությամբ, ապա նախապատրաստվող հանցագործության մասին իմանալ չհայտնելու կապակցությամբ երբեք արդարացված չէ: Օրինակ՝ ինչ արդարացում այն անձին, ով գիտի իր մերձավոր ազգականի կողմից մեկից ավելի անձանց սպանելու, կամ, ասենք, ատոմակայանը պայթեցնելու նախապատրաստության մասին, և այլ հնարավորություններ չունենալով հետ պահելու նրան այդ քայլից, համապատասխան մարմիններին չի հայտնում նախապատրաստվող հանցագործության մասին:

Այսպիսով, ինչպես արդեն նշել ենք և ինչպես տեսնում ենք, ԼԴՅ-ում առկա են իրավական բազմաթիվ գործոններ, որոնք նպաստում են կամ կարող են նպաստել հանցավորության զարգացմանը, ինչը համապատասխան իրավական, կազմակերպական, գաղափարախոսական, մշակութային միջոցառումների իրականացման անհրաժեշտություն է առաջացնում:

§4. Հանցավորության բարոյահոգեբանական պատճառական համալիրը

Հանցավորության պատճառների մեջ էական դեր է կատարում նաև հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը, հասարակության մեջ որոշակի բարոյական դիրքորոշումների ու արժեքների առկայությունը կամ բացակայությունը:

Հասարակության բացասական, կրիմինոգեն բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման մեջ էական դեր են կատարում այնպիսի երևույթներ, ինչպիսին են պաշտոնատար անձանց խոսքի և գործի միջև եղած հակասությունը, անհատապաշտության և եսասիրության գաղափարախոսության տարածումը, նյութական արժեքների, նյութական բարեկեցության, փողի իշխանության հաստատումը, մարդու իրավունքների հռչակման և գործնականում դրանց ոտնահարման միջև եղած հակասությունը, բռնության և սեքսի քարոզումը, արևմտյան արժեքային համակարգի ու ապրելակերպի քարոզումն ու ներմուծումը, նախկին արժեքային համակարգի անխտիր քարկոծումը, ինչի արդյունքում արժեզրկվում են դրանում առկա այնպիսի դրական արժեքներ ինչպիսին էին կոլեկտիվիզմը, փոխօգնությունը, հայրենասիրությունը և այլն:

Պետք է նշել, որ վերջին տարիներին ԼՂՀ-ում ձևավորվող բարոյահոգեբանական մթնոլորտը նույնպես լավատեսական կանխատեսումների տեղ չի թողնում:

Նախ, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, ինչպես և բոլոր շուկայական տնտեսության անցնող երկրներում, ԼՂՀ-ում նույնպես նյութական բարեկեցությունը, նյութական արժեքները, փողը վերածվել են առաջնային արժեքների: Ինչպես արդեն նշել ենք, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանցանք կատարող անձանց և օրինապահ անձնաց պահանջմունքների և արժեքային համակարգերի միջև առկա հիմնական տարբերություններից մեկն այն է, որ առաջինների պահանջմունքային համակարգում նյութական, բնական պահանջմունքները զգալիորեն գերակայում են հոգևոր պահանջմունքների նկատմամբ: Միևնույն ժամանակ, հանցանք կատարող անձանց և օրինապահ քաղաքացիների պահանջմունքների ու արժեքային համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ ներկայումս առկա է դրանց մերձեցման միտում: Ակնհայտ է, որ ողջ հասարակության մակարդակում պահանջմունքային և արժեքային համակարգի վերոգրյալ միտումը էական

կրիմինոգեն նշանակություն ունի և կարող է նպաստել հանցավորության մակարդակի աճին⁶⁴:

Փողի և նյութականի արժեվորումը, դրանց առաջնային տեղ տալը մի չարիք է, բայց էլ ավելի մեծ չարիք է ամենաթողության, բարոյական անսահման ազատության հոգեբանության ու գաղափարախոսության ձևավորումն ու տարածումը: Հենց սա է նպաստում նրան, որ մարդիկ չեն խորշում իրենց նպատակներին հասնելու համար ամեն տեսակի, այդ թվում՝ հակաբարոյական, հակաիրավական և հանցավոր միջոցների դիմելուց: Հենց սա է պատճառը, որ նպատակներին հասնելու հակաիրավական և հակաբարոյական միջոցները, ինչպես արդեն նշել ենք, դարձել են արժեք – միջոց: Այս տեսակետից խիստ բացասական ազդեցություն են թողնում ՁԼՄ-ները: Գովազդների, ֆիլմերի, տարբեր հաղորդումների միջոցով բարոյական նորմերը արհամարհող ապրելակերպի, հարստության ու փողի ամենակարողության, անպատժելիության, հանցավոր աշխարհի ռոմանտիկայի, սեքսուալ ազատության կամ ավելի ճիշտ է ասել սանձարձակության քարոզը, այն գործոնն է, որը նպաստում է բնակչության բարոյալքմանը, հոգևոր արժեքների արժեզրկմանը, վարքագծի պարսավելի ձևերի ընդօրինակմանը, սպառողական հոգեբանության ձևավորմանը: «Վերցրու կյանքից ամեն ինչ» հռչակում է գովազդներից մեկը: Ավելորդ է խոսել նման գաղափարների բացասական ազդեցության մասին:

Սպառողական հոգեբանության արմատավորումից, փողն ու նյութականը առաջնային արժեք «հռչակելուց» բացի, ՁԼՄ-ները էական ազդեցություն են թողնում բռնության մոտիվացիայի ձևավորման վրա: Բազմաթիվ կրիմինալոգիական հետազոտություններ ապացուցում են, որ հեռուստատեսությամբ և կինոյով ցուցադրվող բռնության տեսարանները հանգեցնում են նրան, որ մարդիկ սովորում են դրան. բռնությունն ու ագրեսիան դառնում են առօրեական երևույթներ, արժեք-միջոցներ⁶⁵:

⁶⁴ Տե՛ս Контроль над преступностью в демократическом обществе. "Круглый стол" // Государство и право. 1993, N 10, էջ 59:

⁶⁵ Տե՛ս Шнайдер Г. Преступность и средства массовой информации // Советское государство и право. 1990, N 7:

Հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի չափանիշներից է նաև ալկոհոլամոլության ու թմրամոլության տարածվածության աստիճանը: Ինչպես արդեն նշել ենք, վերջին տարիներին նկատվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների աճ: Բացի դա հանցավորության մեջ նկատվում է թմրանյութային հարբածության վիճակում կատարված հանցագործությունների աճ: Վերջին տարիներին երկու տոկոսով ավելացել է նաև ալկոհոլային հարբածության վիճակում կատարված հանցագործությունների քանակը: Եթե նկատի ունենանք այն, որ թմրամիջոցների հետ կապված հանցագործություններն աչքի են ընկնում լատենտայնության բարձր մակարդակով, ապա կարելի է հավաստել, որ այս տեսանկյունից ԼՂՀ բարոյահոգեբանական մթնոլորտի զարգացման միտումներն անհանգստացնող են:

Հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի արտահայտության չափանիշ է հասարակական վայրերում հանցավորության վիճակն ու զարգացման միտումները: Այս ցուցանիշով էլ ԼՂՀ հանցավորությունը վերջին տարիներին անբարենպաստ միտում է դրսևորում. 2005թ. 2001թ. համեմատ հասարակական վայրերում կատարված հանցագործություններն աճել են 1,5%-ով:

Իհարկե թե ալկոհոլային ու թմրանյութային հարբածության, թե փողոցային հանցավորության մակարդակով ԼՂՀ-ն զգալիորեն զիջում է ինչպես զարգացած երկրներին, այնպես ՌԴ-ին և ՀՀ-ին: Մասնավորապես, ալկոհոլային հարբածության վիճակում կատարված հանցագործությունները կազմում են հանցավորության ընդամենը 8-ից 10%-ը, թմրանյութային հարբածության վիճակում կատարվածները՝ ընդամենը 0,5%-ը, իսկ հասարակական վայրերում կատարվածները՝ 9%-ը: Բայց, այնուամենայնիվ, սրանց զարգացման միտումները անհանգստացնող են և համապատասխան միջոցառումների մշակման ու կիրառման անհրաժեշտություն են առաջացնում:

Խոսելով բարոյահոգեբանական մթնոլորտի մասին չենք կարող չանդրադառնալ նաև այն քաղաքական վիճակին, որն առկա է ԼՂՀ-ում: Խոսքը ոչ այնքան ներքին քաղաքական, որքան արտաքին քաղաքական վիճակի և ԼՂՀ կարգավիճակի մասին է: Չնայած դե ֆակտո ԼՂՀ-ն անկախ պետություն է, սակայն դե

յուրեւ ԼՂՀ կարգավիճակը որոշված չէ: Այս անորոշությունը, սպասողական վիճակը իրենց կնիքն են թողնում մարդկանց հոգեկանի վրա: Նույնպիսի հոգեբանական ազդեցություն է թողնում հնարավոր նոր պատերազմի սպառնալիքը:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք հավաստել, որ ԼՂՀ բարոյահոգեբանական առկա մթնոլորտը, առավել ևս դրա զարգացման միտումները անհանգստացնող են և կարող են նպաստել հանցավորության հետագա զարգացմանը: Էլ ավելի վատ է վիճակը անչափահասների և երիտասարդության առումով, որովհետև հենց նրանց շրջանում են առավել տարածված սպառողական հոգեբանությունը, արևմտյան ապրելակերպին ու մշակույթին տուրք տալը: Պատահական չէ, որ մեր կողմից հարցման ենթարկված երիտասարդների 70%-ից ավելին նշեցին, թե դրական են վերաբերում բարքերի ազատականացմանը և արևմտյան ապրելակերպի ներմուծմանը (հարցման ենթարկված 50-ից բարձր տարիք ունեցողների միայն 21%-ը դրական վերաբերմունք նշեց վերոգրյալ երևույթների նկատմամբ): Այս ֆոնի վրա պատահական չէ նաև ԼՂՀ հանցավորության երիտասարդացման միտումը, ինչի մասին արդեն նշել ենք: Փաստորեն, ԼՂՀ բարոյահոգեբանական մթնոլորտի առկա վիճակն ու զարգացման միտումները հանցավորության ապագա վիճակի վերաբերյալ լավատեսական կանխատեսումների հիմք չեն տալիս:

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§1. Հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակը

Վերջին ժամանակներս կրիմինալոգիական գրականության մեջ նկատվում է «հանցավորության կանխում» հասկացությունից հրաժարվելու միտում: Շատ կրիմինոլոգներ գտնում են, որ հնարավոր չէ կանխել այն, ինչն արդեն գոյություն ունի⁶⁶: Եվ իրոք, կանխել հանցավորությունը որպես զանգվածային սոցիալական երևույթ, հնարավոր չէ: «Կանխում» հասկացությունը տեղին է օգտագործել եզակի, կոնկրետ հանցագործության հետ կապված. հնարավոր է կանխել նախապատրաստվող հանցագործությունը, կամ հանցափորձի փուլում ձեռնարկել միջոցառումներ այն հաշվով, որ սկսված հանցագործությունը ավարտին չհասնի և այլն: Ինչ վերաբերում է հանցավորությանը, ապա առավելագույնը որ կարելի է անել՝ այն սոցիալապես տանելի մակարդակի վրա պահելն է, ինչին հնարավոր է հասնել հանցավորության նկատմամբ վերահսկողություն հաստատելու միջոցով: Այլ հարց է, որ հանցագործությունների կանխումը կարելի դիտարկել որպես հանցավորության նկատմամբ վերահսկողության բաղկացուցիչ մաս: Այնուամենայնիվ, սույն աշխատության շրջանակներում, հանցավորության կանխումը կդիտարկենք ավանդական իմաստով՝ թեև որպես հանցավորության նկատմամբ վերահսկողության բաղկացուցիչ մաս, սակայն ոչ թե որպես կոնկրետ հանցանքը խափանելու, այլ որպես հանցածին երևույթների վրա ներգործող պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որի նպատակն է նվազեցնել հանցավորության

⁶⁶ Տե՛ս Литвинов А.Н. Предупреждение преступлений и правонарушений. М., 2004, էջ 7:

ծավալները, հանցավորության հանրային վտանգավորության աստիճանը կամ հանցավորությունը պահել թույլատրելի սահմաններում⁶⁷:

Հանցավորության նկատմամբ վերահսկողությունը սոցիալական վերահսկողության մի մասն է: Գրականության մեջ սոցիալական վերահսկողությունը բնորոշվում է որպես հանցավորության և նորմայից շեղվող վարքագծի այլ ձևերի նկատմամբ հասարակական ներգործության հնարքների ու միջոցների համակարգ՝ վարքագծի նշված տեսակները վերացնելու կամ դրանց ծավալները փոքրացնելու նպատակով⁶⁸:

Սոցիալական վերահսկողությունը իրականացվում է հետևյալ միջոցներով ու եղանակներով՝

- 1) նորմերի ու արժեքների ձևավորում ու հռչակում.
- 2) օրենքների, ավանդույթների ու սովորույթների միջոցով այդ նորմերի ու արժեքների հասցեագրում հասարակության անդամներին.
- 3) այդ նորմերի ու արժեքների ընկալման, ընդունման ապահովում՝ դրանք պահպանողներին խրախուսելու և դրանք խախտողներին պատժելու միջոցով.
- 4) նորմայից շեղվող վարքագծի ձևերի կանխում⁶⁹:

Այս տեսական հիմքի վրա էլ ներկայացնենք ԼՂՀ-ում տիրող վիճակը:

Ինչպես արդեն նշել ենք, վերջին տասնամյակում ԼՂՀ հասարակության արժեքային համակարգում տեղի են ունենում բացասական փոփոխություններ. փողը և նյութականը դարձել են հիմնական արժեք, արմատավորվել է սպառողական հոգեբանությունը, ամեն գնով, այդ թվում՝ հակաբարոյական, հակաիրավական, հանցավոր միջոցներով նպատակներին հասնելու ձգտումը: Նպատակին հասնելու հակաբարոյական, հակաիրավական եղանակները դարձել են արժեք-միջոց: Այս ամենը հսկայական հանցածին ազդեցություն ունեն: Միևնույն ժամանակ գրեթե ոչինչ չի իրականացվում վիճակը շտկելու համար: Ինչպես և անցումնային

⁶⁷ Տե՛ս Гилинский Я. Девиантология. СПб., 2004, էջ 412–415, Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 204:

⁶⁸ Տե՛ս Гилинский Я. Девиантология. СПб., 2004, էջ 411:

⁶⁹ Տե՛ս Гилинский Я. Նշված աշխ. էջ 412:

Ժամանակաշրջան ապրող պետությունների գերակշիռ մասում, ԼՂՀ-ում ևս, գովազդի, առանձին մարդկանց ցուցադրական վարքագծի միջոցով նշված արժեքները ոչ միայն չեն պախարակվում, այլև ուղղակիորեն կամ անուղղակիորեն քարոզվում են: Դրությունը բարդանում է աղքատության ու գործազրկության մեծ չափերի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բևեռացման մեծ չափերի պատճառով: Էլ ավելի էական բացասական ազդեցություն է թողնում մարդկանց պահանջումներին և դրանք բավարարելու օրինական միջոցների միջև առկա հսկայական հակասությունը, որը, ինչպես արդեն նշել ենք, վերջին տարիներին գնալով ավելի ու ավելի մեծանում է: Նման պայմաններում հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը կախված է աղքատության և գործազրկության ծավալների էական նվազեցումից, սպառողական հոգեբանության չեզոքացումից, պահանջումները օրինական միջոցներով բավարարելու հնարավորությունների ընդլայնումից: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, վիճակը շտկելու համար գրեթե ոչինչ չի արվում:

Բացասական երևույթներ են առկա նաև ԼՂՀ բնակչության իրավագիտակցության ձևավորման գործընթացում: Ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ բնակչության իրավագիտակցությունը բավականաչափ ցածր մակարդակի վրա է: Բացի դա, բացասական վերաբերմունք է առկա իրավապահ մարմինների նկատմամբ: Մինչդեռ գրեթե ոչինչ չի արվում իրավունքի և օրենքի սոցիալական արժեքը բարձրացնելու, իրավապահ մարմինների նկատմամբ վստահությունը սերմանելու համար:

Կարելի է հավաստել, որ ԼՂՀ հասարակության արժեքային համակարգի ձևավորման գործում առկա են այնպիսի էական բացասական գործոններ, որոնք նվազեցնում են հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետության աստիճանը:

Նման պայմաններում հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոց կարող էր հանդիսանալ պատիժը: Թեև միշտ էլ նշվում է, որ պատիժը հանցագործությունների դեմ պայքարում երկրորդական նշանակություն ունի, այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատիժը

որոշակի և էական կանխիչ նշանակություն ունի: Որոշ հետազոտությունների համաձայն օրինապահ քաղաքացիների 19,6%-ից 20%-ը ձեռնպահ են մնում հանցանքի կատարումից՝ պատժի հանդեպ ունեցած վախի հետևանքով⁷⁰:

Բացի դա, պատժողական ճիշտ քաղաքականությունը, պատժի կատարման գործընթացի կատարելագործումը նույնպես կարող են էական դեր կատարել հանցավորության դեմ պայքարի գործում:

Ինչպիսին է իրավիճակը այս բնագավառում:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ թեև պատիժը շարունակում է կատարել իր կանխարգելիչ գործառույթը, այնուամենայնիվ, ԼՂՀ բնակչության իրավագիտակցության, իրավապահ մարմինների գործունեության արդեն նշված առանձնահատկությունների հետ կապված, այդ գործառույթը թուլացել է: Դրան առաջին հերթին նպաստում է այն, որ ԼՂՀ-ում չեն պահպանվում քրեական պատասխանատվության անխուսափելիության և օրենքի առջև հավասարության սկզբունքները: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հանցանք կատարած անձանց 60%-ից ավելին հավատացած են եղել, որ կարող են խուսափել քրեական պատասխանատվությունից, կամ, եթե նույնիսկ բացահայտվեն, ապա շատ մեղմ կպատժվեն: Այս հավատը հիմնված է եղել այն հանգամանքի վրա, որ հանցանք կատարած անձինք կամ հույսը դրել են իրենց ծանոթ հեղինակավոր անձանց օգնության վրա, ովքեր, իրենց կարծիքով, կարող էին «հարցերը լուծել» իրավապահ մարմինների հետ, կամ հույսը դրել են նրա վրա, որ իրենք անձամբ՝ կաշառքի միջոցով կարող են լուծել իրենց հարցերը, կամ էլ կարծել են, որ իրենք շատ լավ են թաքցրել հանցագործության հետքերը, ուստի այն չի բացահայտվի: Հանցանք կատարած անձանց մոտ 15%-ն էլ ընդհանրապես չի մտածել հնարավոր պատժի մասին: Պետք է նշել, որ կոռուպցիայի կամ հեղինակավոր ծանոթների օգնության վրա հույս դնողների 87%-ը ծառայողական կամ պաշտոնական դիրքի օգտագործմամբ շահադիտական հանցանք կատարողներն էին: Պատժի մասին ընդհանրապես չմտածողների 91%-ը բռնությամբ հանցանք կատարողներն էին:

⁷⁰ St'u Пoлyбинская С.В. Общее предупреждение: эмпирические исследования. / Криминология, уголовное право и прокурорский надзор // сборник научных трудов молодых ученых. М., 1990, т2 9:

Այն, որ պատժի սպառնալիքը շատ դեպքերում հետ չի պահում հանցագործությունից և այն, որ հանցանք կատարողների մեջ շատ են նրանք, ովքեր հույս են ունենում, որ կխուսափեն քրեական պատասխանատվությունից կոռուպցիայի կամ հովանավորչության միջոցով, պայմանավորված է ոչ միայն այս անձանց իրավագիտակցության ցածր մակարդակով, իրավապահ մարմինների գործունեության առանձնահատկություններից անտեղյակությամբ, այլև իրավապահ մարմինների գործունեության մեջ իրականում առկա, օբյեկտիվորեն գոյություն ունեցող այնպիսի փաստերով, որոնք թույլ են տալիս նման հույս ունենալ:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր նախադրյալներից է նաև ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարը: Սրան կարող է նպաստել դատապարտյալների ուղղման պատժի գործառույթը: Սակայն, որպեսզի պատիժը կատարի այդ գործառույթը, անհրաժեշտ է, որ, հատկապես ազատագրկման ձևով պատժի կատարման գործընթացը պատշաճ մակարդակի վրա լինի: Մինչդեռ ԼՂՀ ուղղիչ հաստատություններում տիրող վիճակը անմխիթարական է: Եվ խնդիրը ոչ այնքան դրանց նյութական, տեխնիկական վիճակն է, որքան դատապարտյալների հետ տարվող աշխատանքը: Ըստ էության այս հաստատություններում դատապարտյալների ռեսուրսային զանգվածի հետ կապված որևէ լուրջ աշխատանք չի տարվում: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ հանցանք կատարող անձանց կոնտինգենտում տարեցտարի ավելանում է նախկինում ուղղիչ հաստատությունում պատիժը կրած անձանց տեսակարար կշիռը: Այսպես, եթե 2001թ. նրանց տեսակարար կշիռը կազմել է 3,9%, ապա 2004թ.`6,8% և 2005թ.` 6,9%:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր ցուցանիշ է հանդիսանում գրանցված հանցավորության, բացահայտելիության, բացահայտված հանցագործների և դատվածության հարաբերակցությունը: Այս ցուցանիշները ցույց են տալիս իրավապահ մարմինների աշխատանքի արդյուվետության մակարդակը, նրանց գործունեության օրինականությունը, քրեական քաղաքականության առանձնահատկությունները⁷¹:

⁷¹ Տե՛ս Գաբուչյան Ա.Ա. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 195:

Գրանցված հանցավորության, հանցավորության բացահայտելիության, բացահայտված հանցագործների և դատվածության հարաբերակցությունը

տարիներ	2001	2002	2003	2004	2005
հանցավորություն	725	604	605	518	538
բացահայտված անձանց հարաբերակցությունը %-ով	78,3	83,7	77,2	96,5	88,5
դատվածությունը հանցավորության հարաբերակցությամբ %-ով	39,8	43,4	38,2	63,9	59,3
բացահայտելիությունը	92,7	88,8	93,7	91,1	89,8

Կրիմինալոգիական գրականության մեջ նշվում է, թե որքան այս կամ այն երկիրը մոտ է ժողովրդավարական զարգացմանը, այնքան ավելի քիչ իրավախախտողներ են բացահայտվում: Եվ դա կապված է այդ հասարակություններում հանցագործությունների առավել լրիվ գրանցման, ինչպես նաև մեղքի ապացուցման դժվարությունների հետ⁷²:

Եթե այս տեսանկյունից քննարկենք ԼՂՀ վիճակը, ապա ԼՂՀ-ն ավելի մոտ է տոտալիտար պետություններին: Այսպես, ճապոնիայում հանցանք կատարած անձանց և հանցավորության հարաբերակցությունը կազմում է 25,3%, Սինգապուրում՝ 35,7%, ՀՀ-ում վերջին տարիներին՝ 42%⁷³, մինչդեռ Հնդկաստանում 122,6%, Հարավային Կորեայում՝ 103,8%:

Ինչ վերաբերում է հանցավորության և դատվածության հարաբերակցությանը, ապա կրիմինալոգիական գրականության մեջ նշվում է, թե որքան քիչ անձինք են փաստացի հանցանք կատարածներից դատապարտվում իրական պատժի, այնքան

⁷² Տե՛ս Лунеев В.В. Преступность XX века: мировые, региональные и российские тенденции. М., 2005, Изд. 2-е, переработанное и дополненное. էջ 782:

⁷³ Պետք է նշել, որ ՀՀ կապակցությամբ նման վիճակը բացատրվում է ոչ թե երկրի ժողովրդավարացման մակարդակով, այլ հանցավորության լատենտայնությամբ և իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության անկմամբ. տե՛ս Габузян А.А. Уголовное наказание и контроль над преступностью. // Вопросы правоведения. Ереван, 2006, N 4, էջ 54:

ավելի մարդասիրական է արդարադատությունը: Եվ հակառակը՝ որքան շատ անձինք են դատապարտվում, այնքան արդյունավետ է աշխատում արդարադատությունը⁷⁴:

Եթե այս տեսանկյունից գնահատենք ԼՂՀ վիճակը, ապա պետք է արձանագրել, որ վերջին տարիներին արդարադատությունն այստեղ «խիստ արդյունավետ» է: Եթե ՀՀ-ում դատվածության և հանցավորության հարաբերակցությունը 41-43% է, ապա ԼՂՀ-ում՝ 59-63%:

Սակայն, մեր կարծիքով, հանցավորության և հանցանք կատարած անձանց, հանցավորության և դատվածության՝ ԼՂՀ-ում առկա հարաբերակցությունը ոչ այնքան իրավապահ մարմինների գործունեության և արդարադատության արդյունավետության, որքան հանցավորության մեջ լատենտայնության մակարդակի բարձրացման, քրեական օրենքի ընտրովի կիրառման արդյունք է:

Պատժողական քաղաքականության անարդյունավետության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ տարեցտարի ավելանում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց կողմից հանցանքի կատարման դեպքերը: Այսպես, եթե 2001թ. հանցանք է կատարել պատժից պայմանական վաղաժամկետ ազատված 2 անձ, ապա 2004թ.՝ 9 անձ, իսկ 2005թ.՝ 10 անձ:

Աչքի են զարնում նաև բացահայտելիության վերաբերյալ տվյալները: 90-ական թվականների սկզբներին այն կազմում էր 33-ից 58%, իսկ վերջին տարիներին 88-ից 92-93%: Իհարկե պատերազմական գործողությունների դադարեցման և կայունության ամրապնդմանը զուգընթաց, իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը և բնականաբար հանցագործությունների բացահայտելիության մակարդակը օբյեկտիվորեն պետք է բարձրանար: Բայց այդ համեմատական բարելավումը, մանավանդ հանցագործությունների բացահայտելիության տոկոսները, կասկած են հարուցում: Չարգացած արևմտյան երկրներում, որոնց իրավապահ մարմինները աչքի են ընկնում կադրային, նյութատեխնիկական հագեցվածությամբ, բացահայտելիությունը 30-40%-ի սահմաններում է: ԼՂՀ նման երկրներում որտեղ առկա են տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական, քաղաքական բազմաթիվ խնդիրներ, որտեղ իրավապահ մարմինները չեն վայելում բնակչության

⁷⁴ Տե՛ս Лунеев В.В., Եշված աշխ. էջ 789:

վատահոթությունը և չունեն համապատասխան կադրային, առավել ևս նյութատեխնիկական զինվածությունը, հանցագործությունների բացահայտելիության նման մակարդակը չի համապատասխանում իրականությանը: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ դա վիճակագրական մանիպուլյացիայի արդյունք է: Այս եզրակացությանն են հանգել անցումային ժամանակաշրջան ապրող երկրների հանցավորությունն ուսումնասիրող գրեթե բոլոր հետազոտողները⁷⁵:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության բաղկացուցիչ և երկի ամենակարևոր տարրն է հանդիսանում հանցավորության կանխումը:

Կանխման գործունեությունը ուղղված է հանցավորությանը, որը կրիմինալոգիական գրականության մեջ դիտարկվում է որպես համակարգային-կառուցվածքային երևույթ, որի տարրերի միջև առկա են օբյեկտիվ կապեր⁷⁶: Դրա համար էլ կանխարգելիչ գործունեությունը ինքն իր հերթին պետք է համակարգային բնույթ ունենա:

Պետք է նշել, որ կրիմինալոգիայում առկա են հանցավորության կանխման տարբեր հասկացություններ: Այսպես Գ.Ա. Ավանեսովը բնորոշում է հանցավորության կանխումը որպես պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որն ուղղված է հանցավորության և նրա պատճառների ու պայմանների վերացմանը⁷⁷:

Պ.Պ. Սիխայլենկոն և Ի.Ա. Գելֆանդը հանցավորության կանխումը բնորոշում են որպես սոցիալական գործընթաց, որը վերացնում, սահմանափակում կամ նվազեցնում է հանցավորությունը ծնող երևույթները⁷⁸:

Պետք է նշել, որ վերացնել հանցավորությունը և այն ծնող պատճառները հնարավոր չէ: Նախ՝ ինչպես արդեն նշել ենք, հանցավորությունը ոչ թե մեկ երկու երևույթի այլ այդ երևույթների և դրանց փոխազդեցության մեջ առկա հակասությունների արդյունք է: Ընդ որում, հանցածին ազդեցություն կարող են ունենալ նաև տվյալ հասարակության համար դրական երևույթները, որոնք որոշակի

⁷⁵ St'u Акутаев Р.М. Некоторые аспекты борьбы с искусственно-латентной преступностью // Гос-во и право, 1999, N3, էջ 45, Бахин В.П., Карпов Н.С., Цымбал П.В. Преступная деятельность: понятие, характеристика, принципы, изучение. Киев, 2001, էջ 25:

⁷⁶ St'u Долгова А.И. Преступность // Преступность и реформы в России, М., 1998. էջ 12, 21:

⁷⁷ St'u Аванесов Г.А. Криминология и социальная профилактика. М., 1980, էջ 406:

⁷⁸ St'u Михайленко П.П., Гельфанд И.А. Предупреждение преступлений — основа борьбы за искоренение преступности. М., 1964:

հակասություններ են առաջացնում: Իսկ վերացնել հասարակության մեջ առկա հակասությունները հնարավոր չէ: Բացի դա, հանցավոր վարքագծի հիմքում ընկած են նաև մարդու կենսահոգեբանական առանձնահատկությունները, որոնք նույնպես հնարավոր չէ վերացնել⁷⁹: Դրա համար էլ հասարակությունը չի կարող վերացնել հանցավորությունը և այն ծնող գործոնները, բայց կարող է պահել հանցավորությունը սոցիալապես տանելի մակարդակի վրա⁸⁰:

Վերոգրյալը թույլ է տալիս բնորոշելու հանցավորության կանխումը որպես հանցածին երևույթների վրա ներգործող պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որի նպատակն է նվազեցնել հանցավորության ծավալները, հանցավորության հանրային վտանգավորության աստիճանը կամ հանցավորությունը պահել թույլատրելի սահմաններում:

Հանցավորության կանխման միջոցառումները դասակարգվում են տարբեր չափանիշներով: Ըստ մակարդակի առանձնացնում են ընդհանուր սոցիալական և հատուկ կրիմինալոգիական կանխումը:

Ընդհանուր սոցիալական կանխումը իրենից ներկայացնում է պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որոնք նպատակաուղղված չեն անմիջականորեն հանցածին երևույթներին: Դրանք հասարակության տարբեր ոլորտների դիմամիկ ու կայուն զարգացումն ապահովելու նպատակ հետապնդող միջոցառումներ են, որոնք սակայն անուղղակիորեն ազդում են նաև հանցածին երևույթների վրա: Այսպես, տնտեսության զարգացմանը, մարդկանց իրավունքների ու ազատությունների ապահովմանը, մշակույթի, բարոյականության մակարդակի բարձրացմանը, օրինականության ապահովմանը, բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը ուղղված միջոցառումները հսկայական հակահանցածին նշանակություն ունեն⁸¹:

Հատուկ կրիմինալոգիական կանխման միջոցառումները անմիջականորեն ուղղված են հանցավորությանը նպաստող գործոններին: Բայց պետք է նշել, որ իրենց

⁷⁹ Տե՛ս Գաբուзян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 204:

⁸⁰ Տե՛ս Лунеев В.В. Преступная мифология. Что скрывалось под покровом секретности // Известия, 1991, 15 апр.

⁸¹ Տե՛ս Литвинов А.Н. Предупреждение преступлений и правонарушений. М., 2004, էջ 204-205:

բովանդակությամբ դրանք էապես չեն տարբերվում ընդհանուր սոցիալական միջոցառումներից: Միակ և հիմնական տարբերությունն այն է, որ հատուկ կրիմինալոգիական միջոցառումները մասնագիտացված և նպատակաուղղված բնույթ ունեն⁸²:

Քանի որ ընդհանուր սոցիալական և հատուկ կրիմինալոգիական կանխումը հստակ սահմանազատվում են միայն վերը նշված չափանիշով, ապա ԼՂՀ վիճակի ուսումնասիրության ժամանակ մենք դրանք չենք առանձնացնի: Նման մոտեցումը առկա է նաև այլ հեղինակների մոտ⁸³:

Ընդհանուր սոցիալական կանխման միջոցառումների մեջ առաջնային տեղ են զբաղեցնում տնտեսական բնույթի միջոցառումները, որոնք նպատակաուղղված են երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, աղքատության նվազեցմանը, գործազրկության ծավալների փոքրացմանը: Վերջին տարիների շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների աճի ֆոնի վրա, ընդհանուր տնտեսական միջոցառումների դերը ավելի է կարևորվում: Պետք է նշել, որ տնտեսական բնույթի միջոցառումների դերը չի սահմանափակվում միայն հանցավորության այնպիսի գործոնների վրա ազդեցությամբ, ինչպիսիք են աղքատությունը, գործազրկությունը, սոցիալ-տնտեսական բևեռացումը: Տնտեսական հզորությունը ընդհանրապես հանցավորության կանխման գործընթացի կազմակերպման կարևոր գործոններից է, որովհետև կանխման միջոցառումները կապված են մեծ ծախսերի հետ:

Շատ քրեագետներ գտնում են, որ հանցավորության, և մանավանդ շահադիտական հանցավորության կանխման գործում, լուրջ հաջողությունների կարելի է հասնել առաջին հերթին մարդկանց բարոյական դաստիարակության միջոցով: Այս քրեագետները գտնում են, որ մարդկանց կենսամակարդակի բարձրացումը ինքնին, առանց նպատակաուղղված բարոյական և

⁸² Տե՛ս, Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я. Криминологическая профилактика: теория, опыт, проблемы. М., 2001, էջ 31:

⁸³ Տե՛ս, Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я., նշված աշխ., Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период.

գաղափարախոսական ներգործության, ոչ միայն չի նպաստի հանցավորության կանխմանը, այլև կարող է սպառողական հոգեբանություն ձևավորել⁸⁴:

Ներկայումս նման մոտեցումը որոշ քրեագետների կողմից քննադատվում է որպես չափազանց գաղափարայնացված: Բացի դա, որոշ քրեագետներ գտնում են, որ նպատակաուղղված գաղափարախոսական ներգործությունը, որը «պետք է բացահայտի նյութական բարիքների կուտակման, հարստանալու ձգտման ամբողջ ողորմելիությունը»⁸⁵, իրականում քայքայում է բարոյական կատարելագործման բոլոր հիմքերը, որովհետև հոգևորի զարգացման համար անհրաժեշտ է համապատասխան նյութական հիմք⁸⁶:

Կարծում ենք, որ տնտեսական հզորությունը, մարդկանց կենսամակարդակի բարձրացումը իրոք հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետության, հանցագործությունների կանխման շատ կարևոր գրավական է: Ինչպես արդեն նշեցինք, թեկուզ հանցավորության կանխման կազմակերպման առումով պետության տնտեսական հզորությունը շատ կարևոր գործոն է: Բացի դա, իրոք, առանց համապատասխան նյութական հիմքի դժվար է զարգացնել հոգևոր ոլորտը: Բավական է նշել, որ հոգևոր ոլորտի զարգացման համար անհրաժեշտ այնպիսի հաստատությունների առկայությունը, ինչպիսիք են գրադարանները, թատրոնը, կինոն, համերգասրահները, կախված է տնտեսական գործոններից: Էլ չենք խոսում այն մասին, որ բարձր արվեստին հաղորդակից լինելու համար անհրաժեշտ է, որ մարդիկ նյութական միջոցներ ունենան դրա համար, այլ ոչ թե հազիվ իրենց առօրյա սննդի հարցը լուծեն: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ ինչպես բարոյական և գաղափարախոսական նպատակաուղղված ներգործությունը, այնպես էլ բնակչության նյութական մակարդակի բարձրացումը ինքնին չեն կարող հակահանցածին ազդեցություն ունենալ. դրանք պետք է զուգակցվեն: Շուկայական տնտեսության ներդրման և զարգացման վերջին տարիների փորձը ցույց է տալիս

⁸⁴ Տե՛ս Елисеев С.А. Вопросы теории и практики предупреждения корыстных преступлений. Томск, 1989, էջ 96-102:

⁸⁵ Տե՛ս Елисеев С.А. Вопросы теории и практики предупреждения корыстных преступлений. Томск, 1989, էջ 104:

⁸⁶ Տե՛ս Миненок М.Г., Миненок Д.М. Корысть. криминологические и уголовно-правовые проблемы. СПб, 2001, էջ 271:

ասվածի ճշմարտացիությունը: Ինչպես բազմիցս նշել ենք, սպառողական հոգեբանությունը, փողի և նյութականի վերածվելը առաջնային արժեքի խիստ բացասական ազդեցություն ունեն և չենք կարծում, թե առանց մշակույթի և բարոյականության ոլորտում որոշակի քայլեր անելու, այս վիճակը զուտ բարեկեցության մակարդակի բարձրացմանը զուգընթաց կշտկվի:

Պետք է նշել, որ տնտեսական բնույթի կանխման միջոցառումների բնագավառում որոշակի հաջողություններ առկա են: Հետզհետե վերականգնվում է պատերազմից ավերված տնտեսությունը, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների շահագործման, մասնավոր ոլորտի ձևավորման հետ մեկտեղ ստեղծվում են աշխատատեղեր, նկատելիորեն ավելանում են բնակչության դրամական եկամուտները: Այսպես, 2003թ. բնակչության միջին եկամուտը մեկ շնչի հաշվով 2000թ. համեմատ ավելացել է 70%-ով:

Միևնույն ժամանակ դեռևս բարձր են մնում աղքատության և գործազրկության մակարդակները: Բացի դա, սովերային տնտեսության մեծ չափերի և տնտեսության կլանային կառուցվածքի պատճառով, տնտեսական որոշակի աճը անդրադառնում է միայն բնակչության որոշակի խավի կենսամակարդակի վրա:

Սրա հետ կապված խիստ հրատապ է դառնում պաշտոնեկան հանցագործությունների, «սպիտակ օձիքավորների» հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, իրականում որևէ պայքար այս հանցագործությունների դեմ չի տարվում: Դեռ ավելին՝ այդ պայքարը կազմալուծված է: Այդպիսի իրավիճակին նպաստում է ոչ միայն այն հանգամանքը, որ ԼՂՀ-ում չեն ապահովված օրենքի առջև հավասարության, քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքները, շատ ուժեղ է ազգակցական, ընկերական կապերի ազդեցությունը, այլև այն, որ մինչ այժմ ԼՂՀ-ում չի ընդունվել կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված հատուկ օրենսդրություն, որը այդ երևույթի դեմ պայքարի չնայած ոչ ամենազլխավոր, սակայն էական գործոններից մեկն է: Ջարգացած երկրների, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հաջողությունների հասած երկրների փորձը ցույց է տալիս, որ առանց հատուկ օրենսդրության և կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ մարմնի առկայության այդ երևույթի դեմ

պայքարում հաջողության հասնելը բավականաչափ դժվար է: Մինչդեռ ԼՂՀ-ում ոչ միայն նման օրենսդրություն չկա, այլև նույնիսկ այն ստեղծելու ուղղությամբ դեռևս ոչինչ չի ձեռնարկվում:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր միջոցներից մեկն է վիկտիմալոգիական կանխումը, որը ներկայումս դարձել է կրիմինալոգիայի զարգացման հիմնական ուղղություններից մեկը: Սույն ատենախոսության շրջանակների մեջ չի մտնում վիկտիմալոգիական խոր ուսումնասիրությունների իրականացումը, կամ վիկտիմալոգիական հիմնախնդիրների բացահայտումը: Նշենք միայն, որ թե Ռուսաստանում, թե արևմուտքի զարգացած երկրներում ներկայումս ինտենսիվ ուսումնասիրություններ են իրականացվում հանցագործությունից տուժողի բարոյահոգեբանական առանձնահատկությունները, հանցագործի և զոհի հարաբերությունների առանձնահատկությունները, վիկտիմային վարքագծի դրդապատճառները, վիկտիմիզացիայի մեխանիզմը, հանցագործությունից տուժելու տիպական իրադրությունները բացահայտելու ուղղությամբ, ինչը նպաստում է հանցագործությունների կանխման արդյունավետության բարձրացմանը⁸⁷: Ցավոք ԼՂՀ-ում մինչև այժմ որևէ այսպիսի հետազոտություն չի իրականացվել: Բնականաբար ոչ իրավապահ մարմինների աշխատակիցները, ոչ էլ բնակչությունը այս բնագավառի բավարար գիտելիքներ չունեն: Մինչդեռ, ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ, վիկտիմալոգիական կանխումը, զուգորդվելով կանխման ավանդական միջոցների հետ, զգալիորեն ընդլայնում է կանխման հնարավորությունները, բարձրացնում է հանցավորության կանխման արդյունավետությունը, կանխման գործունեությանը տրամաբանական ամբողջականություն է հաղորդում: Արհամարիել վիկտիմալոգիական կանխումը, անտեսել այն, նշանակում է կիսատ-պռատ իրականացնել հանցավորության դեմ

⁸⁷ Վիկտիմալոգիայի, դրա հիմնական հասկացությունների, վիկտիմալոգիական հետազոտությունների ու դրանց արդյունքների մասին ավելի մանրամասն տե՛ս Рыбальская В.Я. Виктимологические исследования в системе криминалистической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. Вып. 33, М., 1980, Минская В.С. Уголовно-правовой и нравственно-психологический аспект виктимологии // Сов. гос. и право, 1985, N7, Ривман Д.В. Устинов В.С. Виктимология. Нижний Новгород, 1998, Алексеев А.И. Как защитить себя от преступника? М., 1990, Шнайдер Г.Й. Криминология. М., 1994, Anna Werges, Crime victims in the European Union. Sweden, 1999, Kauko Aromaa, Markku Heiskanen, Crime risks in Finland. Helsinki, 2000.

պայքարը⁸⁸: Եվ իրոք, վիկտիմոլոգիական հետազոտությունները այնպիսի օրինաչափություններ են բացահայտում, որոնց օգտագործումը հանցագործությունների կանխարգելման ոլորտում կարող է էական դրական արդյունքներ տալ: Օրինակ, ՀՀ-ում իրականացված վիկտիմոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ դեպքերի զգալի մասում հանցավորը և տուժողը ծանոթ են եղել: Ընդ որում, դրանց 29%-ի դեպքում նրանց միջև հարաբերությունները կոնֆլիկտային բնույթ են կրել: Իսկ դա նշանակում է, որ եթե համապատասխան իրավապահ մարմինները ժամանակին արձագանքեին երկարատև կոնֆլիկտին, ապա հնարավոր կլիներ կանխել հանցագործությունը: Կամ, հետազոտությունները բացահայտել են, որ ականատեսների ներկայությամբ հանցագործության դեպքերի 27%-ի դեպքում վերջիններիս ակտիվ միջամտության շնորհիվ հնարավոր է եղել կանխել վնասի պատճառումը և հանցագործությունը հանցափորձի փուլում ավարտվել է: Բացի դա, պարզվել է, որ դեպքերի 50%-ում տուժողի ակտիվ դիմադրությունը կանխել է հանցագործությունը, իսկ 18,2%-ում հակառակը՝ նպաստել է ավելի մեծ վնաս պատճառելուն, ինչը վկայում է այն մասին, որ տուժողը, վիկտիմոլոգիական գիտելիքների պակասի պատճառով, չի կարողացել ճիշտ կողմնորոշվել իրադրության մեջ, հաշվի չի առել դրա առանձնահատկությունները⁸⁹: Հանցագործությունների կանխման տեսակետից բացահայտված անչափ կարևոր օրինաչափություն է նաև այն, որ հանցագործությունների տարբեր տեսակների կապակցությամբ էական դեր է կատարել անձնական անվտանգության նկատմամբ տուժողի թեթևամիտ վերաբերմունքը (օրինակ՝ կողոպուտների 40%-ում, ավազակությունների 55%-ում և այլն)⁹⁰:

Նման հետազոտությունների իրականացումը ԼՂՀ-ում կարող էր բացահայտել վիկտիմիզացիայի այստեղ առկա հնարավոր առանձնահատկությունները և մեծապես

⁸⁸ Տե՛ս Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я., նշված աշխ., էջ 109-110:

⁸⁹ Տե՛ս Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. էջ 216:

⁹⁰ Նույն տեղում, էջ 217:

նպաստել հանցագործությունների կանխման արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր բաղադրիչներից է նաև տուժողին պատճառված վնասի հատուցումը: Պետք է նշել, որ այս ոլորտը բավականաչափ վատ վիճակում է: Եթե նույնիսկ տուժողին հաջողվում է քաղհայցի միջոցով հասնել իրեն պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դատական ակտի կայացման, ապա իրական փոխհատուցում շատ հազվադեպ է լինում: Սրա հետ կապված ճիշտ կլիներ հատուկ օրենք ընդունել տուժողին պատճառած վնասի հատուցման մասին: Շատ արտասահմանյան երկրներում այդպիսի օրենքներ գործում են: Մասնավորապես, ԱՄՆ բոլոր նահանգներում, ինչպես նաև ֆեդերալ մակարդակով ընդունված են օրենսդրական ակտեր, որոնք ոստիկանության և իրավապահ այլ մարմինների աշխատակիցների համար սահմանում են տուժողի հետ վարվելու կանոններ: Շատ ավելի կարևոր ու արդյունավետ են տուժողներին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ տարբեր ազգային ծրագրերը:

Վերոգրյալի հետ կապված խիստ հրատապ է դառնում ներկայումս իրավաբանական գրականության մեջ ձևավորված ու քննարկվող «հատուցման կամ վերականգնողական իրավունքի», «վերականգնողական արդարադատության», գաղափարը: «Հատուցման կամ վերականգնողական» իրավունքի հիմնական դրույթները հանգում են հետևյալին. 1) հանցավորի մեղավորության և դրա աստիճանի որոշման ժամանակ առաջնային նշանակություն ունի նրա կողմից մեկ ուրիշին, հասարակությանը կամ պետությանը պատճառված վնասի չափը, 2) հանցավորի համար պետք է պարտականություն սահմանվի նյութական ձևով հատուցելու պատճառված վնասը, առանց նրան ազատությունից զրկելու, բացառությամբ այն դեպքերի, երբ նա իրոք իրենից բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում, 3) հատուցման պահանջը կարող է ներկայացվել դատարանի միջոցով՝ տուժողի կամ այլ անձի կողմից⁹¹: Այս հայեցակարգը բավականաչափ պրագմատիկ և օգտակար է թվում: Նախ, այն թույլ է տալիս տնտեսելու քրեաիրավական հարկադրանքը, ինչն իր հերթին թույլ է տալիս խնայելու պետության նյութական

⁹¹ Ст'ю Минин Б.А. Возвратное право. М., 2007, էջ 19:

միջոցները: Բացի դա, նման մոտեցումը զերծ է պահում անձանց ավելորդ ստիգմատիզացիայից և նապատում է ռեցիդիվի մակարդակի նվազեցմանը: Վերջապես, սա հնարավորություն է տալիս արդյունավետորեն հատուցելու հանցավորությունից կրած վնասները: Կարծում ենք ճիշտ կլիներ, որ ապագայում քրեաիրավական քաղաքականությունը հենց այս ուղղությամբ զարգանար:

Կրիմինալոգիական կանխման կարևոր ուղղություններից մեկը զենքի ապօրինի շրջանառության նկատմամբ վերահսկողության իրականացումն է: Հատկապես ԼՂՀ համար, կապված պատերազմական վիճակի հետ, սա առավել քան արդիական խնդիր է: Պաշտոնական վիճակագրության տվյալները ցույց են տալիս, որ վերջին տարիներին զենքի գործադրմամբ հանցագործությունների դեպքերը չնչին տոկոս են կազմում: Այսպես, 2001-ից մինչև 2003թ. զենքի գործադրմամբ հանցագործության ոչ մի դեպք չի գրանցվել, 2004թ. զենքի գործադրմամբ հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցավորության 1%-ը, իսկ 2005թ.՝ 0,5%-ը: Վերջին տարիներին նկատվում է նաև զենքի ապօրինի պատրաստման և կրման դեպքերի նվազում: Այսպես, 2005թ. սրանք 2001թ. համեմատ կրճատվել են 50%-ով: Նման իրավիճակը հուսադրող կլիներ, եթե պաշտոնական վիճակագրությունը արտացոլեր իրականությունը: Եթե զենքի գործադրմամբ կատարվող հանցագործությունների կապակցությամբ պաշտոնական վիճակագրության տվյալները քիչ թե շատ հավաստի են, ապա զենքի ապօրինի պատրաստման և կրման առումով դրանք չեն համապատասխանում իրականությանը: Պատերազմական իրավիճակի հետ կապված ԼՂՀ բնակչության գերակշիռ մասը զենքի և զինամթերքի բավականաչափ մեծ պաշարներ ունեն կուտակած: Ընդ որում, շատ դեպքերում դրա վրա «աչք են փակում», ինչը որոշակի առումով հասկանալի է, սակայն կարող է ապագայում բացասական ազդեցություն թողնել հանցավորության կառուցվաքծի վրա:

Հանցավորության կանխման գործում էական նշանակություն ունի ոստիկանության գործունեությունը: Ինչպես արդեն նշել ենք, քրեական պատիժը, թեև ոչ հիմնական, սակայն էական դեր է կատարում հանցավորության նկատմամբ վերահսկողության, հանցագործությունների կանխման գործում: Էլ ավելի կարևոր է քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովումը:

Այս տեսակետից ոստիկանության գործունեությունը, որից մեծ չափով կախված է հանցագործությունների և հանցանք կատարող անձանց բացահայտումը, մեծ նշանակություն ունի:

Նշված գործունեության արդյունավետությունը կախված է ոստիկանության համապատասխան տեխնիկական, կադրային և նյութական ապահովվածությունից, ոստիկանության և բնակչության համագործակցությունից: Ցավոք, ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ-ում ոստիկանության տեխնիկական և նյութական ապահովվածությունը պատշաճ մակարդակի վրա չէ: Սակայն էլ ավելի անմխիթարական է բնակչության և ոստիկանության համագործակցության վիճակը: Մենք արդեն բերել ենք ոստիկանության նկատմամբ անվստահությունն արտացոլող տվյալները: Այստեղ ավելացնենք միայն, որ այն հարցին, թե որոնք են իրավապահ մարմինների աշխատանքում առկա թերությունների պատճառները, հարցման ենթարկված քաղաքացիների 61,6%-ը նշեց իրավապահ մարմիններում առկա կոռուպցիան, 20,8%-ը՝ իրավապահ մարմինների աշխատակիցների ցածր մասնագիտական պատրաստվածությունը, 9,1%-ը՝ իրավապահ մարմինների աշխատակիցների անտարբերությունը, 3,5%-ը՝ իրավապահ մարմինների աշխատակիցների ցածր աշխատավարձը, 5%-ը վախը: Ինչպես տեսնում ենք, հարցման ենթարկվածների գերակշիռ մասը, իրավապահ մարմինների աշխատանքում առկա թերությունների պատճառների մեջ նշում են ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ գործոնները:

Բացի հանցագործությունների բացահայտմանը նպաստելուց, ոստիկանության գործունեության կարևոր մաս է կազմում հանցագործությունների կանխումը: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելով, ոստիկանությունը բացահայտում է հանցավորության պատճառներն ու պայմանները, հանցագործություն ծրագրավորող և նախապատրաստող անձանց: Տեղամասային տեսուչները իրականացնելով վերահսկողություն իրենց կողմից սպասարկվող տարածքում, մեծ հնարավորություններ ունեն բացահայտելու հակահասարակական, հանցավոր ուղին բռնած անձանց, բացահայտելու կոնֆլիկտային իրադրությունները և միջոցառումներ ձեռնարկելու՝ կոնֆլիկտները մեղմելու, նշված անձանց նկատմամբ

անհատական կանխման միջոցառումներ իրականացնելու համար: Կարևոր կանխիչ գործունեություն կարող է իրականացանել պարեկա-պահակային ծառայությունը:

Մինչդեռ, պետք է նշել, որ իրականում ոստիկանությունը ավելի շատ արձագանքում է արդեն կատարված դեպքերին, քան կանխում դրանք: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ոստիկանությունը կարողանում է կանխել հանցագործությունների 0,2-ից 0,3%-ը:

Ոստիկանության կողմից իրականացվող հատուկ կրիմինալոգիական կանխման արդյունավետության կարևորագույն պայմաններից մեկը հանցավորության, հանցագործությունների առանձին տեսակների վերաբերյալ ճշգրիտ կրիմինալոգիական տեղեկատվություն ունենալն է: Անչափ կարևոր են, օրինակ, հանցավորության կառուցվածքի և շարժընթացի, հանցագործությունների առանձին տեսակների տարածվածության, կատարման եղանակների, տեղի, ժամանակի, տուժողների առանձնահատկությունների մասին տվյալները, դրանց ամփոփումն ու վերլուծությունը: Այս ամենի համար անհրաժեշտ են սիստեմատիկ կրիմինալոգիական խոր հետազոտություններ: Մինչդեռ, պետք է արձանագրել, որ ԼՂՀ-ում կրիմինալոգիական լուրջ հետազոտություններ չեն իրականացվում, ինչը կանխման գործընթացը զրկում է լուրջ գիտական հիմնավորումից: Բացի դա, ինչպես արդեն նշել ենք, հանցավորության վիճակի, հանցագործությունների բացահայտելիության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները վիճակագրական մանիպուլյացիայի, հանցագործությունները չգրանցելու արդյունք են: Սրա հետ կապված շատ կրիմինոլոգներ առաջարկում են ոչ միայն բարելավել ոստիկանության աշխատանքը, մշակել դրա գնահատման նոր չափանիշներ, այլև ստեղծել հանցագործությունների գրանցման՝ իրավապահ մարմիններից անկախ գործող ծառայություն⁹²:

Կրիմինալոգիական գրականության մեջ որպես հանցագործությունների կանխման առանձին մակարդակ է առանձնացվում անհատական կանխումը: Այս

⁹² Տե՛ս Степашин С.В. Современная Россия и сотрудничество в борьбе с международной преступностью // Вестник Санкт-Петербургского университета МВД России, 1999, N1, էջ 4, Еркенов С.Е. Взаимодействие правоохранительных органов СНГ при раскрытии и расследовании транснациональных преступлений. Автореф. дис. докт. наук., М., 2000, էջ 27:

մակարդակը ենթադրում է որոշակի աշխատանք կոնկրետ այն անձանց հետ, ում վարքագիծը հակասում է իրավական նորմերին: Հանցավորի անձի կայացման աստիճանից կախված անհատական կանխումը լինում է չորս տեսակի⁹³: Որոշ հեղինակներ առանձնացնում են անհատական կանխման յոթ տեսակ⁹⁴, բայց մեր կարծիքով առավել օպտիմալը չորսն է:

Առաջին տեսակը վաղ կանխումն է, որն իրականացվում է հիմնականում այն օբյեկտների նկատմամբ, որոնք նպաստում են անձի մեջ հանցածին, հակասոցիալական հատկությունների ձևավորմանը: Այլ խոսքով, վաղ կանխումը ենթադրում է անձի միկրոմիջավայրի առողջացմանն ուղղված միջոցառումների համակարգ: Վաղ կանխումը ներառում է նաև այն անձի բարոյական հատկանիշների շտկմանն ուղղված միջոցառումներ, ում վարքագծում առկա բարոյական նորմերից շեղումները վկայում են նրա բարոյական դեգրադացիայի և ապագայում վարքագծի հանցավոր ձևի ընտրության հավանականության մասին:

Երկրորդ տեսակը իրականացվում է այն անձանց նկատմամբ, ովքեր արդեն հանցանք են կատարել կամ պատրաստվում են կատարել: Եթե հանցագործությունն ընթացքում է, ապա կանխման նպատակը այն նախապատրաստության կամ հանցափորձի փուլում խափանելն է, եթե հանցանքն արդեն կատարվել է, ապա հիմնական նպատակը անձի մոտ զղջման զգացողություն առաջացնելն է:

Երրորդ տեսակը ընդգրկում է այն անձանց, ովքեր արդեն քրեաիրավական ներգործության են ենթարկվել: Սա հիմնականում իրականացվում է քրեակատարողական հաստատություններում:

Վերջապես չորրորդ տեսակը ընդգրկում է պատիժը կրած անձանց. սա հետքավական կանխումն է⁹⁵: Պետք է նշել, որ երրորդ և չորրորդ տեսակները կարելի է միավորել մեկ ընդհանուր տեսակի մեջ՝ ռեցիդիվի կանխում: Ռեցիդիվի կանխման դեպքում կանխարգելիչ միջոցառումները իրականացվում են այն անձանց նկատմամբ, ովքեր 1) պատիժ են կրում, 2) դատապարտվել են՝ պատիժը

⁹³ Տե՛ս Бурлаков В.Н., Орехов В.В. Индивидуальное предупреждение преступлений. Вопросы теории и практики. Изд-во ЛГУ, Л., 1988, էջ 32-36:

⁹⁴ Տե՛ս Криминология / Под ред. Н.Ф. Кузнецовой, Г.М. Миньковского, М., 1994, էջ 162-163:

⁹⁵ Տե՛ս Криминология / Под ред. В.Н. Бурлакова, Н.М. Корпачева, СПб., 2002, էջ 180:

պայմանականորեն չկիրառելով, 3) պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել են, 4) ոչ արդարացուցիչ հիմքերով ազատվել են քրեական պատասխանատվությունից: Բացի նշվածից ռեցիդիվի կանխման միջոցառումները պետք է ընդգրկեն նաև այն անչափահասներին ովքեր ազատվել են քրեական պատասխանատվությունից դաստիարակչական բնույթի հարակադրանքի միջոցներ կիրառելով, կամ ազատվել են պատժից՝ հատուկ ուսումնադաստիարակչական կամ բուժդաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով:

Պետք է նշել, որ եթե հատուկ կրիմինալոգիական կանխման ոլորտում ինչ-որ աշխատանք իրականացվում է, որովհետև չնայծ խիստ ցածր արդյունավետությանը, այնուամենայնիվ օպերատիվ-հետախուզական գործունեության, պարեկապահակային ծառայության կամ տեղամասային տեսուչների գործունեության արդյունավետությունը զրո չէ, ապա անհատական կանխման ոլորտում կարելի է զրոյական արդյունավետություն արձանագրել: Խոսքը հատկապես առաջին, երրորդ և չորրորդ մակարդակների մասին է, որովհետև օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում երկրորդ մակարդակում (հանցագործությունների խափանումը նախապատրաստության կամ հանցափորձի փուլում), ինչ-որ արդյունք ստացվում է: Այն, որ անհատական կանխման երրորդ և չորրորդ տեսակները գրեթե ամբողջովին կազմալուծված են կասկած չի հարուցում. հանցավորության և հանցանք կատարող անձանց մեջ ռեցիդիվի տեսակարար կշռի անընդհատ ավելացումը դրա վառ ապացույցն է: Ինչ վերաբերում է առաջին մակարդակին, երբ կանխումը պետք է ուղղվի հակասոցիալական դիրքորոշում ցույց տվող անձի անմիջական միջավայրին, ապա ցավով պետք է արձանագրել, որ իրավապահ մարմինների աշխատակիցների անտարբերության, մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի, ֆինանսական միջոցների սղության հետևանքով, կանխման այս տեսակի իրականացման ուղղությամբ ոչինչ չի արվում: Մինչդեռ, ինչպես արդարացիոեն նշվում է գրականության մեջ, կանխման միջոցառումների ծանրության կենտրոնը

պետք է ընկած լինի անհատական կանխման ոլորտում, և առաջնայնությունը պետք է տրվի վաղ կանխմանը⁹⁶:

Պետք է նշել, որ հանցագործությունների կանխման արդյունավետությունը կախված է բազմաթիվ հանգամանքներից, բայց առաջնային նշանակություն ունի կանխման գործունեության գիտական և սոցիալական հիմնավորվածությունը: Հանցագործությունների կանխումը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել միջոցառումների հստակ համակարգ: Նախ, անչափ կարևոր է կանխման կազմակերպումը, որը ենթադրում է հստակ և իրատեսական նպատակի առաջադրում, կանխման սուբյեկտների շրջանակի որոշում և նրանց միջև համագործակցության ապահովում: Բացի դա, անչափ կարևոր է հանցագործությունների կանխման հստակ ծրագրի մշակումը, ինչը կարելի է անել կրիմինոլոգիական կանխատեսման հիման վրա: Վերջինս հանցավորության, դրա առանձին տեսակների զարգացման միտումների և ապագա հնարավոր վիճակի, ինչպես նաև անհատի կողմից ապագայում վարքագծի հանցավոր ձևի ընտրության հնարավորության մասին պատկերացումն է: Կրիմինոլոգիական կանխատեսումը ենթադրում է վիճակագրական բազմազան և հսկայածավալ նյութի հավաքում, վերլուծություն, ամփոփում, սոցիոլոգիական, մաթեմատիկական մեթոդների կիրառում: Ներկայումս կրիմինոլոգիայում քննարկվում է նաև կանխման մոնիտորինգի գաղափարը, ինչը ենթադրում է հանցավորության կամ դրա առանձին տեսակների նախկին և ներկա վիճակի մասին հստակ տեղեկատվության հիման վրա , հարկ եղած դեպքում, կանխման միջոցառումների ծավալի, բովանդակության և ուղղվածության փոփոխություն, կանխման մարտավարության կամ ռազմավարության վերանայում:

Անհատական կանխման ոլորտում, բացի վերը նշվածից, անչափ կարևոր է ուստիկանության կողմից բնակչության հետ տարվող աշխատանքը. այն անձանց հայտնաբերումն ու հաշվառումը, ովքեր կանխարգելիչ ներգործության անհրաժեշտություն ունեն, տարբեր անձանց նկատմամբ կանխարգելիչ

⁹⁶ St'u Алексеев А.И. Индивидуальная профилактика рецидива преступлений. М., 1975, Филимонов О.В. Индивидуальная профилактика (правовые проблемы). Томск, 1985, Саркисов Г.С. Индивидуальная профилактика преступлений. Ереван, 1986:

միջոցառումների տարբերակված իրականացումը, ընտանեկան-կենցաղային ոլորտում հանցածին իրադրությունների, գործոնների բացահայտումն ու դրանց չեզոքացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը և այլն:

Ակնհայտ է, որ հանցագործությունների կանխումը գիտականորեն հիմնավորված գործունեություն է ենթադրում: Այն պահանջում է կազմակերպական, հետազոտական, վերլուծական, կադրային, նյութատեխնիկական, ֆինանսական, իրավական, սոցիալական բազմազան միջոցառումների իրականացում և այս առումով ԼՂՀ-ում վիճակը դեռևս հուսադրող չէ, ինչը շտկելու համար, մեր կարծիքով, դեռևս շատ բան կա անելու:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության թերություններից է նաև այն, որ ԼՂՀ-ում չկա հանցավորության նկատմամբ վերահսկողության պետական ծրագիր: ՀՀ-ում, շատ երկրների օրինակով, այդպիսի ծրագիր արդեն ստեղծվել է: Դրանում ամրագրվել են

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք հավաստել, որ հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակը ԼՂՀ-ում աչքի է ընկնում բազմաթիվ թերություններով ու բացթողումներով: Ընդ որում, թերություններն առկա են վերահսկողության բոլոր եղանակների ու միջոցների ոլորտում՝ թե արժեքային համակարգի ու նորմերի ձևավորման, թե դրանց հասցեագրման ու ամրապնդման, թե հանցագործությունների կանխման: Ու թեև հանցավորության մակարդակը ԼՂՀ-ում սպառնալից չափեր չունի և կարծես սպառնալիքի տակ չի դնում ազգային ու պետական անվտանգությունը, այնուամենայնիվ, հանցավորության, ինչպես նաև ԼՂՀ սոցիալ-տնտեսական ու բարոյահոգեբանական ոլորտներում տեղի ունեցող որոշակի բացասական երևույթներն ու գործընթացները լավատեսական կանխատեսման հիմք չեն տալիս: Եթե ժամանակին համապատասխան միջոցառումներ չձեռնարկվեն, ապա շատ շուտով հանցավորությունը կարող է Էական հիմնախնդիր դառնալ ԼՂՀ համար: Նման իրադրությունը պահանջում է շուտափույթ մշակել և կյանքի կոչել հանցավորության նկատմամբ վերահսկողության հնարավորինս արդյունավետ միջոցառումների համակարգ:

§2. Հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

ԼՂՀ հանցավորության զարգացման միտումների, հանցավորության պատճառական համալիրի և հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակի ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդհանուր ձևով ուրվագծելու ԼՂՀ-ում հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործմանն ուղղված միջոցառումների հետևյալ համակարգը.

1. Քանի որ հանցավորության պատճառական համալիրի մեջ վճռորոշ դեր են կատարում սոցիալ-տնտեսական երևույթները, ապա հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հնարավորինս մեղմել սոցիալ-տնտեսական ոլորտում առկա հակասությունները: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել նյութապես անապահով ընտանիքների նյութական և բարոյական աջակցության կենտրոններ՝ համապատասխան նյութական, տեխնիկական և կադրային ապահովվածությամբ: Կարևոր նշանակություն ունի գործազրկության վերացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, գյուղացուն նյութական, տեխնիկական աջակցություն ցույց տալը: Հսկայական հակահանցածին նշանակություն կարող է ունենալ սոցիալ-տնտեսական բևեռացման նվազեցումը: Այս ամենը հնարավոր է տնտեսության զարգացման պայմաններում, ինչն իր հերթին հնարավոր է մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման և տնտեսության կլանային համակարգի վերացման դեպքում⁹⁷:

2. Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր ուղղություններից մեկը բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումն է: Դրա համար անհրաժեշտ է դեռևս դպրոցից մարդկանց դաստիարակել սեփական իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, իրավունքների ու ազատությունների ապահովման ու պաշտպանության համար պայքարելու ոգով: Բացի իրավական

⁹⁷ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հետպատերազմյան ճապոնիայի տնտեսության արագ տեմպերով զարգանալու նախապայմաններից մեկն էլ «ձայբացումների»՝ կլանային տնտեսությունների վերացումն էր, տե՛ս Մարկոսյան Ա.Խ. «Պետությունը և շուկան», Երևան 2000, էջ 30-31:

գիտելիքների համապատասխան մակարդակով ապահովելուց, և համապատասխան քաղաքացիական դիրքորոշում ձևավորելուց, այս գործընթացին կարող է նպաստել նաև իրավապահ մարմինների գործունեության բարելավմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումների համակարգը: Իրավապահ մարմինների և այլ ոլորտների պաշտոնատար անձանց գործունեության մեջ երկակի չափանիշների կիրառման շրջանակների ու դեպքերի հնարավորինս սահմանափակումը, պատասխանատվության անխուսափելիության, օրենքի առաջ հավասարության սկզբունքների հնարավորինս ապահովումը կարող են էապես նպաստել իրավունքի և օրենքի արժեքավորմանը, իրավունքի և օրենքի հանդեպ ժխտողական վերաբերմունքի չեզոքացմանը:

Կարևոր նշանակություն կարող է ունենալ օրինաստեղծ աշխատանքի, հատկապես արարքների քրեականացման և ապաքրեականացման գործընթացի գիտական հիմանվորվածությունն ու սոցիալական պայմանավորվածությունը: Դրա համար անհրաժեշտ է կտրուկ բարելավել իրավագիտության դասավանդման որակը ԼՂՀ բուհերում: Արդյունավետ կարող էր լինել օրինաստեղծ աշխատանքների բարելավման նպատակով հատուկ փորձագիտական խմբի ստեղծումը ԼՂՀ Ազգային ժողովում:

3. Քրեական պատժի արդյունավետությունը բարձրացնելու համար կարելի էր օրենսդրական մակարդակով սահմանափակել ազատազրկում պատժատեսակի կիրառման ոլորտը: Մասնավորապես, այդ պատժատեսակը նախատեսել միայն բռնության հետ զուգորդված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար և շահադիտական կամ այլ դրդապատճառներով կատարվող ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների համար:

Բացի դա, անհրաժեշտ է բարելավել ազատազրկում պատժատեսակի կատարման գործընթացը, ինչը ենթադրում է ինչպես դատապարտյալների նյութական, կենցաղային պայմանների բարելավում, այնպես էլ նրանց հետ համապատասխան հոգեբանական, սոցիալական աշխատանքի իրականացում: Սա իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում ուղղիչ հիմնարկները ապահովել համապատասխան կադրային ռեսուրսներով:

Ռեցիդիվային հանցավորության կանխման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է բարելավել ոչ միայն ազատազրկում պատժատեսակի կատարման գործընթացը, այլև պատշաճ հիմքերի վրա դնել քրեաիրավական այնպիսի ինստիտուտների կիրառման գործընթացը, ինչպիսիք են պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը: Դրա համար անհրաժեշտ է վերացնել կոռուպցիան ուղղիչ ներգործության ոլորտում:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության առումով արդյունավետ կարող էր լինել «հատուցման կամ վերականգնողական» իրավունքի հետզհետե ներդրումը, քրեաիրավական քաղաքականության մեջ շեշտը ոչ թե հարկադրանքի, այլ փոխհատուցման, պատճառված վնասի հատուցման վրա դնելը:

4. Քանի որ ԼՂՀ հանցավորության զարգացման միտումներից մեկը դրա երիտասարդացումն է, ապա խիստ հրատապ է դառնում անչափահասների և երիտասարդների հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացումը, ինչը ենթադրում է հետևյալ միջոցառումների իրականացում.

ա) նյութապես անապահով ընտանիքներին նյութական օգնության տրամադրում,

բ) երիտասարդների և անչափահասների աշխատանքային զբաղվածության խնդիրների լուծում,

գ) անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի իրականացման հատուկ կարգի ու պայմանների սահմանում, անչափահասների նկատմամբ ազատազրկում պատժատեսակի կիրառման կտրուկ և էական սահմանափակում,

դ) դպրոցներում, ուսումնական հաստատություններում անչափահասների և երիտասարդների հայրենասիրական դաստիարակության հիմքերի ամրապնդում, նրանց մոտ հոգևոր, բարոյական արժեքների ձևավորում ու ամրապնդում, բռնություն, սեքս քարոզող, սպառողական հոգեբանություն ձևավորող ֆիլմերի, հաղորդումների, ցուցադրման արգելում,

ե) անչափահասների և երիտասարդների ազատ ժամանցի պայմանների բարելավում⁹⁸, ազատ ժամանցը հետաքրքիր ու բովանդակալից անցկացնելու համար համապատասխան վայրերի ու հաստատությունների ստեղծում, եղած ցանցի ընդլայնում (ինտերնետ ակումբներ, սպորտային ու խաղահրապարակներ, սպորտային ակումբներ, արվեստի տարբեր տեսակներին հաղորդակից լինելուն նպաստող խմբակներ և այլն):

5. Ոստիկանության աշխատանքի բարելավման, ոստիկանության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդման, ոստիկանության և բնակչության համագործակցության ապահովման նպատակով անհրաժեշտ է էապես բարելավել ոստիկանության աշխատակիցների նյութական ապահովվածության և մասնագիտական պատրաստվածության մակարդակը, ոստիկանությունը զինել ժամանակակից տեխնիկական միջոցներով, վերանայել ոստիկանության աշխատանքի գնահատման չափանիշները: Վերջինիս հետ կապված գրականության մեջ առաջարկվում է, օրինակ, ոստիկանության աշխատանքի գնահատման հիմքում դնել ոչ այնքան հանցագործությունների բացահայտելիության աստիճանը և հանցավորության վիճակը, որքան ոստիկանի աշխատանքի վերաբերյալ տվյալ տեղամասի բնակչության գնահատականը, բնակչության և ոստիկանության միջև համագործակցության մակարդակը, հանցագործությունների կանխման արդյունավետությունը:

Բնակչության և ոստիկանության միջև փոխհամագործակցության կարևոր պայմաններից է ոստիկանության մատչելիությունը բնակչության համար: Մատչելիությունն ապահովելու համար կարելի էր իրագործել որոշ միջոցառումներ: Մասնավորապես, ոստիկանական բաժինները տեղակայել այնպես, որ տվյալ տեղամասի ողջ բնակչության համար հնարավոր լիներ հետիոտն հասնել ոստիկանական բաժին: Ծիշտ կլիներ նախատեսել հանցագործությունների հայտնի

⁹⁸ Կրիմինալոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդու դեմ ուղղված հանցագործությունների, խուլիգանությունների և բռնի-շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների օբյեկտիվ պատճառների համակարգի մեջ նշանակալից դերակատարում ունի ազատ ժամանցի կազմակերպման ոչ պատշաճ մակարդակը: Տե՛ս Гришаев П.И. Влияние социальных явлений на преступность. М., 1984, էջ 23-43, Криминологические проблемы правосознания и общественного мнения о преступности / Под редакцией Карпеца И.И., Незкусила И. Москва-Прага, 1986, էջ 164:

դարձած դեպքերի մասին ոստիկանությանը հաղորդելու պարզ կարգ: Օրինակ, շատ երկրներում ընդունելի է անանուն հեռախոսագանգի միջոցով հանցագործության դեպքի մասին հաղորդումը: Ոստիկանությունը զանգահարողին որոշակի կողավորված անուն է տալիս և եթե հաղորդված տեղեկությունը օգտակար է լինում, ապա զանգահարողը պարգևատրվում է⁹⁹:

Բռնությամբ և շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցագործությունների կանխման առումով արդյունավետ կարող էր լինել այսպես կոչված «ոստիկանության ներկայության էֆեկտի» ապահովումը, ինչը ենթադրում է պարեկապահակային ծառայության ինտենսիվ իրականացումը այնպիսի վայրերում, որոնցում առավել հավանական են միջանձնային կոնֆլիկտները (ռեստորան, բար, զանգվածային միջոցառման վայր, այգի, պուրակ և այլն) կամ որոնք, տարբեր գործոնների պատճառով (վատ լուսավորություն, մոտակայքում բնակելի շինությունների, անցորդների բացակայություն և այլն) «գայթակղիչ են» հանցավորների համար և նպաստում են բռնի-շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործություններից վիկտիմիզացիայի:

6. Քանի որ պատերազմական իրավիճակի հետ կապված ԼՂՀ բնակչության գերակշիռ մասը զենքի և զինամթերքի բավականաչափ մեծ պաշարներ ունեն կուտակած և շատ դեպքերում դրա վրա «աչք են փակում», ինչը որոշակի առումով հասկանալի է, սակայն կարող է ապագայում բացասական ազդեցություն թողնել հանցավորության կառուցվաքծի վրա, ապա, մեր կարծիքով, ճիշտ կլիներ ուժեղացնել վերահսկողությունը զենքի շրջանառության նկատմամբ: Միգուցե ճիշտ կլիներ օրինականացնել ներկայումս անօրինական կարգով քաղաքացիների մոտ գտնվող զենքը և հաշվառման վերցնել այն: Իհարկե օրինականացման գործընթացը պետք է իրականացվի հստակ մշակված մեխանիզմի միջոցով, այն հաշվով, որ զենքը առկա լինի միայն այն մարդկանց մոտ, ովքեր իրենց առողջական վիճակով վտանգ չեն սպառնում հասարակությանը և ուն զենքը իրոք անհրաժեշտ է անձնական անվտանգության ապահովման համար:

⁹⁹ St'u Горяинов К.К., Исиченко А.П., Кондратьюк Л.В. Латентная преступность. М., 1994, էջ 107:

7. Ոստիկանության աշխատանքի բարելավման կարևոր գործոն կարող է հանդիսանալ հանցագործությունների հնարավորինս լրիվ գրանցումը, հանցավորության և դրա առանձին տեսակների վերաբերյալ օբյեկտիվ և ճշմարտացի տեղեկատվության առկայությունը: Այս նպատակով առաջարկում ենք ԼՂՀ կառավարությանն առընթեր ստեղծել հանցագործությունների և այլ իրավախախտումների գրանցման անկախ ծառայություն: Հիշյալ ծառայությունը պետք է ստեղծվի օրենքի հիման վրա, որտեղ պետք է սահմանվեն դրա գործունեության երաշխիքները, կառուցվածքը, ենթակայությունը, իրավասությունը: Այս ծառայության կազմում կարող էր ստեղծվել վերլուծական լուրջ կենտրոն, որը կիրականացներ հանցավորության և դրա առանձին տեսակների զարգացման միտումների, տարածվածության, պատճառական համալիրի խոր հետազոտություններ, կրիմինալոգիական կանխատեսումներ և առաջարկություններ կմշակեր հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործման ուղղությամբ:

8. Հանցագործությունների կանխման էական գործոն կարող է հանդիսանալ վիկտիմալոգիական կանխումը: Այդ նպատակով առաջարկում ենք ԼՂՀ իրավապահ մարմինների աշխատակիցների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ վիկտիմալոգիական գրագիտություն ձևավորելու նպատակով, ինչպես նաև վիկտիմալոգիական տեղեկատվությունը և գիտելիքները տարածել բնակչության մեջ՝ համապատասխան հրապարակումների, ՁԼՄ-ների միջոցով:

9. Հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը զգալի չափով կախված է երկրում կոռուպցիայի մակարդակից: Ուստի կոռուպցիայի դեմ պայքարը պետք է հանդիսանա հանցավորության նկատմամբ վերահսկողության առաջնային ուղղություններից մեկը: Այդ նպատակով առաջարկում ենք ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված հատուկ օրենք: Շատ կարևոր է, որ կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումները դուրս գան ավանդական մտածելակերպի և օրենսդրական կարգավորման շրջանակներից: Մասնավորապես, շատ երկրներում կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրության մեջ նահանջ է նկատվում սովորական քրեադատավարական սկզբունքներից: Օրինակ՝ շատ

երկրներում ապացուցման պարտականությունը կոռուպցիոն հանցագործությունների քննության դեպքում դրվում է ոչ թե մեղադրող այլ պաշտպանվող կողմի վրա, գործում է ոչ թե անմեղության, այլ մեղավորության կանխավարկածը: Ընդ որում, եթե պաշտոնատար անձի ապրելակերպն ու ծախսերը ակնհայտորեն չեն համապատասխանում նրա օրինական եկամուտներին, ապա հենց միայն այդ հիմքով քրեական գործ է հարուցվում: Այդ դեպքում պաշտոնատար անձը ինքը պետք է ապացուցի իր անմեղությունը:

Բացի նշվածից կոռուպցիայի նկատմամբ վերահսկողության ընդհանուր միջոցառումները կարող են հանգել հետևյալին. ա) ժողովրդավարության զարգացում, մարդու իրավունքների ու ազատությունների իրական ապահովում, քաղաքացիական ակտիվության խրախուսում, բ) պետական ծառայողների իրավունքների սահմանափակում տնտեսության, գիտության, կրթության և մյուս բնագավառների կառավարման ասպարեզում, գ) արգելող նորմերի շրջանակի սահմանափակում, քանի որ ինչքան շատ են արգելող նորմերը այնքան շատ են կաշառքի միջոցով դրանք շրջանցելու հնարավորությունները, դ) պետական ծառայողների աշխատավարձերի էական բարձրացում, ե) պաշտոնատար անձանց պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովում, զ) դատարանի անկախության և հեղինակության բարձրացում, է) պետական ծառայողների գործունեության թափանցիկության ապահովում:

10. Ճիշտ կլիներ ստեղծել հանցավորության դեմ պայքարի ընդհանուր պետական ծրագիր, որտեղ պետք է նախատեսվեին հանցավորության դեմ պայքարի մարմինները, այդ պայքարը կոորդինացնող մարմինը, նրանց լիազորությունները, նյութատեխնիկական, կադրային ապահովվածությունը, գործունեության երաշխիքները, գործունեության մարտավարական և ռազմավարական նպատակները, այդ նպատակներին հասնելու միջոցները: Այս առումով օգտակար կարող էր լինել Հայաստանի Հանրապետության և այլ երկրների փորձը, որոնք արդեն մշակել են այդպիսի ծրագրեր կամ արդեն իրագործում են դրանք կյանքում: Մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական

ծրագիրը» ընգրկում է ոչ միայն ծրագրի իրականացման նպատակները, խնդիրները, ֆինանսավորումը, տեխնիկական ու կազմակերպական հարցերը, այլև միջոցառումների լայն շրջանակ: Ընդ որում, առանձնացված են օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումները, կազմակերպչական գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառումները, որոնք իրենց հերթին բաժանված են սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառումների, հանցագործություններ ծնող պատճառների և պայմանների ազդեցության չեզոքացմանը ուղղված միջոցառումների և իրավապահ մարմինների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումների և վերջապես հասարակության իրավագիտակցության բարձրացմանը և օրինականության ամրապնդմանը ուղղված միջոցառումները:

Կարծում ենք, որ նշված ծրագիրը կարող էր հիմք հանդիսանալ ԼՂՀ-ում ևս նման ծրագրի ընդունման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԼԴՅ հանցավորության զարգացման միտումների, պատճառական համալիրի և հանցավորության նկատմամբ վերահսկողության վիճակի ուսումնասիրությունը թույլ տվեց հանգելու հետևյալ եզրակացությունների.

1. ԼԴՅ հանցավորությունը դրսևորում է շուկայական տնտեսության ուղին բռնած նոր զարգացող պետությունների գերակշիռ մասին բնորոշ օրինաչափություններ՝ բացարձակ և հարաբերական աճ, լատենտայնացում, հանցավորության կառուցվածքում շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների մասնաբաժնի ավելացում և բռնության մոտիվացիայով հանցագործությունների մասնաբաժնի նվազում:

ԼԴՅ հանցավորության զարգացման անբարենպաստ միտումներից են անչափահասների և երիտասարդության հանցավորության աճը, հանցավորության մեջ և հանցանք կատարող անձանց կոնտինգենտում ռեցիդիվի աճը, կանանց հանցավորության մեջ տեղի ունեցող բացասական գործընթացները:

Չնայած ԼԴՅ-ում, ինչպես և ՀՀ-ում, առկա են գործոններ, որոնք զսպում են հանցավորության բուռն զարգացումը և նպաստում են հանցավորության համեմատաբար ցածր մակարդակի պահպանմանը (փոքր տարածքը, որը հեշտացնում է հանցավորության նկատմամբ վերահսկողությունը, երեխաների նկատմամբ զոհողության աստիճանի հասնող սերը, այն հանգամանքը, որ ընտանիքը դեռևս մնում է որպես առաջնային արժեք, ազգային մշակույթի դեռևս պահպանվող դիրքերը, դեռևս բավականաչափ ուժեղ ֆորմալ վերահսկողությունը), այնուամենայնիվ, հանրապետությունում ընթացող երևույթները թույլ չեն տալիս լավատեսական կանխատեսումներ անել: Կարծում ենք, որ շուկայական տնտեսության հետագա զարգացումը, դրա հետ կապված գերշահույթի մոտիվացիան, գործազրկությունը, բարքերի հետագա ազատականացումը, սոցիալական բեկեռացումը, բնակչության տագնապայնության բարձր մակարդակը, զուգորդված մեր ժողովրդին հատուկ անհատապաշտության, որոշակի անհանդուրժողականության

և ռազմատենչության, համառության հետ, այն գործոններն են, որոնք կարող են նպաստել հանցավորության հետագա զարգացմանը:

2. ԼՂՀ հանցավորության պատճառական համալիրի մեջ են մտնում սոցիալական, տնտեսական, իրավական, բարոյահոգեբանական բնույթի մի շարք հակասություններ: Դրանցից առավել էականներն են՝ 1) գործազրկությունը, աղքատությունը, սոցիալ-տնտեսական բևեռացումը՝ զուգորդված փողի և նյութականի առաջնային արժեքի վերածվելու, ապրանքների ու ծառայությունների առատության, գովազդի և այլ միջոցներով սպառողական հոգեբանության ձևավորման հետ, 2) ԼՂՀ բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակը, արարքների քրեականացման ու ապաքրեականացման բնագավառում թույլ տրված սխալները, իրավապահ մարմինների նկատմամբ բնակչության անվստահությունը, 3) պաշտոնատար անձանց խոսքի և գործի միջև եղած հակասությունը, անհատապաշտության և եսասիրության գաղափարախոսության տարածումը, մարդու իրավունքների հռչակման և գործնականում դրանց ոտնահարման միջև եղած հակասությունը, բռնության և սեքսի քարոզումը, արևմտյան արժեքային համակարգի ու ապրելակերպի քարոզումն ու ներմուծումը, նախկին արժեքային համակարգի անխտիր քարկոծումը, ինչի արդյունքում արժեզրկվում են դրանում առկա այնպիսի դրական արժեքներ ինչպիսին էին կոլեկտիվիզմը, փոխօգնությունը, հայրենասիրությունը և այլն:

3. ԼՂՀ շրջանների հանցավորության տարբերությունները մեծ չափով կախված են այդ շրջաններում հանցավորության լատենտայնության մակարդակից:

ԼՂՀ շրջանների հանցավորության լատենտայնության մակարդակի տարբերությունները կախված են ինչպես իրավապահ մարմինների գործունեության առանձնահատկություններից, հանցագործությունների գրանցման լրիվության մակարդակից, այնպես էլ հանցավորության կառուցվածքից. այն շրջաններում որոնցում հանցավորության մեջ զգալի է բռնության հետ չզուգորդված շահադիտական հանցագործությունների տեսակարար կշիռը, ավելի բարձր է նաև հանցավորության լատենտայնության մակարդակը, ուստի այդ շրջանների հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները չեն

արտացոլում օբյեկտիվ իրականությունը, մինչդեռ բռնության հետ զուգորդված հանցավորության ավելի բարձր մակարդակ ունեցող շրջանների հանցավորության մակարդակը պաշտոնական վիճակագրությամբ համեմատաբար օբյեկտիվ է արտացոլվում:

ԼՂՀ այն շրջաններում, որոնցում տնտեսական կյանքն ավելի աշխույժ է, որոնցում տնտեսական զարգացման տեմպերն ավելի բարձր են համեմատաբար ավելի բարձր է նաև բռնության հետ չզուգորդված շահադիտական հանցավորության մակարդակը, ինչը պաշտոնական վիճակագրության մեջ չի արտացոլվում, ինչն իր հերթին այդ հանցագործությունների լատենտայնության ավելի բարձր մակարդակի արդյունք է: Այն շրջանները, որոնք դուրս են մնացել բարեփոխումների ոլորտից, կամ որոնցում բարեփոխումները ինտենսիվ չեն, աչքի են ընկնում բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործությունների ավելի բարձր մակարդակով:

ԼՂՀ շրջանների հանցավորության մակարդակների և կառուցվածքների տարբերությունները կախված են նաև գործազրկության, աղքատության, սոցիալական բևեռացման մակարդակներից. այնտեղ, որտեղ գործազրկության, աղքատության և սոցիալական բևեռացման մակարդակները ավելի բարձր են և բնականաբար ավելի էական է ֆրոնտալ գործոնների ազդեցությունը, այնտեղ ավելի բարձր է բռնության մոտիվացիայով հանցավորության մակարդակը:

4. ԼՂՀ-ում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստել է նրան, որ հանցանք կատարող անձանց և օրինապահ քաղաքացիների պահանջմունքներն ու արժեքային համակարգերը մերձեցել են միմյանց: Փողը, նյութական բարիքները դարձել են առաջնային արժեք: Սոցիալական վերահսկողության թուլացումը, ամենաթողությունը, սպառողական հոգեբանության ձևավորումը, սոցիալ-տնտեսական բացասական երևույթները, մասնավորապես գործազրկությունը, աղքատությունը, նվազագույն պահանջմունքների ու դրանց բավարարման օրինական միջոցների միջև եղած հակասությունը հանգեցրել են նրան, որ պահանջմունքների բավարարման ու նպատակների իրագործման հակաբարոյական, հակաիրավական, հանցավոր միջոցները դարձել են արժեք: Նման իրավիճակը խիստ վտանգավոր է և շուտափույթ արձագանքման անհրաժեշտություն է առաջացնում:

5. ԼՂՀ հանցավորության պատճառական համալիրի մեջ էական դեր են կատարում սոցիալ-տնտեսական, իրավական, բարոյահոգեբանական հակասություններն ու բացասական երևույթները:

ԼՂՀ հանցավորության սոցիալ-տնտեսական պատճառական համալիրի մեջ են մտնում շուկայական տնտեսությանը հատուկ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են գերշահույթի մոտիվացիան, գործազրկությունը, աղքատությունը, հասարակության սոցիալ-տնտեսական բևեռացումը:

Իրավական պատճառական համալիրի մեջ են մտնում բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակը, իրավունքի և օրենքի նկատմամբ ժխտողական, արհամարհական վերաբերմունքը, օրենսդրական դաշտի անկատարությունը, արարքների քրեականացման և ապաքրեականացման գործընթացում տեղ գտած բացթողումները, իրավապահ մարմինների աշխատանքում առկա բացթողումները, բնակչության անվստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ և դրա արդյունքում բնակչության ու իրավապահ մարմինների միջև համագործակցության բացակայությունը:

Հանցավորության բարոյահոգեբանական պատճառական համալիրի մեջ են մտնում բնակչության արժեքային համակարգում նյութական արժեքների գերակայությունը, հոգևոր արժեքային համակարգի փլուզումը, զանգվածային լրատվության միջոցներով բռնության և սեքսի քարոզումը:

6. Հանցավորության նկատմամբ վերահսկողությունը ԼՂՀ-ում անմխիթար վիճակում է: Հանցավորության նկատմամբ վերահսկողության գրեթե ոչ մի տարրում դրական գործընթացներ չեն նկատվում: Մասնավորապես, ոչինչ չի իրականացվում բնակչության արժեքային համակարգում, իրավագիտակցության մեջ առկա բացասական երևույթները վերացնելու համար: Գովազդի, տարբեր մարդկանց իրական վարքագծի, արվեստի միջոցով ձևավորվում է սպառողական հոգեբանություն, քարոզվում են կեղծ արժեքներ: Իրենց բարձրության վրա չեն իրավապահ մարմինները, որոնց աշխատանքին հատուկ են անտարբերությունը, երկակի չափանիշների կիրառումը, օրենքի առաջ հավասարության սկզբունքի խախտումը, կոռուպցիան: Այս ամենը հանգեցնում է իրավապահ մարմինների

նկատմամբ բնակչության անվստահությանը և նրանց համագործակցության գրեթե լրիվ բացակայությանը:

Իր գործառույթները ոչ բավարար մակարդակով է իրականացնում պատիժը, ինչի մասին է վկայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածների կողմից հանցանքի կատարման տարեցտարի աճող դեպքերի քանակը, ռեցիդիվային հանցավորության մակարդակի աճը, հանցանք կատարողների մեջ կրկնահանցագործների քանակի ավելացումը:

Բազմաթիվ թերություններ կան հանցավորության ընդհանուր սոցիալական և հատուկ կրիմինալոգիական կանխման բնագավառներում: Մասնավորապես, չի հաջողվում հաղթահարել աղքատության, գործազրկության, սոցիալ-տնտեսական բևեռացման հանցածին ազդեցությունները, էական թերություններ ունի ոստիկանության կանխարգելիչ գործունեությունը, ոչինչ չի ձեռնարկվում վիկտիմալոգիական կանխումը ներդնելու ուղղությամբ, շատ ցածր մակարդակի վրա է անհատական կանխումը, մասնավորապես, քրեաիրավական ներգործության և հետքավական (ռեցիդիվի) կանխման ոլորտներում:

Հանցավորության նկատմամբ վերահսկողության կարևոր բաղադրիչներից է պատճառված վնասի հատուցումը, որը շատ ցածր մակարդակի վրա է: Դրա հետ կապված խիստ հրատապ է դառնում այսպես կոչված «հատուցման կամ վերականգնողական իրավունքի», «վերականգնողական արդարադատության», գաղափարը: Այս հայեցակարգը բավականաչափ պրագմատիկ և օգտակար է թվում: Նախ, այն թույլ է տալիս տնտեսելու քրեաիրավական հարկադրանքը, ինչն իր հերթին թույլ է տալիս խնայելու պետության նյութական միջոցները: Բացի դա, նման մոտեցումը զերծ է պահում անձանց ավելորդ ստիգմատիզացիայից և նապաստում է ռեցիդիվի մակարդակի նվազեցմանը: Վերջապես, սա հնարավորություն է տալիս արդյունավետորեն հատուցելու հանցավորությունից կրած վնասները:

Ծիշտ կլիներ, որ ապագայում քրեաիրավական քաղաքականությունը հենց այս ուղղությամբ զարգանար:

7. Հանցավորության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել միջոցառումների հետևյալ համակարգը.

1) մեղմել սոցիալ-տնտեսական հակասությունները, զարգացնել տնտեսությունը, զարգացնել մանր և միջին ձեռնարկատիրությունը, վերացնել տնտեսության կլանային համակարգը, փոքրացնել գործազրկության, աղքատության ծավալները, հնարավորինս քչացնել սոցիալ-տնտեսական բևեռացումը.

2) հնարավորինս փոքրացնել սոցիալական անարդարության ծավալները, առողջացնել հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը, հաղթահարել սպառողական հոգեբանությունը, նպաստել հոգևոր պահանջումների ձևավորմանը.

3) իրականացնել միջոցառումներ բնակչության իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, ինչին կարող է նպաստել իրավապահ մարմինների աշխատանքում առկա թրույունների, բացասական երևույթների վերացումը.

4) բարձրացնել քրեական պատժի արդյունավետությունը, բարելավել ազատազրկում պատժատեսակի կատարման գործընթացը, ինչը ենթադրում է ինչպես դատապարտյալների նյութական, կենցաղային պայմանների բարելավում, այնպես էլ նրանց հետ համապատասխան հոգեբանական, սոցիալական աշխատանքի իրականացում:

5) ռեցիդիվային հանցավորության կանխման արդյունավետությունը բարձրացնելու համար բարելավել ոչ միայն ազատազրկում պատժատեսակի կատարման գործընթացը, այլև պատշաճ հիմքերի վրա դնել քրեաիրավական այնպիսի ինստիտուտների կիրառման գործընթացը, ինչպիսիք են պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը.

6) Կրիմինոլոգիական կանխման կարևոր ուղղություններից մեկը զենքի ապօրինի շրջանառության նկատմամբ վերահսկողության իրականացումն է: Պատերազմական իրավիճակի հետ կապված, ԼՂՀ բնակչության գերակշիռ մասը զենքի և զինամթերքի բավականաչափ մեծ պաշարներ ունի կուտակած, ինչի վրա շատ դեպքերում «աչք են փակում», ինչը որոշակի առումով հասկանալի է, սակայն

կարող է ապագայում բացասական ազդեցություն թողնել հանցավորության կառուցվածքի վրա: Վիճակը շտկելու համար ճիշտ կլիներ ուժեղացնել վերահսկողությունը զենքի շրջանառության նկատմամբ: Գիշտ կլիներ օրինականացնել ներկայումս անօրինական կարգով քաղաքացիների մոտ գտնվող զենքը և հաշվառման վերցնել այն: Օրինականացման գործընթացը պետք է իրականացվի հստակ մշակված մեխանիզմի միջոցով, այն հաշվով, որ զենքը առկա լինի միայն այն մարդկանց մոտ, ովքեր իրենց առողջական վիճակով վտանգ չեն սպառնում հասարակությանը և ուն զենքը իրոք անհրաժեշտ է անձնական անվտանգության ապահովման համար:

7) կատարելագործել ոստիկանության կողմից իրականացվող հատուկ կրիմինալոգիական կանխումը, ինչը հնարավոր է հանցավորության և դրա առանձին տեսակների զարգացման միտումների, տարածվածության, հանցագործությունների առանձին տեսակների կատարման տեղի, ժամանակի, տուժողների առանձնահատկությունների սխտեմատիկ և խոր հետազոտությունների, անհատական կանխման արդյունավետության բարձրացման, ոստիկանության տեխնիկական և կադրային զինվածության պատշաճ մակարդակի ապահովման, ոստիկանության աշխատանքի գնահատման նոր չափանիշների ներդրման հիման վրա: Ոստիկանության աշխատանքի բարելավման կարևոր գործոն կարող է հանդիսանալ հանցագործությունների հնարավորինս լրիվ գրանցումը, հանցավորության և դրա առանձին տեսակների վերաբերյալ օբյեկտիվ և ճշմարտացի տեղեկատվության առկայությունը: Այս նպատակով ճիշտ կլիներ ստեղծել հանցագործությունների և այլ իրավախախտումների գրանցման անկախ ծառայություն: Բնակչության և ոստիկանության միջև փոխհամագործակցության կարևոր պայմաններից է ոստիկանության մատչելիությունը բնակչության համար: Մատչելիությունն ապահովելու համար կարելի էր իրագործել որոշ միջոցառումներ: Մասնավորապես, ոստիկանական բաժինները տեղակայել այնպես, որ տվյալ տեղամասի ողջ բնակչության համար հնարավոր լիներ հետիոտն հասնել ոստիկանական բաժին: Գիշտ կլիներ նախատեսել հանցագործությունների հայտնի դարձած դեպքերի մասին ոստիկանությանը հաղորդելու պարզ կարգ:.

8) միջոցառումներ իրականացնել վիկտիմոլոգիական կանխման ձևավորման և գործնական կիրառման համար: Այդ նպատակով շատ կարևոր է ԼՂՀ իրավապահ մարմինների աշխատակիցների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ վիկտիմոլոգիական գրագիտություն ձևավորելու նպատակով, ինչպես նաև վիկտիմոլոգիական տեղեկատվությունը և գիտելիքները տարածել բնակչության մեջ՝ համապատասխան հրապարակումների, ՁԼՄ-ների միջոցով:

8) անզիջում պայքար մղել կոռուպցիայի դեմ, ստեղծել դրա դեմ պայքարի հատուկ օրենսդրություն, կոռուպցիայի դեմ պայքարում դուրս գալ ավանդական մտածելակերպի և օրենսդրական կարգավորման շրջանակներից:

9) ստեղծել հանցավորության դեմ պայքարի ընդհանուր պետական ծրագիր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերեն լեզվով գրականություն

1. Մարկոսյան Ա.Խ. Պետությունը և շուկան, Երևան 2000, 560 էջ
2. Մելքունյան Ս. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան 2005, 448 էջ
3. Նալչաջյան Կ. Էթնիկական ինքնագիտակցություն, Երևան 2003, 216 էջ
4. Սիմոնյան Տ. Երիտասարդների հանցավորության կանխումը ՀՀ-ում, Երևան, 2004, իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման համար ատենախոսություն, 194 էջ

Ռուսերեն լեզվով գրականություն

5. Аванесов Г.А. Криминология и социальная профилактика. М., 1980, էջ
6. Агамов Г. Правовые и социальные проблемы предупреждения рецидивной преступности. //Уголовное право, 2001, N 3
7. Акутаев Р.М. Некоторые аспекты борьбы с искусственно-латентной преступностью // Гос-во и право, 1999, N3
8. Алексеев А.И. Индивидуальная профилактика рецидива преступлений. М., 1975, 113 էջ
9. Алексеев А.И. Как защитить себя от преступника? М., 1990,
10. Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я. Криминологическая профилактика: теория, опыт, проблемы. М., 2001, 496 էջ
11. Антонян Ю.М., Гульдан В.В. Криминальная патопсихология. М., 1991, 248 էջ

12. Антонян Ю.М. Актуальные проблемы насилия в российском обществе. // Уголовное право. М., 2000, N 3
13. Антонян Ю.М. Почему люди совершают преступления. М., 2005, 304 тг
14. Аствацатуров С. Безработные: проблемы и решения./Меняющееся общество., Ереван, 2001, N1-2
15. Бахин В.П., Карпов Н.С., Цымбал П.В. Преступная деятельность: понятие, характеристика, принципы, изучение. Киев, 2001, 275 тг
16. Блувштейн Ю.Д. О содержании понятия "Личность преступника" //Теоретические проблемы учения о личности преступника / Под ред. В.К. Звирбуля, А.Б. Сахарова и др. М., 1979
17. Бурлаков В.Н., Орехов В.В. Индивидуальное предупреждение преступлений. Вопросы теории и практики. Изд-во ЛГУ, Л., 1988, 126 тг
18. Габузян А.А. Тенденции преступности в РА в переходный период. /Вопросы правоведения. Ереван, 2002 N4
19. Габузян А.А. Коррупционная преступность в Армении. //Вопросы правоведения. Ереван, 2005..N1
20. Габузян А.А. Тенденции корыстной преступности в Армении, //Вопросы правоведения. Ереван, 2005, N3
21. Габузян А. Лица совершающие преступления., Вопросы правоведения., Ереван, 2005, N4
22. Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, 256 тг
23. Габузян А.А. Должностные преступления: криминологический и уголовно-правовой аспекты субъективной стороны. Ереван, 2000г.,107 тг
24. Габузян А.А. Уголовное наказание и контроль над преступностью. // Вопросы правоведения. Ереван, 2006, N 4
25. Габузян А.А. Криминологическая характеристика региональной преступности в Республике Армения. // Финансы, экономика, безопасность. М., 2007 N 2 (31)

26. Гаврилов Б.Я. Способна ли Российская статистика о преступности стать реальной / Государство и право. 2001, N1
27. Гидденс Э. Социология. М., 1999, 704 тг
28. Гишинский Я. Девиантология. М., 2004, 520 тг
29. Гишинский Я.И. Понятие преступности в современной криминологии. //Труды Санкт-Петербургского юридического института Генеральной прокуратуры РФ. СПб., 2001, N3.
30. Горяинов К.К., Исиченко А.П., Кондратьев Л.В. Латентная преступность. М., 1994, 148 тг
31. Гришаев П.И. Влияние социальных явлений на преступность. М., 1984, 239 тг
32. Гыске А.В. Современная Российская преступность и проблемы безопасности общества: политический анализ. М., 2000, 320 тг
33. Долгова А.И. Преступность и общество. М., 1992,
34. Долгова А.И. Преступность // Преступность и реформы в России, М., 1998.
35. Елисеев С.А. Вопросы теории и практики предупреждения корыстных преступлений. Томск, 1989, 208 тг
36. Ениклопов С.М. Некоторые результаты исследования агрессии. – В сб.: Личность преступника как объект психологического исследования. М., 1986.
37. Еркенов С.Е. Взаимодействие правоохранительных органов СНГ при раскрытии и расследовании транснациональных преступлений. Автореф. дис. докт. наук., М., 2000, 48 тг
38. Жалинский А.Э. Социально-правовое мышление: проблемы борьбы с преступностью., М., 1989.
39. Забрянский Г.И. Криминологические проблемы села. Ростов-На Дону, Изд. Ростовского университета, 1990, 101 тг
40. Зелинский А.М. Криминальная психология. Киев, 1999, 240 тг

41. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб.: "Питер", 2000, 512 тг
42. Карпец И.И., Ратинов А.Р. Правосознание как элемент правовой культуры. //В кн.: Правовая культура и вопросы правового воспитания. М., 1974
43. Криминология /Под ред. А.И. Долговой. М., 1997
44. Криминология. СПб, 2002, 432 тг
45. Криминология / Под ред. Н.Ф. Кузнецовой, Г.М. Миньковского, М., 1994
46. Криминология / Под ред. В.Н. Бурлакова, Н.М. Корпачева, СПб., 2002, 432 тг
47. Криминология. М., 1988,
48. Криминологические проблемы правосознания и общественного мнения о преступности / Под редакцией Карпеца И.И., Незкусила И. Москва-Прага, 1986, 317 тг
49. Кондратюк Л.В. Антропология преступления. М., 2001, 344 тг
50. Контроль над преступностью в демократическом обществе. "Круглый стол" // Государство и право. 1993, N 10
51. Кудрявцев В.Н. Причины правонарушений. М., 1976, 176 тг
52. Кудрявцев В.Н., Эминов В.Е. Причины преступности в России. М., 2006, 112 тг
53. Кузнецова Н.Ф., Остроумов С.С. Методологические проблемы криминологии //Правоведение. 1971, N3
54. Кузнецова Н.Ф. Социально-экономические условия преступности //Методология и методика прикладных криминологических исследований. Иркутск, 1982
55. Курс советской криминологии. М., 1985, 416 Кудрявцев В.Н., Эминов В.Е. Причины преступности в России. М., 2006, 112 тг
56. Ли Д.А. Уголовно-статистический учет. Структурно-функциональные закономерности. М., 1998,

57. Литвинов А.Н. Предупреждение преступлений и правонарушений. М., 2004, 159 тг
58. Лунеев В.В. Преступная мифология. Что скрывалось под покровом секретности // Известия, 1991, 15 апр.
59. Лунеев В.В. Мотивация преступного поведения. М., 1993, 383 тг
60. Лунеев В.В. Преступность XX века. М., 1999, 516 тг
61. Лунеев В.В. География организованной преступности и коррупции в России (1997-1999) // Государство и право, 2000, N 11
62. Лунеев В.В. Преступность XX века: мировые, региональные и российские тенденции. М., 2005, Изд. 2-е, переработанное и дополненное., 912 тг
63. Маргарян А.Р. Криминологическая характеристика корыстно-насильственных преступности. дисс. на соиск. учен. степени кандидата юридических наук. Ереван, 2003, 120 тг
64. Механизм преступного поведения. М., 1986
65. Миненок М.Г., Миненок Д.М. Корысть. криминологические и уголовно-правовые проблемы. М., 2001, 366 тг
66. Минин Б.А. Возвратное право. М., 2007, 472 тг
67. Михайленко П.П., Гельфанд И.А. Предупреждение преступлений – основа борьбы за искоренение преступности. М., 1964
68. Минская В.С. Уголовно-правовой и нравственно-психологический аспект виктимологии // Сов. гос. и право, 1985, N7,
69. Миньковский Г.М., Побегайло Э.Ф., Ревин В.П. Уголовно-правовые средства борьбы с наркотизмом в России. М., 1994
70. Номоконов В.А. Преступное поведение: детерминизм и ответственность. Владивосток, 1989, 172 тг
71. Преступность и реформы в России / Под ред. А.И. Долговой. М., 1998

72. Палубинская С.В. Общее предупреждение: эмпирические исследования. / Криминология, уголовное право и прокурорский надзор // сборник научных трудов молодых ученых. М., 1990, 168 т₂
73. Рыбальская В.Я. Виктимологические исследования в системе криминалистической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. Вып. 33, М., 1980
74. Ривман Д.В. Устинов В.С. Виктимология. Нижний Новгород, 1998, 336 т₂
75. Саркисов Г.С. Индивидуальная профилактика преступлений. Ереван, 1986, 169 т₂
76. Социология для юристов. М., 1999,
77. Социальные отклонения. М., 1989
78. Степашин С.В. Современная Россия и сотрудничество в борьбе с международной преступностью // Вестник Санкт-Петербургского университета МВД России, 1999, N1
79. Уголовное право и преступность: развитие в Средней и Восточной Европе. Бохум, 2004, 358 т₂
80. Филимонов О.В. Индивидуальная профилактика (правовые проблемы). Томск, 1985
81. Шестаков Д.А. Криминология. СПб., 2006, 561 т₂
82. Шнайдер Г. Преступность и средства массовой информации // Советское государство и право. 1990, N 7
83. Шнайдер Г.И. Криминология. М., 1994, 504 т₂
84. Шестаков Д.А. Введение // Криминология – XX век. СПб., 2000, 148 т₂
85. Юридическая социология. М., 2000, 368 т₂
86. Яковлев А.М. Индивидуальная профилактика преступного поведения. Горький, 1977
87. Яковлев А.М. Теория криминологии и социальная практика. М., 1985

Անգլերեն լեզվով գրականություն

88. Anna Werges, Crime victims in the European Union. Sweden, 1999,

89. Kauko Aromaa, Markku Heiskanen, Crime risks in Finland. Helsinki, 2000, 39 էջ